

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Կատինյան Անի Ռոմիկի

Ինովացիոն գործընթացների ձևավորման և կառավարման
հիմնախնդիրները ՀՀ սոցիալական ոլորտում

Ատենախոսություն

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ
Ծովինար Զիվանի Կարապետյան

ԵՐԵՎԱՆ 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	9
1.1 Սոցիալական ինովացիոն գործընթացների տեսամեթոդական հիմքերը.....	9
1.2 Ինովացիոն գործընթացների առանձնահատկությունները ՀՀ սոցիալական ոլորտում.....	19
1.3 Սոցիալական ինովացիաների ձևավորման և զարգացման ուղղությունները ՀՀ-ում	30
ԳԼՈՒԽ 2. ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	37
2.1. Ինովացիոն գործընթացների կառավարման ուղղությունները ՀՀ սոցիալական ոլորտում.....	37
2.2 ՀՀ սոցիալական ոլորտի ներուժի կառավարումը, որպես ինովացիաների ներդրման աղբյուր	44
2.3 ՀՀ սոցիալական ոլորտի ինովացիոն կառավարման և զարգացման ուղղությունները	52
ԳԼՈՒԽ 3. ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	68
3.1 ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի կառավարման հեռանկարները և միջազգային փորձի կիրառման հնարավորությունները	68
3.2 Սոցիալական գործընկերության խթանման ուղղությունները և կառավարման մեխանիզմները	79
3.3 Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը, որպես սոցիալական ինովացիայի ներդրման մոդել.....	91
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	107
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	112
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	125

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արեւնախոսության թեմայի արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում սոցիալական կայունությանն ուղղված տնտեսական քաղաքականությունն առավել բարդ հիմնախնդիրների հետ է առնչվում, հատկապես սոցիալական ոլորտի հետ կապված: Սոցիալական ոլորտում ծրագրերը կարող են առնչվել առողջապահությանը, գիտությանը, կրթությանը, զբաղվածությանը, բնապահպանությանը և այլ ճյուղերի ու ոլորտների: Հասարակության առջև անընդհատ ծանրանում են սոցիալական նորանոր խնդիրներ՝ բնակչության արագ ծերացում, գործազրկություն, աղքատություն և այլն:

Ավանդական լուծումներն ու կարգավորումներն արդիական համարել դժվար է, քանի որ սոցիալական ոլորտի մարտահրավերներն ավելի արագ տեմպերով են զարգանում, իսկ եկամուտների աճն ավելի դանդաղ ընթացք ունի, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում փնտրել սոցիալական հիմնախնդիրների բացահայտման և կարգավորման նոր ճանապարհներ և ուղղություններ, որոնք միաժամանակ կապված չեն լինի զգալի պետական ծախսումների հետ: Մասնավորապես, նպատակահարմար է ուսումնասիրել ինովացիաների դերը սոցիալական ոլորտում, քանի որ ինովացիաների միջոցով հնարավոր կլինի լուծել սոցիալական ոլորտի կարևոր հիմնահարցեր՝ թեթևացնելով պետական ծախսերի բեռն այդ ոլորտում:

Ինովացիոն գործունեության ուսումնասիրության նպատակն է նոր մեթոդներով և մեխանիզմներով իրականացնել տվյալ ոլորտում որոշակի գործունեություն, որը կապահովի ցանկալի սոցիալական ազդեցություն կամ արդյունք՝ ինովացիայի տեսքով: Յուրաքանչյուր կազմակերպություն ելնելով իր գործունեության տեսակից մշակում ու իրականացնում է այնպիսի ռազմավարություն, որը կայուն եկամուտ հետապնդելու հնարավորություն է ընձեռում: Բացի այդ կարևոր դեր ունեն նաև սոցիալական կորպորատիվ ծրագրերը, որոնք միտված են առավելապես բարի համբավի ստեղծմանը: Սակայն հարկ է նշել, որ արդի ռազմավարություններում սոցիալական ծրագրերի ներառումը կազմակերպությունների կողմից դարձել է կորպորատիվ մշակույթ:

Այսպիսով, եթե տնտեսության զարգացման տեսանկյունից կարևորվում է սոցիալ-տնտեսական կայունության դերը, ապա պետք է ընդունել նաև այն իրողությունը, որ միաժամանակ մեծանում է սոցիալական ոլորտում ինովացիաների դերը: Ներկայումս սոցիալական ինովացիաների վերաբերյալ բազմաթիվ հարցեր ուսումնասիրվել ու հետազոտվել են պետական, միջազգային, հասարակական տարբեր կազմակերպությունների կողմից, սակայն դրանք դեռևս լուրջ բարեփոխումներ իրականացնելու բավարար հիմքեր չեն ապահովում: Անկախ այս հանգամանքից, անցումային տնտեսությունում գործող սոցիալական քաղաքականության մշակման ու կիրառման ուղիները խոր ուսումնասիրություն և այլընտրանքային մոտեցում են պահանջում:

Սոցիալական ինովացիոն գործունեությունն ամբողջական չի լինի, եթե բացակայում է այդ գործընթացի պետական միջամտությունը, և ինովացիաների ուղղությամբ գործող համապատասխան պետական քաղաքականությունը: ՀՀ տնտեսության, սոցիալական ոլորտում պետական միջոցառումների իրականացման ուղղությամբ նպատակահարմար է հստակեցնել ՀՀ սոցիալական ոլորտի շրջանակները և պետության միջամտության սահմանները: Պետության գլխավոր խնդիրն այս ոլորտի բարեփոխումների շրջանակներում կդառնա երկարատև սոցիալական ինովացիոն ծրագրերի ներդրման և կազմակերպման համար բարենպաստ միջավայրի ստեղծումը և դրա կարգավորումը, ինչպես նաև վերջիններիս հետագա ինքնազարգացման համար անհրաժեշտ կլինի ձևավորել բարենպաստ միջավայր և արտոնյալ իրավական դաշտ: Ինովացիաների ներդրումն առավել արդյունավետ կդարձնի սոցիալական ոլորտի քաղաքականությունը, ինչն էլ ելման հիմք է դարձել՝ ուսումնասիրություններն իրականացնելիս:

Սոցիալական խնդիրները լուծվում են պետության ակտիվ մասնակցությամբ: Դա շուկայական համակարգում պայմանավորված է մարդկանց, խոցելի խմբերի աշխատանքի, կրթության, սոցիալական պաշտպանվածության երաշխիքների բացակայությամբ: Տնտեսության պետական հատվածի չափերով պայմանավորված, այս կամ այն երկրում, սոցիալական քաղաքականությունն ունի իր յուրահատուկ մասշտաբները և ուղղությունները՝ կախված ֆինանսական միջոցների ծավալից, ազգային առանձնահատկություններից, զարգացման ներկա մակարդակից:

Սոցիալական քաղաքականության հիմնական խնդիրներից կարելի է համարել եկամուտների անհավասարաչափ բաշխվածության զսպումը մի շարք գործիքների ու միջոցառումների միջոցով: Հատկապես, առավել խոցելի խմբերի՝ նվազագույն եկամուտներ ունեցող բնակչությանն ապահովելու սոցիալական տարբեր փաթեթներով, մասնավորապես՝ հիվանդությունների, հաշմանդամության, գործազրկության, ծերության և այլ հիմնախնդիրներին տալու մասնակի կամ ամբողջական լուծումներ: Այլ խոսքերով՝ անհրաժեշտ է ստեղծել սոցիալապես կայուն իրավիճակ հասարակության բոլոր խավերի համար:

Զարգացած երկրներում սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի կիրառումը հասնում է շոշափելի չափերի: Նշենք նաև, որ զարգացած երկրներում ինովացիաների կիրառումը սոցիալական ոլորտում կրել է ինքնաբուխ բնույթ, և արձանագրվել է որպես զարգացման հետևանք: Ինովացիոն գործունեությունը հասարակության զարգացման յուրաքանչյուր փուլում պահանջում է նորանոր մոտեցումներ ու ուղղություններ, ուստի ուսումնասիրությունների արդյունքում դիտարկվել է ինովացիաների պետական կարգավորման ընթացքում արդեն իսկ կիրառված մի շարք մեխանիզմները, կոնկրետ ուղղություններ և դրանց դրսևորումները Հայաստանում, ինչպես նաև առաջ են քաշվել առավել խորքային լուծումների ապահովման ուղիները: Ինովացիոն գործընթացները ՀՀ սոցիալական ոլորտում գտնվում են սաղմնային փուլում, որոնք կարող են այդպես էլ անիրագործելի մնալ: Գոյություն ունեցող ինովացիոն ներուժը և երկարատև սոցիալական ինովացիոն ծրագրերի ներդրման ցածր մակարդակն ակնհայտ է: Աշխատանքում ներկայացված են այն միջոցառումները, որոնք պարտադիր են այս խնդիրները հաղթահարելու համար և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ ժամանակահատվածում: ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիաների կիրառումը կարող է դառնալ իրական, դրա հիմքերի գիտական ուսումնասիրության և գնահատման արդյունքում: Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է սոցիալական ինովացիոն գործունեության կառավարման հիմնախնդիրների հետազոտության անհրաժեշտությամբ, ինչպես նաև վերոնշյալ առկա և բազում այլ հիմնախնդիրների լուծման կարևորությամբ ու հրատապությամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն ինովացիոն գործընթացների ձևավորման և կառավարման առկա հիմնախնդիրների բացահայտումն է, սոցիալական ինովացիաների արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունների ու մեխանիզմների մշակումը և դրանց ներդրման ուղիների բացահայտումը: Ուսումնասիրության շրջանակներում տարանջատվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել ինովացիաների և ինովացիոն գործընթացների էությունը, տեսամեթոդական հիմքերը:
- Հետազոտել ՀՀ սոցիալական համակարգի առանձնահատկությունները, ինչպես նաև ինովացիոն գործընթացների հետ փոխկապվածությունը:
- Ուսումնասիրել ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի կառավարման միջազգային փորձը:
- Ներկայացնել ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիաների ներդրման ուղղությամբ միջազգային փորձի կիրառման հնարավորություններն ու հեռանկարները:
- Հետազոտել սոցիալական գործընկերությունը և կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը՝ որպես սոցիալական ինովացիայի ներդրման մոդել:
- Բնութագրել և ներկայացնել ՀՀ սոցիալական համակարգի զարգացման մեխանիզմներն ու միջավայրը, որպես ինովացիոն գործունեության արդյունք:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացներն են: Հետազոտության առարկան ՀՀ սոցիալական ոլորտի ինովացիոն գործընթացների կառավարումն է՝ որպես սոցիալական ինովացիաների խթանման և իրականացման միջոց:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել ժամանակակից և դասական տնտեսագիտության հիմնարար դրույթները, ինովացիոն գործընթացների տեսական և գործնական խնդիրների, սոցիալական ակտիվ միջավայրի ձևավորման, երկրի մրցակցային առավելությունների վերաբերյալ տարբեր հեղինակների, տնտեսագետների, գիտնականների ուսումնասիրություններ: Հետազոտության շրջանակներում տեղեկատվական սկզբնաղբյուր են ծառայել հայրենական և

արտասահմանյան մասնագիտական գրականության աղբյուրները, միջազգային վիճակագրական տվյալները, պարբերական գիտական հրատարակությունների, գիտական կոնֆերանսների նյութերը, ՀՀ ԱՎԾ պաշտոնական տեղեկագրքերը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ ֆինանսների, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից հրատարակված մի շարք վիճակագրական տվյալներն ու վերլուծական նյութերը, կառավարության որոշումները, ՀՀ օրենքները, Համաշխարհային Բանկի, ֆորումների և այլ միջազգային, հասարակական տարբեր կազմակերպությունների կողմից հրատարակված պաշտոնական նյութերը:

Ատենախոսության արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական նորույթը ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացների ներդրման և զարգացման հիմնախնդիրների բացահայտումն է և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի միջոցով այդ հիմնախնդիրների լուծման ուղիների ներկայացումը: Ատենախոսության գիտական նորույթն ամփոփված է հետևյալ գիտական արդյունքներում.

- Մշակվել և ներկայացվել են ՀՀ սոցիալական ոլորտի ինովացիոն գործընթացների զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությունները:
- Սոցիալական ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման համար մշակվել է նոր մոդել, որի հիման վրա գնահատվել է սոցիալական ոլորտում բարենպաստ պայմանների, սոցիալական էֆեկտի և ինովացիոն ծրագրերի փոխկապվածությունը:
- Մշակվել է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կիրառման նոր մոդել, որն ուղղված է կազմակերպության կայունությանը, մրցունակության բարձրացմանը և սոցիալական որոշ խնդիրների լուծմանը:

Հեղազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ուսումնասիրության տեսական նշանակությունն այն է, որ հետազոտությունում ներկայացված են սոցիալական համակարգի ինովացիոն գործընթացների կարգավորման և կառավարման մեթոդական մոտեցումները, որոնք թույլ են տալիս այդ գործընթացը համակարգել և դարձնել գործնական կիրառման համար տեսական ուղեցույց: Աշխատանքում կա-

տարված վերլուծությունների և տեսական ընդհանրացումների արդյունքում կարևորվում են ինովացիոն գործընթացների դերը, էությունը, առանձնահատկությունները, ուղղությունները, որոնք կարող են ունենալ տեսական ու գործնական կիրառություն ՀՀ սոցիալական համակարգում: Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ կատարված վերլուծությունները, եզրակացությունները և առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ սոցիալական համակարգում ինչպես ազգային ինովացիոն տնտեսության ձևավորման, այնպես էլ ինովացիոն ծրագրերի ներդրման, կարգավորման և իրականացման գործընթացում: Սոցիալական ինովացիաների, հատկապես, կորպորատիվ սոցիալական ծրագրերի միջոցով նվազում են պետական ծախսային բեռն ու պարտավորությունը՝ միաժամանակ մեծացնելով կորպորատիվ հատվածի մրցակցային առավելությունները, ինչը տնտեսության զարգացման գործընթացում ևս մեկ հնարավորություն է ընձեռում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության մեջ ստացված հիմնական արդյունքները քննարկվել ու հավանության են արժանացել ԵԿՏԱ-ի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի նիստերում, ԵԿՏԱ-ի 2013թ. երիտասարդ գիտնականների գիտաժողովում, 2013թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում: Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի ինը գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքի կառուցվածքը բխում է հետազոտության նպատակից և խնդիրներից: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը, 3 աղյուսակները և 21 գծապատկերները, կազմում է 124 համակարգչային էջ (հավելվածներով՝ 134 էջ):

ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ- ՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Սոցիալական ինովացիոն գործընթացների տեսամեթոդական հիմքերը

Արդի ժամանակաշրջանում հասարակությունն ապրում է զարգացման և արագ փոփոխությունների պայմաններում: Բազմաթիվ հասարակական գործընթացներ խթան են հանդիսացել հասարակական շարժընթացի արագացմանը: Սոցիալական ոլորտն ավելի դանդաղ է արձագանքում տնտեսական փոփոխություններին: ՀՀ սոցիալական շարժընթացի տեմպերը դանդաղ են, և որպես կանոն, անկանխատեսելի ու չսպասված փոփոխություններով: Քաղաքական և հասարակական համակարգերի աննախադեպ արագ զարգացումը, հասարակության ոչ համարժեք կողմնորոշվելը և անակնկալի ի հայտ գալը սովորական իրավիճակներ են:

Սոցիալական ոլորտում ինովացիոն համակարգում գործող մեթոդաբանական մոտեցումն արտացոլում է ոլորտի նոր պատկերը և զարգացման գործընթացների նոր գիտակցումը: Ինովացիաների արդյունավետությունն արտահայտում են գործընթացների այնպիսի համապատասխանությունը, որի արդյունքում բավարարվում են շահառուների պահանջմունքները, այսինքն՝ այդ գործունեության մասնակիցների շահերը միմյանց համապատասխանում են, ինչի հետևանքով լուծվում են բազմաթիվ սոցիալական խնդիրներ: Բնակչության սոցիալական կայունացումն ու զարգացումն ընթանում են նորացման ճանապարհներով՝ կապված սոցիալական ոլորտի ոչ ավանդական զարգացման ընթացքի ձևավորմամբ, իսկ սոցիալական ինովացիաները կարող են դիտարկվել նոր միջոց՝ սոցիալական հիմնախնդիրների կարգավորման համար:

Սոցիալական ոլորտում ինովացիաների ձևավորման և գործնական կիրառման միջև ընկած ժամանակահատվածն ինովացիոն պարբերաշրջանն է, որի տևողությունը կարող է տատանվել՝ կախված մի շարք գործոններից: Ինովացիոն արգելակման գործոններից առանձնացնենք սոցիալականը, տնտեսականն ու հոգեբանականը:

Առաջին խմբի գործոններ են՝ ինովացիաների ֆինանսավորման պակասությունը, կորցնելու վախը, մենաշնորհային դիրքը, ինովացիաների հետևանքով առաջացած գործազրկությունը, աշխատուժի հոգեբանական և մշակութային ցածր մակարդակի առկայությունը, մշտական կենսաձևը փոփոխել չցանկանալը և այլն¹: Ըստ Պ.Կոզլովսկու, տնտեսությունում կարևոր է հոգևոր սկզբի վերականգնման գաղափարը, այսինքն՝ շուկայի անկատարությունը շտկվում է էթիկայի միջոցով, իսկ էթիկայի անկատարությունը՝ կրոնի²: Այսինքն՝ հոգեբանականից կարելի է տարանջատել երկյուղը, անտարբերությունը, վախը, մտածողության և կենսակերպի պահպանողականությունը, ռիսկի չդիմելը, սոցիալական ոլորտի հիմնախնդիրների լուծման նախաձեռնողական և ստեղծագործական մոտեցումների բացակայությունը և այլն: Այս պատճառով փորձառու գործատուները, կառավարիչները զգալի ուշադրություն են դարձնում կոլեկտիվին՝ առաջիկա ինովացիաներին նախապատրաստելու գործընթացին:

Վերոնշյալ մոտեցումները կարելի է բնութագրել որպես սոցիալական ինովացիոն գործունեության կարգավորման մեթոդաբանական հիմք: Այսպես, սոցիալական ինովացիաների ներդրման հիմնական ռեսուրսներից է համարվում սոցիալական արդարության սկզբունքը, որի կիրառումը կոդիտարկվի որպես տնտեսական ռեսուրս՝ ելնելով այն հանգամանքից, որ ինովացիաների շնորհիվ են արտադրվում նոր բարիքներ: Ինովացիոն գործընթացների կարգավորման նպատակով, ուշադրությունը պետք է սևեռել արդարության սկզբունքին՝ հասարակության համար օգուտներ ստանալուն: Այս ուղղությամբ իրականացված հետազոտությունները սահմանափակվում են պայմանական մոտեցումների մշակմամբ, որովհետև նման հիմնախնդիրների լուծման դժվարությունները պայմանավորված են շուկայական հարաբերություններում գործող համակարգի մեթոդաբանության անկատարությամբ: Այսինքն՝ ինովացիոն գործունեության զարգացման հիմքը դիտարկվելու է համապատասխան ոլորտներում կատարվող ինչպես արտասահմանյան, այնպես էլ տեղական ներդրումների և հասարակության սոցիալ-տնտեսական ներուժի հզորացումը: Որպեսզի արտա-

¹ Попова В.Л., Управление инновационными проектами, Учеб. Пособие, Москва, ИНФРА-М, 2007, с. 25.

² Козловский Ф.И., Современные естественные и антропогенные процессы эволюции почв, АН СССР, Ин-т географии. Москва, Наука, 1991, с. 10.

սահմանյան ներդնողը հետաքրքրվի տվյալ ոլորտով կամ կազմակերպությամբ, այն պետք է ունենա ինովացիոն գրավչություն: Ինովացիոն գրավչության էության ուսումնասիրման մեթոդաբանության մեջ, կիրառվում է տնտեսագիտա-հոգեբանական մոտեցումը: Իսկ ինչ վերաբերում է տնտեսագիտա-հոգեբանական մեթոդի էությանը, ապա այստեղ շրջադարձ է կատարվում դեպի տնտեսավարող սուբյեկտը և նրա վարքագծի հոգեբանության ուսումնասիրությանը, որպես տնտեսության վրա ազդող գործոն³: Սոցիալ-տնտեսական գործընթացները «անտեսանելի» են, և իրականացվում են ժամանակին զուգահեռ ու տարածություն մեջ: Նրանք համատեղում են բազմաթիվ օբյեկտներ, սուբյեկտներ, գիտակցության կրողներ, կապեր ու հարաբերություններ, կախված են բնության տարբեր բաղադրիչներից և բնութագրվում են միջակայքայի, բազմագործոնության, բազմաձայրահեղության նշանակության գործառույթներով⁴:

Ինովացիոն գործունեության առկա սահմանումներից մեր կողմից առավել նախընտրելի է հետևյալ մեկնաբանումը: Այսպես, ինովացիոն գործունեությունը տնտեսական ակտիվության որոշակի ձև է, որը մաս է կազմում և հիմնված է սեփական նախաձեռնության, պատասխանատվության և ինովացիոն ծրագրերի ու գաղափարների վրա:

Սոցիալական ներուժը և մարդկային գործոնը տնտեսական հասկացությունների հետ մշտապես փոխազդեցության մեջ են գտնվում: Նմանատիպ փոխկապվածությունը համապատասխան վերլուծություն է ենթադրում: Քանի որ ինովացիոն տնտեսությունն ակնկալում է ոչ միայն առկա պաշարների կենտրոնացումը, մասնավորապես՝ բնական, աշխատանքային և ներդրումային ռեսուրսների օգտագործումը, այլ նաև կիրառման ընթացքում արդյունավետ համակցությունը⁵:

Այսպես, սոցիալական ինովացիաների կիրառման և սոցիալական ոլորտի ներուժի բարձրացման համար առաջնային է դառնում ինովացիոն գործունեությունը, քանի որ այս կապը տնտեսական հասկացությունների հետ ճշգրիտ մոտեցում է պահանջում: Այսինքն՝ այս գործընթացում անհրաժեշտ է իրականացնել գործընթացների արդյու-

³ Մելքումյան Մ.Ս., Բիզնեսի էկոնոմիկա, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Զանգակ-97, 2002թ., էջեր 50-52:

⁴ Ваганян Г.А., Ваганян О.Г., Виртуальные технологии менеджмента (системотехника электронного управления) - Ер., Нжар, 2005, с. 8.

⁵ ՀՀ հանրային խորհրդի 2010թ. մայիսի 20-ի աշխատանքային խմբի փորձագիտական վերլուծություն և առաջարկություններ, 20.05.2010թ., էջ 1:

նավետ համակցություն: Նմանատիպ մոտեցումը հնարավորություն է ընձեռնում, կանխել կամ առավելագույնս նվազեցնել արտաքին արդյունքներից ստացվող բացասական կամ ոչ նպաստող գործոնների ազդեցությունը: Ինովացիոն գործունեությունը բնույթով բարդ և մտավոր աշխատանքի ներդրման ոլորտ է: Այսպիսով՝ տնտեսական ու սոցիալական ներուժը միաժամանակ դիտվում են երկու տեսանկյունից՝ առկա ներուժը՝ պաշարների, ծրագրերի և աշխատանքների տեսքով, և առկա ռեսուրսներով իրականացնելու կարողության տեսանկյունից: Արդի սոցիալական քաղաքականության կարգավորումը հաճախ կրում է ժամանակավոր բնույթ, որովհետև հասարակական զարգացմանը զուգահեռ մարդու կողմից բացահայտվող նոր սոցիալական խնդիրները, ամրագրվող վարքագծի համընդհանուր կանոնները ժամանակի ընթացքում չեն կարգավորվում՝ այդ նույն մարդկանց և հասարակության համար: Պատճառն այն է, որ դրանք զարգանում են թռիչքային և պարբերական արագացումներով: Այս պայմաններում պետական նախաձեռնությունները, ինովացիոն ծրագրերի ներդրումը, որպես պետական գերակա միջոցառումներ, օրենսդրությունը՝ որպես կարգավորիչ միջոց է դառնում: Սոցիալական համակարգի հիմնական շահառուներն անապահով և խոցելի խմբին պատկանող անձիք են, որոնց սոցիալական կայունացման համար պահանջվում են ավելի ճկուն և նուրբ մոտեցումներ: Զուտ պրակտիկայի վերլուծությունը կամ համակարգի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունը բավարար չէ, որովհետև առկա մեթոդները և մոտեցումները, որպես գիտական ուսումնասիրության առարկա գտնվում են սկզբնական զարգացման փուլում: Սոցիալական համակարգի տեսական վերլուծության անհրաժեշտություն է առաջանում, որը հիմնված կլինի միջազգային փորձի և պրակտիկայի ուսումնասիրության վրա, և այն հնարավորություն կտա ամբողջացնել գիտական ուսումնասիրությունն ու գործնական փորձը, ստեղծված արդյունքները կիրառել դասական մեթոդներով՝ հասարակության և սոցիալական միջավայրում տեղի ունեցող երևույթների հետազոտման ընթացքում:

Միասին աշխատելով մարդիկ ստեղծում են ավելին, քան նրանց անհատական ջանքերի արդյունքում ձևավորված հնարավորություններն ու միջոցներն են: Ինովացիոն ձեռնարկությունները կենտրոնացնում ու վերամշակում են գիտելիքները:

Սոցիալական ոլորտում առկա են բազմաթիվ գործոններ, որոնք կապված են ինովացիոն գործունեության հետ:

2014թ. հրապարակված տվյալների համաձայն՝ ՀՀ տարածքում գործում են 66 կազմակերպություններ, որոնք իրենց գործունեության շրջանակներում իրականացնում են գիտատեխնիկական աշխատանքներ ու հենց դրանք էլ հիմնականում ստեղծում են ինովացիաներ ու ձևավորում սոցիալական միջավայր⁶:

ՀՀ սոցիալական ոլորտում կիրառվող ծրագրերի զգալի մասը հիմնականում իրավակիրառական հիմնավորում չունեն, իսկ ցանկացած նմանատիպ ծրագիր կամ գործունեություն շարունակում են զգալի խոչընդոտների հանդիպել, որի արդյունքում տեղի են ունենում ինովացիոն գործընթացների նվազում և գիտական ներուժի արտահոսք:

Ներկայիս գիտատեխնիկական հեղաշրջման փուլում ինովացիոն գործընթացները կարելի է համարել պարտադիր պայման: Ժամանակակից պայմաններում գերակա դիրք է զբաղեցնում գիտելիքը: Արևմտյան գիտնականների կարծիքով կազմակերպությունների մտավոր ռեսուրսների կտրուկ աճ է նկատվում՝ նյութական և ֆինանսական կապիտալի միջև: Դրանց հարաբերակցությունը տատանվում են 5:1 և 6:1 միջև⁷: Կապված այն հանգամանքից, որ սոցիալական ուղղվածությամբ միավորումները ստիպված են անընդհատ հարմարվել տեղի ունեցող փոփոխություններին, հատուկ տեղ են գտել սոցիալական ինովացիաների ուղղությամբ նոր միջոցների կիրառումը, որոնք կարող են լինել ավանդական մեթոդների զարգացման կամ արմատապես այլ մոտեցումների որոնման հետևանք: Իսկ սոցիալական ինովացիոն տեխնոլոգիաները, իրենցից ներկայացնում են ինովացիոն գործունեության այնպիսի մեթոդներ, որոնք ուղղված են ստեղծելու և նյութականացնելու այնպիսի ինովացիաներ, որոնք առաջ են բերում սոցիալական համակարգի որակական փոփոխություններ:

ԵՄ երկրների սոցիալական համակարգում առաջացած ճգնաժամային խնդիրների լուծումը կատարվում է ինովացիոն մեթոդաբանության սահմաններում

⁶ «ՀՀ սոցիալական վիճակը 2014թ.» ՀՀ ԱՎԾ, Երևան 2014, էջ 290:

⁷ Михнева С.Г. N 1 «Интеллектуализация экономики» Инновации 2003.

մշակված տարբեր եղանակների օգտագործմամբ, որոնք սկզբունքորեն ուղղորդված են նոր տեխնոլոգիաների որոնմանը և շրջանառմանը:

Այսպիսի եղանակներից մեկն է հանդիսանում ծրագրային ինովացիան, որը ստեղծվում է բազմաթիվ սկզբունքներով՝ ընդգրկելով համապատասխան ուղղություններ: Դրանք են.

- շրջակա միջավայրում գտնվող տարբեր կազմակերպությունների հետ նոր կապերի հաստատում կամ ձևափոխում, քանի որ ընդհանուր համակարգի առանձին մասերի և բաղադրիչների փոփոխությունը չի կարող բավարար արդյունավետ լինել ողջ համակարգի համար,
- «սահմանային նպատակ» սկզբունքը ենթադրում է, որ կազմակերպության ներկայացուցիչների կողմից ներկայացված ու մշակված համապատասխան ռազմավարական նպատակները հնարավորինս պետք է իրատեսական և կիրառական լինեն,
- «ինտեգրատիվ ծրագրավորման» սկզբունքը թույլ է տալիս ձևավորել կազմակերպության ռազմավարությունն ինտեգրատիվ կերպով, հաշվի առնելով աշխատանքի յուրաքանչյուր փուլը և փոխկապակցել դրանք նորացման գաղափարի հետ,
- «պուլսային ինովացիա» սկզբունքը ենթադրում է ինովացիոն սեմինարների ծրագրային մոտեցում, որն իրականացվում է ոչ մեծ ընդմիջումներով՝ խորհրդատվությունների և կազմակերպության անդամների ինտենսիվ համագործակցության արդյունքում,
- «աճող մոտիվացիայի» սկզբունքն իրականացվում է նախորդ ինովացիոն աշխատանքի վերլուծության և գնահատման հիման վրա, ինչի հետևանքով սոցիալական համակարգի ներկայացուցիչների մոտ աճում է հետագա դրական փոփոխությունների մոտիվացիան, քանի որ հաջողությունների արձանագրումը մի կողմից վստահություն է ներշնչում սեփական ուժերի հանդեպ, մյուս կողմից՝ չբավարարվածություն հաջողությունների բացակայության դեպքում,
- «ինովացիոն միջուկի աճեցման» սկզբունքը օգնում է փոխել կազմակերպությունը ի հաշիվ դրա կազմի մեջ մտնող մարդկանց փոփոխության՝ ծրագրային

աշխատանքի ընթացքում «աճեցվում է» կազմակերպության ինովացիոն խումբը, որը պատրաստվում է ինովացիոն գործառույթ կատարել⁸:

Այսպես, այս սկզբունքների կիրառումը հնարավորություն է ընձեռնում ստեղծել այլընտրանքային համակարգեր, որոնք կխոչընդոտեն ճգնաժամերի և կոնֆլիկտների առաջացմանը:

Ինովացիոն գործընթացն ամբողջությամբ ընդգրկում է այն ցանկալի վերջնական արդյունքը, որը հետագայում ակնկալվում է ստանալ ինովացիայի շնորհիվ⁹: Միջազգային և հայրենական փորձը վկայում է, որ արգելակող միջոցների ազդեցությունը կարելի է թուլացնել՝ աշխատողների համար մշակելով խթանման ու աջակցման տարբեր մեխանիզմներ, օրինակ՝ աջակցություն ինովացիոն գործունեություն ծավալող աշխատողների համար, համապատասխան կադրերին նյութական կամ բարոյական աջակցություն (պետական կոչումների կամ մրցանակների շնորհում, տեղական կամ միջազգային կառույցներում վերապատրաստման հնարավորության ընձեռում):

ՀՀ համար հեռանկարային ուղղություն կարող է լինել ինովացիոն տեխնոլոգիաների զարգացման ոլորտը, որը կնպաստի գիտատեխնիկական և սոցիալական ինովացիաների առաջընթացին: ՀՀ կառավարության աջակցությամբ նմանատիպ քաղաքականության իրականացումը և վերոնշյալ սկզբունքների կիրառումը կարող է մեծ ազդեցություն ունենալ սոցիալական համակարգի զարգացման վրա¹⁰:

Գիտաարտադրական ոլորտում հետազոտությունների անցկացումը, դարձել է սոցիալական համակարգի կայունացման անհրաժեշտ նախադրյալ: Ընդ որում՝ ինովացիան, նոր տեխնոլոգիաները համատեղ ձևավորում են ոչ միայն արտադրության աճի հետագա հեռանկարը, այլ հանդիսանում են տվյալ երկրի տնտեսության

⁸ Christian Seelos and Johanna Mair, “What Determines the Capacity for Continuous Innovation in Social Sector Organizations” a Rockefeller Foundation Report, Stanford Center on Philanthropy and Civil Society, January 31, 2012, pp. 12-13.

⁹ <http://www.scirp.org/journal/PaperInformation.aspx?paperID=25097> [05.05.2013թ. դրությամբ]:


¹⁰ Կատինյան Ա.Ռ., Սոցիալական քաղաքականության ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, գիտական հոդվածների ժողովածու, ISS 1829-071, Երևան, 2011, էջեր 62-69:

անկախության ու արտադրանքի աճի առկա մակարդակի բարձրացման ցուցանիշը: Ինովացիաների ներգրավվածությունը համաշխարհային տնտեսական համակարգին դարձել են գլխավոր գործոններից մեկը, որոնք ձևավորում են ազգային տնտեսության մրցունակությունը: Յուրաքանչյուր դեպքում ինովացիոն նախագծերի ֆինանսավորման կարգն իր առանձնահատկությունն ունի և սերտորեն կապված է կիրառվող ու ներդրվող ինովացիայի ուղղվածության հետ: Ինովացիաների զարգացումը, ինտեգրված համակարգի, ողջ պետության և առանձին կազմակերպության մակարդակով՝ ենթադրում է կանոնավորված ֆինանսական միջոցների ձևավորում ու ստեղծում:

Մեր կարծիքով, ինովացիոն տնտեսության ստեղծման ժամանակահատվածում, պետությունը տնտեսական զարգացման ինովացիոն մոդելի իրականացնողն է (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1.

Պետության դերն ինովացիոն տնտեսության ձևավորման գործում¹¹



Ըստ գծապատկեր 1-ի գործընթացում առաջնային է պետության կողմից ինովացիայի կիրառման ու ներդրման համար այնպիսի բարենպաստ միջավայրի և համապա-

¹¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, ինովացիոն տնտեսության ձևավորման գործում պետության դերը ցույց տալու նպատակով:

տասխան պայմանների ապահովումը, որոնք կնպաստեն ինովացիոն գործընթացների հնարավոր ռիսկերի նվազմանը, ազգային ու միջազգային կապիտալի ներգրավմանը:

Ինովացիոն քաղաքականության արդյունք է համարվում տվյալ երկրում նոր ձևավորվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների որակի ու քանակական ցուցանիշների բարելավումը: Այս գործընթացի արդյունավետ զարգացման համար պետությունը ստեղծում ու ձևավորում է տարբեր օղակներ, և իրականացնում՝ ինովացիոն ռազմավարություն:

Շուկայական մեխանիզմների կիրառման պայմաններում ինովացիոն համակարգի բաղադրիչների ինքնակազմակերպման ու կարգավորման ապահովումը կարևորագույն սկզբունք է, որովհետև անցումային տնտեսությունում պետական քաղաքականությունն անհրաժեշտ է, որ նպատակաուղղված լինի և պետական, և մասնավոր ինստիտուտների ձևավորման պայմանների ստեղծմանը:

Այսպես, յուրաքանչյուր երկիր աշխարհում իր արժանապատիվ տեղն ունենալու համար հիմնվում է իր ունեցած ազգային մրցակցային առավելությունների վրա: Անհրաժեշտություն է դառնում ձևավորել ինովացիոն տնտեսություն: Այսպես, ինովացիոն տնտեսության ձևավորումը ենթադրում է համակարգային այլընտրանքային մոտեցում: Ընթացող գործողություններն ու նախաձեռնությունները կհանգեն առկա ռեսուրսների կիրառմանը, իսկ պետական, մասնավոր, գիտակրթական ոլորտների միջև սերտ համագործակցությունը դրականորեն կազդի գիտության և տարբեր բնագավառներում կատարվող ինովացիաների վրա: Այսինքն՝ ակնկալվում են նոր ենթակառուցվածքներ, ռեսուրսներ, մասնավոր ու պետական հատվածի համագործակցություն, որոնք կերաշխավորեն այդ գիտելիքների վրա հիմնված տնտեսության ձևավորումը: Այս գործընթացում կարևորվում են տնտեսավարող սուբյեկտների ռազմավարական մոտեցումներն այս խնդրին: Կազմակերպությունները պետք է սովորեն կառավարել առկա գիտելիքները, այսինքն, իրականացնել ինովացիոն ծրագրեր, քանի որ գիտելիքը վերածվել է առավել կարևոր ռեսուրսի, որի արդյունավետ օգտագործումը օգնում է նոր պահանջների ուսումնասիրման ու դրանց ինովացիոն մեթոդներով բավարարման գործում: Եվ կառավարության, և մասնավոր

հատվածի տեսանկյունից կարևորվում է սոցիալական ոլորտում ինովացիաների, գիտելիքների ընդգծումն ու կառավարումը:

Տնտեսությունում սոցիալական համակարգի կայունացման ուղղությամբ իրականացվող միջոցառումները, անհրաժեշտ է հասանելի և մասնակցային դարձնել հասարակության խոցելի խմբերի համար:

Որպես կանոն, նմանատիպ գործունեություն ծավալելու համար ընտրվում են այնպիսի ինովացիոն ծրագրեր, որոնք չեն պահանջում նյութական, աշխատանքային և հումքային ռեսուրսների զգալի ծավալներ: Առավել հավասարակշռված և կայուն տնտեսություն ունենալու համար անհրաժեշտություն է առաջանում կազմակերպել այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ՀՀ սոցիալական քաղաքականության և սոցիալական ինովացիաների ձևավորմանը, ներդրմանն ու կարգավորմանը:

Համաշխարհային տնտեսությունում մրցունակ լինելու համար մեր երկրի արդյունաբերության տեղական, և արտահանող հատվածները պետք է ինովացիոն լինեն: Ցանկացած համակարգում իրականացվում է ինովացիոն ռազմավարություն, հիմնված փաստերի, վերլուծությունների և կանխատեսումների վրա: Պետական քաղաքականության արդյունավետության տեսանկյունից, կառավարությունն ուշադրություն է դարձնում երկրի տնտեսությունում ինովացիաների զարգացմանը: Ցանկացած պետությունում փոքր ու միջին ձեռնարկությունները համարվում են գյուտերի, ինովացիաների փորձարկման և գիտական առաջընթացի օգտագործման արդյունավետ միջոց:

Զարգացած երկրներում կրթության դերը հասնում է որակապես բարձր մակարդակի, որը ենթադրում է ուսուցման և որակավորման բարձրացում՝ հետագայում որպես տնտեսության կարգավորման ու զարգացման միջոց: Այսպես, ինովացիոն տնտեսության ձևավորման ռազմավարության մշակման ընթացքում կարևորվելու են կրթության, գիտության, առավել մատչելի մեթոդների կիրառման սկզբունքները: Ինովացիոն գործունեության զարգացման հիմնախնդիրը տնտեսությունում, տվյալ ոլորտում նոր գաղափարի ճիշտ կիրառելն է: Գիտական ուղղվածությամբ տնտեսության ձևավորումն ու առկայությունը մեզ համար կենսական նշանակություն ունի, որովհետև ՀՀ-ն հարուստ չէ բնական և հումքային ռեսուրսներով, դեպի ծով չունի

ելք, իսկ օդային փոխադրամիջոցները բավականաչափ ծախսատար են: Ինովացիոն նախագծերն ու ծրագրերը ֆինանսական մեծ ներդրումներ են պահանջում, որոնք ՀՀ-ի համար մեծ խոչընդոտ են հանդիսանում՝ նախագծերն իրականացնելու և տեղական շուկայում ներդնելու առումով: Ընդհանրապես ինովացիաները ստեղծվում և իրականացվում են համապատասխան ոլորտի առաջխաղացման և տնտեսական, սոցիալական պահանջները բավարարելու համար:

ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիաների զարգացման ուղղությամբ գերխնդիր է հանդիսանում բարենպաստ միջավայրի ձևավորումն ու ստեղծումը: Ժամանակակից տնտեսությունում գիտական գաղափարները, մշակումները և սոցիալական ներուժը դառնում են կայուն տնտեսության շարժիչ ուժը: Ինովացիաների կիրառումն անհրաժեշտ է կազմակերպությունների համար, քանի որ գիտելիքի օգտագործում, որպես կարևոր որպես կարևոր ռեսուրս, նպաստում է շուկայի պահանջների ուսումնասիրությանը և նոր մեթոդների կիրառմանը: Սոցիալական քաղաքականության զարգացման համար այլընտրանքային մեխանիզմների կիրառումը հնարավորություն կտա սոցիալական ոլորտը դարձնել մրցունակ միջավայր՝ սոցիալական ինովացիաներ կիրառելու և իրականացնելու ուղղությամբ:

1.2 Ինովացիոն գործընթացների առանձնահատկությունները ՀՀ սոցիալական ոլորտում

Ժամանակակից պայմաններում հասարակության զարգացումը և սոցիալական կայունացումն անհնար է պատկերացնել առանց գիտական նոր մտքերի և ինովացիոն գործընթացների: Ինովացիոն գործընթացը ինովացիայի նպատակամղված ներդրումն է, որի շնորհիվ ընթանում են զգալի որակական տեղաշարժեր: Ինովացիաները մշտապես կարևորվել են հասարակության զարգացման ողջ ընթացքում, ինչի արդյունքում էլ գիտնականներն ու հետազոտողները միշտ անդրադարձել են այդ հարցին: Նրանց մի մասն այն կարծիքին են, որ ինովացիան այն նորացված արտադրանքն է, որը բավարարում է հասարակության մինչև այդ չբավարարված պահանջմունքները, և տալիս է այնպիսի արդյունքներ, ինչպիսիք են՝ էկոլոգիական,

ֆինանսական և սոցիալական արդյունքները: Տարբեր երկրներ սոցիալական բնագավառում ինովացիոն գործունեություն ծավալելու իրենց բնորոշ մոտեցումներն ունեն: Ինովացիան մի գործընթաց է, որի բովանդակությունը, էությունը, ինչպես նաև դրա մաս կազմող փուլերը հանդիսանում են տարածայնությունների առարկա: Ինովացիոն գործընթացներն իրականում հնարավոր է ուսումնասիրել և հետազոտել միայն ընթացքի մեջ դիտարկելով՝ ըստ ուղղվածության կամ ամբողջական առանցքային խնդիրների, ֆինանսավորման ուղղությունների, մտավոր սեփականության գնահատման և ռիսկայնության տեսանկյուններից:

Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգում ինովացիոն համակարգի ձևավորման հիմնադրույթները հետևյալն են.

1. ինովացիոն համակարգի ձևավորումը պետք է լինի ուղղված դեպի շուկայական պահանջարկը,
2. ինովացիոն տնտեսության ձևավորումը ենթադրում է համակարգային մոտեցում և առանձին իրականացված նախաձեռնությունները: Այն ենթադրում է սերտ համագործակցություն ինչպես պետական տարբեր կառույցների, այնպես էլ մասնավոր և գիտակրթական ոլորտների միջև,
3. պահանջարկի յուրաքանչյուր աղբյուր ենթադրում է ինովացիոն համակարգի յուրահատուկ տարրերի խմբի զարգացում,
4. մարդկային կապիտալը կենտրոնական դեր ունի գիտելիքահենք տնտեսության կառուցման գործում,
5. ռազմավարության հաջողության նախապայմաններից է նախաձեռնությունների մասշտաբայնության, ժամկետայնության, նպատակադրման, հերթականության համապատասխանությունը,
6. սփյուռքի ակադեմիական և բիզնես ներուժի օգտագործումը կնպաստի ՀՀ-ում ինովացիոն կարողությունների զարգացման և միջազգային գործընթացներին ներգրավման արագացմանը,
7. պետության ներդրումը պետք է զգալի լինի ռազմավարության իրականացման նախնական փուլում և այնուհետև կրճատվի՝ փոխելով նախաձեռնությունների կիզակետը,

8. Հայաստանի տեսանկյունից առավել իրատեսական դիրքավորումը համաշխարհային տեխնոլոգիական ընկերությունների հետազոտությունների և մշակումների կենտրոն դառնալն է¹²:

Սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացները համեմատած նյութատեխնիկականի հետ ունեն մի շարք յուրահատկություններ: Եթե վերջինիս դեպքում գերակշռում է կոնկրետ անձի հեղինակային իրավունքը, ապա սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացների տարբերակում, այն կոլեկտիվ աշխատանքի կամ ստեղծագործության արդյունք են: Բացի այդ, այս ոլորտում ինովացիաների կիրառման հետ կապված խնդիրներն ավելի երկարաժամկետ լուծում են պահանջում, արդյունքներն արագ չեն արտահայտվում և չունեն կոնկրետ ժամկետայնություն, ինչպես որ շատ հաճախ լինում են նյութատեխնիկական ինովացիաների ներդրման ժամանակ¹³:

Այսպես, սոցիալական ոլորտում ինովացիաների առանձնահատկությունը նրանում է, որ այն օգտագործվում է արտաքին միջավայրի ավելի լայն շրջանակներում կախված տվյալ ինովացիոն գործընթացում ներգրավված մարդկանց խմբային և անհատական որակներից:

Մեր կողմից առաջարկվում է սոցիալական ոլորտում ինովացիաների առավել ընդգրկուն մեկնաբանումը: Այսպես, սոցիալական ոլորտում ինովացիան գիտակցված և գիտականորեն կազմակերպված նոր գործընթաց է՝ սոցիալական աշխատանքի գործնական իրացման ընթացքում, որը ձևավորվում է հասարակության կյանքի որակի բարձրացման և փոփոխվող պայմանների միտումներով՝ նպատակ հետապնդելով իրականացնել արդյունավետ վերափոխումներ սոցիալական համակարգում:

Ինչպես գիտենք, սոցիալական համակարգի կառուցվածքային բաղադրիչների շարքին են դասվում սպորտը, մշակույթը, կրթությունը, գիտությունը, մարդու առողջության և աշխատանքի պաշտպանությունը, սոցիալական կայունությունը և այլն:

¹² ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ», N 6 արձանագրային որոշման հավելված, էջ 3:

¹³ Хотяшева О.М., Инновационный менеджмент, Учебное пособие, Санкт-Петербург, Изд. дом «Питер», 2006, с. 59–67.

ՀՀ-ում զարգացումը կարելի է ուղղել սոցիալական ոլորտում գիտական հիմնավորմամբ ինովացիաների ու ծրագրերի ներդրմանը, որոնք խոցելի խմբերի համար կհանդիսանան ինտենսիվ սոցիալական կայունացման աղբյուր:

Այսօր գործնականում գրեթե չկա որևէ ոլորտ, որտեղ չընթանան ինովացիոն գործընթացներ: Այսպիսով, ինովացիաների վերաբերյալ տեսական և գործնական տեղեկացվածությունը կարևորվում է սոցիալական ոլորտի կայունացման համար: Այսպես, փորձենք ավելի ծավալուն ներկայացնել ինովացիաներն ու սոցիալական ինովացիաները: Գոյություն ունեն ինովացիաների բնութագրման բազմաթիվ չափանիշներ:

Օրինակ, ըստ ձեռնարկությունների գործունեության ոլորտի ինովացիաները կարող են լինել՝ արտադրական, տեխնոլոգիական, առևտրային, սոցիալական, ֆինանսական և այլն: Ըստ մեզ հետաքրքրող նյութի ուղղվածության ու բնագավառի ինովացիաները հետևյալն են.

- գիտատեխնիկական ինովացիաներ, որոնց նպատակն է ստեղծել նոր արտադրանք կամ ծառայություն կամ կատարելագործել դրանք ըստ տեխնոլոգիական բովանդակության,
- կառավարման ինովացիաներ, որոնք ուղղված են արտադրության կառավարման կամ արդյունքի փոխանակման գործընթացի կատարելագործմանը,
- սոցիալ-տնտեսական ինովացիաներ, որոնք փոփոխում են մարդկանց կյանքի սոցիալական պայմանները¹⁴:

Ինովացիաների դասակարգումները հիմնականում բաժանվել են երկու խմբերի.

- ըստ կիրառման ոլորտների առանձնացվում են՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական ինովացիաներ,
- ըստ բովանդակության՝ տեխնոլոգիաների և ծառայությունների ինովացիաներ¹⁵:

Ելնելով սոցիալական ինովացիաների մակարդակից և ծավալից՝ կարելի է առանձնացնել համաշխարհայինը, որոնք ուղղված են համամարդկային խնդիրների լուծմանը, ռեգիոնալ և լոկալ ինովացիաների, որոնք ներկայացնում են ավելի նեղ՝

¹⁴ Managing technological innovation /Brian C. Twiss London, Longman, p. 200.

¹⁵ Завлина П.Н., Инновационный менеджмент, Справочное пособие, Москва, Центр исслед. и статистики науки, 1998, с. 12.

տարածաշրջանային և տեղային նշանակության խնդիրների լուծման շրջանակները: Հասարակության կյանքի որակի տեսանկյունից սոցիալական կառույցներում և ինստիտուտներում առանձնանում են՝ սոցիալական, տնտեսական, հոգևոր-մշակութային ինովացիաները: Ըստ օգտագործման մասշտաբի սոցիալական ոլորտում ինովացիաները լինում են.

- եզակի, որոնք իրականացվում են մեկ օբյեկտում,
- դիֆուզային, որոնք տարածվում են շատ օբյեկտների վրա¹⁶:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրահանգել, որ բոլոր դասակարգումներում և բնորոշումներում ինովացիոն գործընթացները դիտարկվում են կոնկրետ ոլորտի կամ իրավիճակի համար: Նման բնորոշումներով կամ դասակարգումներով չի բացահայտվում ինովացիայի արդյունավետությունը և կոնկրետ ոլորտում կառավարման էությունը, չկան հստակ չափանիշներ բնորոշելու ինովացիան՝ նրա տնտեսական արդյունքի կամ կառավարման ձևի տեսակետից:

Ինովացիոն գործունեությունը գիտական առաջադիմության միջոցով նոր, կատարելագործված արտադրանքի և արտադրական գործընթացում օգտագործվող տեխնոլոգիայի ստեղծմանն ուղղված գործընթաց է¹⁷:

Այսպիսով, կազմակերպության համար որպես կարևոր պայման, ինովացիան ընձեռում է նոր հնարավորություն տարբեր բնույթի գործարարություն կամ ծառայություն մատուցելու համար: Այսինքն՝ ինովացիայի ոլորտը չի սահմանափակվում տեխնիկայով կամ տեխնոլոգիաներով: Այն հաճախ դիտվում է որպես տնտեսական, սոցիալական հասկացություն, քան տեխնիկական:

Վերոգրյալն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով սոցիալական ինովացիոն համակարգի հիմնական բաղադրիչների փոխկապվածությունը ներկայացվել է գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2-ից երևում է, որ սոցիալական ինովացիոն համակարգի կայունացման համար գործադիր իշխանությունն իր գործունեությամբ նպաստում է սոցիալական ինովացիայի իրականացմանը: Սոցիալական ձեռնարկությունները

¹⁶ Kilcullen M., Kooistra JO. “At least do no harm: sources on the changing role of business ethics and corporate social responsibility”, Reference Services Review 27(2) 1999, p. 158.


¹⁷ Чурсин А.А., Васильев С.А., Конкуренция, инновация и инвестиции (нелинейный синтез), Москва, Машиностроение, 2011, с. 10-22.

իրականացնում են պետական ու մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը: Այստեղ սոցիալական ինովացիաների վրա ազդելու հնարավորությունը կապված է տարբեր գործոնների հետ, այնպիսին ինչպիսիք են.

- ինովացիոն գործընթացների վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվության առկայություն,
- գործող օրենսդրության մատչելիություն,
- գործող կազմակերպական նոր սկզբունքի կառուցում և այլն:

Գծապատկեր 2.

*Սոցիալական ինովացիոն համակարգի
հիմնական բաղադրիչների փոխկապվածությունը¹⁸*



Զարգացող երկրներում սոցիալական ոլորտի ինովացիոն գործընթացների ուղղությամբ նորանոր միջոցառումների կազմակերպումը և ձևավորումը շարունակական բնույթ են կրում: Կախված տնտեսության մասշտաբներից, պետական հատվածի չափերից և հնարավորություններից սոցիալական քաղաքականությունն ունի իր առանձնահատկությունները:

Շուկայական համակարգում սոցիալական ինովացիաների ներդրման ուղղությամբ, պետության մասնակցությունը կարևորվում է այն հանգամանքով, որ

¹⁸ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, նշված սահմանումները և բնորոշումներն ամփոփելու և ամբողջացնելու նպատակով:

շուկայական համակարգը մարդկանց աշխատանքի, կրթության երաշխիքներ չի տալիս, չի ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց, թոշակառուների, անապահով խավի սոցիալական պաշտպանվածությունը: Այդ պատճառով առաջանում է պետության միջամտության անհրաժեշտություն՝ ինովացիոն գաղափարների ներդրման ու կիրառման գործընթացում:

Ինովացիոն գործունեության հիմնական գործառույթը փոփոխություններն են, ինչի արդյունքում ընթանում են ոլորտի բարելավման համար նոր գործընթացներ: Սոցիալական համակարգում ինովացիաների աղբյուրն են հանդիսանում արտաքին, հասարակության պահանջմունքների փոփոխությունները, նորանոր սոցիալական խնդիրները, որոնք չեն լուծվում ավանդական մեթոդների օգնությամբ: Սոցիալական բնույթի հիմնախնդրի առկայությունը նպաստում է ոլորտում նոր միջոցների և ուղղությունների մշակմանը: Այդպես են առաջացել և տարածվել սոցիալական կացարանները, տուն ինտերնատները, սոցիալական հիվանդանոցները և այլ սոցիալական բազմաթիվ ծրագրեր ու ծառայություններ:

Հայտնի է, որ պետության սոցիալական քաղաքականության տնտեսական հիմքը կազմում է բնակչության անհատական եկամուտների վերաբաշխումը պետական բյուջեի միջոցով: Հարկերի տեսքով հավաքված եկամուտների մի մասը մասամբ վերադարձվում է բնակչությանը՝ տարբեր սոցիալական նախաձեռնությունների տեսքով, կիրառվում է տարբերակված մոտեցում հիմնականում հարկահավաքման ժամանակ և տարբեր նյութական կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ: Արդյունքում մեղմանում է եկամուտների անհավասարությունը, քանի որ տեղի են ունենում անհատական եկամուտների վերաբաշխում հասարակության առավել ապահով խավից դեպի ավելի պակաս ապահովին՝ անաշխատունակներին և խոցելի խմբերին: Անկախ երկրի սոցիալական զարգացման աստիճանից և յուրահատկություններից, բնական հարստությունից, պետական և կորպորատիվ կառավարման մոտեցումներից՝ սոցիալական ոլորտի առաջխաղացումը, միջազգային տնտեսական համակարգում ինտեգրվածության բարձր մակարդակը, կայուն տնտեսության առկայությունը մեծ մասամբ համատեղվում է ինովացիոն գործունեության շնորհիվ: ՀՀ-ում արդի տնտեսական աճի հիմնախնդիրները կապված

են անցումային շրջանում առաջացած խոր տնտեսական ճգնաժամի հետ: Այս իրավիճակն, իհարկե, ունի իր առանձնահատուկ ազդեցությունը ՀՀ-ում ինովացիաների ստեղծման և զարգացման համար, մասնավորապես, ինովացիաների կիրառման ուղղությամբ պետական և այլ աղբյուրներից ստացվող ֆինանսական միջոցների սղությունը:

Համաձայն 2008թ.-ի ապրիլին ընդունված ՀՀ կառավարության ծրագրի, կառավարության հիմնական գերակայություններից են ազգային անվտանգությունը, ակտիվ տնտեսական քաղաքականության առկայությունը, ինչպես նաև կայուն զարգացման ապահովումը¹⁹:

Եկամուտների հավասարության ձգտումը, եվրոպական տարբեր երկրներում սոցիալական արդարության արտահայտումն է: Շուկայական տնտեսությունում սոցիալական քաղաքականությունը և ինովացիոն գործընթացները դառնում են նուրբ գործիքներ, որոնք ապահովում ու նպաստում են բնակչության սոցիալական կայունությանը, և սոցիալական ուղղվածությամբ ձեռնարկությունների արդյունավետ աշխատանքին:

Տնտեսապես կայուն և զարգացած երկրների անցած ճանապարհը վկայում է, որ ինովացիոն գործընթացները և գիտության զարգացումը համարվում են տնտեսության արագ զարգացման ու արդյունավետության բարձրացման հիմնական միջոցները, և մշտապես աճող դրական ազդեցություն են թողնում տնտեսության մյուս ոլորտների վրա: Երկրի հիմնական ռեսուրսներից են համարվում գիտատեխնիկական արտադրանքի օգտագործման արդյունքում ստեղծված ինովացիաները: ՀՀ-ի գիտատեխնիկական համալիրի հնարավորությունները, գիտատեխնիկական գործունեության օգտագործումը տնտեսությունում և սոցիալական ոլորտում, պետք է դիտել տնտեսական ու սոցիալական զարգացման առանցքային ուղղություն:

ՀՀ կառավարությունն իրականացնում է հակաճգնաժամային ծրագիր, որի երեք գլխավոր նպատակներն են՝ ռիսկերի կանխարգելումը, հետևանքների մեղմումը և կայունացումը: ՀՀ-ում արդեն շուրջ 400 սոցիալական ինովացիոն ծրագրեր են իրականացվում շուրջ 300 համայնքներում 5500 մարդու աշխատանքով ապահովելու

¹⁹ ՀՀ կառավարության 2008թ. ապրիլի 28-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N-380-Ա որոշում, հավելված «Ե», էջ 3:

ուղղությամբ: ՀՀ-ը ցածր եկամուտ ունեցող երկրների ցանկից տեղափոխվել է միջին եկամուտ հետապնդող երկրների ցանկ, և 2004 թ. համեմատ 2011 թ.-ին շուրջ 60 % նվազել է ծայրահեղ աղքատությունը²⁰:

Գլոբալացման ներկա պայմաններում ՀՀ սոցիալական ոլորտի շարունակական զարգացման համար լավագույն ուղի են հանդիսանում ինովացիոն գործընթացները, ոլորտը բնութագրող ցուցանիշների համակարգի ձևավորումն ու ներդրումը, ինովացիոն գործունեության սոցիալական ուղղվածության կարգավորումը: Այսպես, ինովացիայի նկատմամբ հասարակության և տնտեսվարող սուբյեկտների ունեցած հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը պայմանավորված են սոցիալական ոլորտի բարելավմամբ և բնակչության սոցիալական կայունությամբ, այսինքն՝ այն ապագա եկամտի չափով, որը պետք է ստացվի ինովացիոն ծրագրի կամ նախագծի իրականացման արդյունքում: Ուստի, անհրաժեշտ են իրավական կարգավորում, կառավարման մեխանիզմների արդյունավետության բարձրացում և այլ միջոցառումների կազմակերպում:

Վերջին 20 տարիների ընթացքում, աշխարհի 75 երկրներից 53-ում մարդկանց ամբողջական եկամտում աշխատավարձի չափաբաժինը կրճատվել է²¹: Սոցիալական ոլորտի արդյունավետ իրավական կարգավորումը կնպաստի որոշ խնդիրների լուծմանը, մասնավորապես ձեռնարկության գրանցումից, արտոնագրերի տրամադրումից մինչև հնարավոր արժեթղթերի առաջնային տեղաբաշխման կամ սնանկացման ընթացակարգերի ապահովումը: Այս իմաստով, ՀՀ-ում դեռ բազմաթիվ անելիքներ կան: Ինովացիոն գործընթացների պետական կարգավորման առումով 2005թ.-ից սկսած որոշ քայլեր արվել են, մասնավորապես, կառավարության կողմից մշակված ինովացիոն գործունեության մասին հայեցակարգը, 2005-2010թթ. պետական ինովացիոն քաղաքականության ծրագիրը և, «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը²²:

Միաժամանակ կարևորելով ՀՀ-ում պետական մակարդակով իրականացվող տարբեր սոցիալական ծրագրերը, այնուամենայնիվ անհրաժեշտություն է առաջանում

²⁰ http://media.asue.am/upload/Bajanmunq_1.pdf [01.02.2014թ. դրությամբ]:

²¹ Hartmut Walravens, München, K.G. Saur, “Newspapers collection management, printed and digital challenges: proceedings of the International Newspaper Conference, Santiago de Chile” 2008, p. 178.

²² <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2624> [10.05.2013թ. դրությամբ]:

արդյունավետ լուծումներ գտնել ծագող բազմաթիվ խնդիրների հաղթահարման ուղղությամբ: Բացակայում են ինովացիաների իրականացման համար օրենսդրությամբ նախատեսված իրավական արտոնությունների, խթանների ամբողջական համակարգը, որը կարելի է համարել ոլորտի կայունացման և զարգացման հիմնաքարերից մեկը:


Ներկայումս գրեթե բացակայում է ինովացիոն գործունեության նպատակային, հիմնավոր և ակտիվ պետական աջակցությունը: ՀՀ տնտեսությունում սոցիալական ոլորտի ինովացիոն գործընթացները էապես թույլ են արտահայտված, ինչը պայմանավորված է ոչ միայն երկրի տնտեսական ներկա վիճակով կամ ներուժով, այլ ինովացիոն գործունեության ակտիվացման մի շարք պարտադիր և հրատապ նախապայմանների բացակայությամբ:

ՀՀ սոցիալական կայունացման համար կարևորագույն խնդիրներից են համարվում երկրում ինովացիոն գործընթացների աշխուժացումը, որոնք էական նախապայման են հանդիսանում սոցիալական ոլորտի բարելավման և բնակչության սոցիալական կայունացման համար:

Գծապատկեր 3-ի միջոցով ներկայացվել է սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացների փոխկապվածությունն առանձին գործառույթների հետ, և այն բնորոշվել է որպես սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացների առանձին գործառույթային փուլերի արդյունքների համալիր:

Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, ինովացիոն գործընթացը սկսվում է օրենսդրական դաշտի ուսումնասիրությունով, ոլորտում կատարվող հետազոտություններով և ավարտվում է ինովացիոն ծրագրերի ներդրմամբ: Սոցիալական ոլորտի ինովացիոն գործընթացը համարվում է արդյունավետ միայն այն դեպքում, եթե այն անցել է ինովացիոն գործընթացը կարգավորող առանձին գործառույթային փուլերով, մասնավորապես, ինովացիոն սոցիալական քաղաքականության մշակմամբ, ինչի արդյունքում է՝ ինովացիոն գործընթացը լայնորեն տարածված կլինի համապատասխան ոլորտում:

Սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացների փոխկապվածությունը առանձին գործառույթների արդյունքների հետ²³



Կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում, առաջարկվում են սոցիալական ինովացիաների և ինովացիոն գործընթացների կարգավորման նոր մոտեցումներ սոցիալական ոլորտում (որոնք կներկայացվեն ապագա շարադրանքում):

²³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ կարևորելով ՀՀ սոցիալական ոլորտի ինովացիոն գործընթացների փոխկապվածությունն առանձին գործառույթների հետ:

1.3 Սոցիալական ինովացիաների ձևավորման և զարգացման ուղիությունները ՀՀ-ում

Համաշխարհային տնտեսությունում առաջնային նպատակ է գիտելիքահենք տնտեսության ձևավորումը, որի հիմքն են կազմում նոր մտահղացումները, հայտնագործությունները, ինովացիաները և դրանք առօրյա կյանքում կիրառելու հնարավորությունն ու արագությունը: Այսօր համաշխարհային տնտեսությունը չափազանց դինամիկ է, առավել փոփոխական և հասանելի, իսկ ընթացող որակական տեղաշարժերն առաջընթացին նպաստող նշանակալի վերախմբավորումների արդյունք են: Այն պայմանավորված է տնտեսական աճի ավանդական աղբյուրների նվազմամբ և բազմաթիվ միջոցների իրականացման ուղղությամբ հատկացվող ծախսերի աճով: Սա հետևանքն է այն հանգամանքի, որ արդի տնտեսությունում առաջխաղացման հիմքում գերակշռող բաղկացուցիչը հանդիսանում է գիտելիքը, նոր տեխնոլոգիաները, ծառայություններն ու ինովացիաները:

Տնտեսական զարգացմանն առնչվող հիմնախնդիրները քաղաքականության օրակարգից վերածվում են համընդհանուր նպատակների: Վերջիններիս իրագործման նպատակով կիրառվում են համաշխարհային տնտեսական կառույցների և ինստիտուտների համախմբված միջոցներն ու ջանքերը: Աշխարհում տնտեսության և սոցիալական ոլորտին առնչվող կարգավորման ու զարգացման օրակարգերն իրականացվում են յուրովի մոտեցմամբ, ինչի արդյունքում էլ առաջընթացի կոնկրետ և համընդհանուր կիրառելի միջոցներն ու բանաձևերը բացակայում են: Նոր գաղափարների և մտքերի ի հայտ գալը շարունակական որակական աճ է ապահովում: Այս համատեքստում զարգացումը՝ որպես անհրաժեշտ առաջընթացի անբաժանելի տարր ենթադրում է գիտելիքի, գաղափարների, ինովացիաների և դրանց կիրառման արդյունավետ կուտակումն ու յուրացումը: Գիտության և ինովացիաների մասին տվյալների մշակման, հավաքագրման ու աշխատանքների կոորդինացման նպատակով «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը» ստեղծել է ազգային փորձագետների խումբ, որոնք մշակել են «Ֆրասկատիի ուղեցույցը», այն ընդգրկում է գիտական ուղղվածությամբ հետազոտությունները,

դրանց կազմն ու սահմանները, համապատասխան մշակումներում մասնակից անձնակազմի թվաքանակի չափման մեթոդաբանությանը և այլն²⁴: Անհրաժեշտ է նշել, որ ինովացիաների մասին տվյալների ամբողջացման համար՝ արդի կիրառվող մեթոդաբանությունը հիմնված է 1992թ. Օսլոյում ընդունված հանձնարարականների վրա՝ «Օսլոյի ուղեցույց» [OECD. Proposed Guidelines for Collecting and Interpreting Technological Innovations Data. Paris: Oslo Manual, 1992]:

Ինովացիոն տեսության հիմնադիրներից մեկը՝ ավստրիացի գիտնական Զ. Շումպետերը, առաջինը գործնական կարևորություն տվեց որպես նոր կատեգորիա «ինովացիա» հասկացությանը և հետազոտեց դրա փոխազդեցությունը տնտեսության տարբեր ճյուղերի հետ: «Տնտեսական զարգացման տեսություն» աշխատության մեջ [1911թ.] Շումպետերը դիտարկել է նոր զուգակցությունների հարցը, այսինքն՝ ինովացիաների հարցը, որպես հիմնարար գործընթաց: Ըստ նրա, մրցակցային տնտեսությունում ինովացիան բացատրում է այն երևույթը, որի ազդեցությամբ սուբյեկտները և ընտանիքները սոցիալական առումով աճ կամ անկում են ապրում»²⁵:

Առկա են ինովացիաների բազմաթիվ սահմանումներ: Բ. Թվին ինովացիան սահմանում է մի գործընթաց, որում գյուտը կամ գաղափարը ունենում է տնտեսական բովանդակություն²⁶: Բ.Սանթոյի կարծիքով, ինովացիան հասարակական-տնտեսական այնպիսի գործընթաց է, որը գյուտի և գաղափարի գործնական կիրառման ճանապարհով ստեղծում է իրենց հատկություններով ավելի լավ տեխնիկա կամ ապրանքներ, այն տարբերակում, երբ ինովացիան ուղղված է դեպի տնտեսական օգուտը, շահույթը, ինովացիոն կառավարումը շուկայում կարող է ձեռք բերել և ապահովել լրացուցիչ եկամուտ:

Ինովացիայի տեսական հիմնավորումը փորձել է տալ նաև անգլիացի գիտնական Զ.Ա. Հոբսոնը: Ըստ Հոբսոնի, ձեռնարկատիրոջ իրական ուժը պայմանավորված է նոր շուկաների, ապրանքների արտադրմամբ և արտադրության նոր միջոցների բացահայտմամբ: Նման արտադրությունը նա կոչում էր «առաջադիմական արտադրութ-

²⁴ Frascati Manual Proposed standard practice for surveys on research and experimental development: OECD, 2002, p. 20.

²⁵ Шумпетер Й., Пер. Автономова В.С. и др., Вступ. ст. Милейковского А.Г. и Бомкина В.И., Общ. ред. Милейковского А.Г., Теория экономического развития: Москва, Прогресс, 1982, с. 159.

²⁶ Managing technological innovation /Brian C. Twiss London: Longman, p. 239.

յուն»²⁷: Ըստ տնտեսագիտական բառարանի, ինովացիան նոր գաղափարի մշակումն է, և առաջին փորձնական կիրառումը և տարածումը²⁸:

Ինովացիան սահմանվում է նաև ՀՀ համապատասխան օրենքով²⁹: Ցանկացած ոլորտում ինովացիոն գործընթացները շարունակական բնույթ ունեն, և դրանք պետք է դիտարկել, որպես հասարակական պահանջմունքների բավարարման կարևոր գործընթացներ: Ընդգծենք մի ընդհանուր գաղափար, որ ինովացիոն տնտեսության ձևավորումն ու առկայությունն ապահովում է երկրի կայուն ու անվտանգ զարգացումը, մրցունակությունը, տնտեսության և սոցիալական համակարգի գրավչության ձևավորումը:

Այսպես, ինովացիոն համակարգում հիմնական տեղը վերապահված է նոր ապրանքներին: Շատ մասնագետներ տեխնոլոգիական ինովացիաները համարում են բարդ համակարգ, որի միջոցով գաղափարը, հայտնագործությունը վերածվում է առևտրային բնույթի գործողության օբյեկտի³⁰:

Ինովացիայի բովանդակությունը տարբեր գիտությունների կողմից յուրովի է ընկալվում և մեկնաբանվում: Այսպես, սոցիոլոգիայում ինովացիան դիտարկվում է գիտական ու մտավոր գործունեության ուղղություն, սակայն տնտեսության զարգացման տեսանկյունից այն աշխատանքային գործունեության նոր վարքագիծ է և շարժիչ ուժ: Այսինքն, ինովացիան ենթադրում է արտաքին միջավայրի նկատմամբ տվյալ համակարգի ակտիվ կամ պասիվ փոփոխություն: Սոցիալական ինովացիան ծագել է նորի ներդրման ու այդ գործընթացին հոգեբանական դիմադրության հաղթահարման մասին առկա տվյալների համակարգման առաջին փորձերի արդյունքում:

Ըստ ամերիկացի տնտեսագետ Փ. Դրաքերի ինովացիայի հետևանքով առկա միջոցները ֆինանսական նոր ռեսուրսներ ու հարստություն կուտակելու, ձևավորելու նոր ուժ են ստանում: Դրաքերը նշում է, որ ինովացիոն գործունեությունը ոչ միայն

²⁷ Ջոն Հոբսոնի կարծիքը մեջբերված է հետևյալ աղբյուրից՝ John Cunningham Wood, “John Stuart Mill: Critical Assessments, Том 4 John Stuart Mill: Critical Assessments, John Cunningham Wood, ISBN 0415065720, 9780415065726, Routledge critical assessments of leading economists”, Taylor & Francis, 1991, pp. 7-12.

²⁸ Райзберг Б.А., Лозовский Л.Ш., Стародубцева Е.Б., Современный экономический словарь, Москва, ИНФРА-М, 1998, с. 10.

²⁹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24697> [10.05.2013թ. դրությամբ]:

³⁰ Саломатин Н.А., Румянцева З.П., Менеджмент организации: Учебное пособие, Гос. Ком-т РФ по высш. Образованию, Гос. Акад. упр.-я им. С. Орджоникидзе. Москва, ИНФРА-М, 1996, с. 7-10.

օժտված է տնտեսական նպատակահարմարությամբ և գնով, այլ նաև ունի որոշակի սոցիալական արժեք: Նա թվարկել է յոթ իրավիճակներ, որտեղ անհրաժեշտ է իրականացնել ինովացիաներ³¹.

- անսպասելի հաջողություն, չսպասված հաջողություն, չնախատեսված արտաքին իրադարձություն,
- իրավիճակի ընդհանուր կանխատեսումների և իրողությունների անհամապատասխանություն,
- գոյություն ունեցող գործընթացի վերափոխման խիստ անհրաժեշտությունը, որն առաջացնում է ինովացիոն հնարավորություն,
- անսպասելի փոփոխությունը տնտեսության ճյուղային կառուցվածքում կամ հնարավոր իրացման շուկայում,
- ժողովրդագրական իրավիճակի փոփոխություն,
- հնարավոր գնորդի տրամադրության և ընկալումների փոփոխություն՝ պայմանավորված տնտեսությունում ընթացող վերելքներով և վայրէջքներով,
- գիտելիքների մակարդակի փոփոխություն՝ կապված նոր տեղեկատվության առկայության հետ:

Կազմակերպությունները հաճախ ադապտացվելու խնդիր են ունենում՝ շրջակա միջավայրի փոփոխվող պայմաններին: Սոցիալական տարբեր խնդիրների լուծման ուղղությամբ մշակվում ու իրականացվում են ինովացիոն ծրագրեր, նախաձեռնություններ, ռազմավարություններ: Այդ ծրագրերը կարող են իրականացվել տարբեր ոլորտներում (առողջապահություն, բնապահպանություն, սոցիալական և այլն): Գիտնականները հաճախ հենց դրանք են սահմանում որպես սոցիալական ինովացիաներ³²:

Սոցիալական ինովացիաները բազմատեսակ են և դասակարգվում են տարբեր հիմքերով: Սոցիալական ինովացիաների դասակարգման ժամանակ կիրառվում են

³¹ Друкер П., пер. с англ Питер, Бизнес и инновации, Санкт-Петербург, Вильямс, 2007, с. 63.

³² Фатхутдинов, Р.А., Инновационный менеджмент, Учебник для вузов, Санкт-Петербург, Изд. дом “Питер”, 2007, с. 6.

տարբեր մոտեցումներ: Ոլորտային տեսանկյունից առանձնացվում են՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային ինովացիաները³³:

Ուսումնասիրության շրջանակներում առանձնացնենք սոցիալականը: Սոցիալական ոլորտում ինովացիաների բազմատեսակ լինելը կապված է հասարակության սոցիալական կյանքի բազմազանության հետ: Այսպես, ինովացիան սոցիալական ոլորտում առաջին հերթին սովորական մտածողության, մոտեցման և կենսակերպի փոփոխություն է, և ինովացիաներից ակնկալվող արդյունքն ավելի շատ ստանում է ոչ թե ինովացիոն գաղափարի ստեղծողը կամ ներդնողը, այլ այն սուբյեկտը ով կիրառում է տվյալ ինովացիան:

Միջազգային ստանդարտներով ինովացիան բնորոշվում է որպես ինովացիոն գործընթացների վերջնական արդյունք, որը շուկայում ներդրված նոր, կատարելագործված տեխնոլոգիայի, արտադրանքի կամ սոցիալական բնույթի ծառայությունների նկատմամբ նոր մոտեցման կիրառումն է³⁴:

Ինովացիոն գործունեությունը դիտվում է ոչ թե որևէ կոնկրետ ինովացիայի ներդրման եզակի գործողություն, այլ առաջնային ինովացիաների մշակման, յուրացման, արտադրության և առևտրայնացման միջոցառումների նպատակաուղղված համակարգ: Շուկայական տնտեսությունում անհրաժեշտ են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ շահութաբերությունը, ինովացիայի ծախսաձածկումը, կազմակերպության եկամուտը և այլն: Սակայն այս ցուցանիշներն ինովացիոն նախագծերի կիրառման արդյունք են, որոնք որոշվում են տվյալ կազմակերպության ռազմավարությունով, ֆինանսական միջոցների ներգրավման պայմաններով և աղբյուրներով:

Յուրաքանչյուր ինովացիոն նախագծի վերջնական հաջողությունը կախված է ոչ այնքան դրա ոլորտից կամ մասշտաբներից, որքան դրա ինովացիոն կառավարման որակից: Ինովացիոն նախագծերի մանրակրկիտ և բազմաչափ վերլուծությունն ու ընտրությունը հնարավորություն է տալիս օպտիմալացնելու ինովացիոն փաթեթը: Ինովացիաների վերլուծության համակարգն աչքի է ընկնում մեթոդների

³³ Нагорнова А.Ю. Социальные инновации, Ульяновск 2003, с. 7-8.

³⁴ Сурин А.В., Молчанова О.П., МГУ им. М.В. Ломоносова, Инновационный менеджмент, Учебник для вузов, Москва, Инфра-М, 2008, с. 11.

բազմազանությամբ: Այն ընդգրկում է ներդրումային, ֆինանսական ու տեխնիկատնտեսական, մաթեմատիկա-վիճակագրական վերլուծության բազում մեթոդներն ու մոդելները, գիտատեխնիկական մակարդակի վերլուծությունը, արտադրանքի որակը և այլն:

Վերոգրյալի արդյունքում, ինովացիաների ընտրությունն ու ֆինանսավորումն իրականացվում են բազմաթիվ սկզբունքների և ուղղությունների հիման վրա, որոնք հնարավորություն են ընձեռնում ինովացիայի կենսաշրջանի բոլոր փուլերի համար կանխատեսել իրականացվելիք ծախսերը՝ ընդգրկելով և ներառելով բազմազան տեխնիկական լուծումներն ու ֆինանսատնտեսական գործոնների և շարժառիթների փոխազդեցությունը:

Այսպես, ինովացիան ենթադրում է ցանկացած ապրանքի, ծառայության, դրանց արտադրության եղանակի, կազմակերպական, ֆինանսական, գիտահետազոտական և այլ համակարգերում այնպիսի կարգավորումներ ու կատարելագործումներ, որոնք ապահովում են ծախսերի տնտեսում կամ նմանատիպ տնտեսման համար ձևավորում են պայմաններ: Այսինքն, ինովացիան գիտական աշխատանքների արդյունքների կիրառումն է, ինչն արտադրության, գիտության, մշակույթի և տարբեր ոլորտներում նպաստում է սոցիալական առաջընթացին:

Տարբեր ոլորտներում նմանատիպ ինովացիոն փոփոխությունները կյանքի կոչելու նպատակով կարևոր է պետության դերն ու աջակցությունը, քանի որ վերջինիս կողմից է մշակվում և իրականացվում յուրաքանչյուր ոլորտի համապատասխան քաղաքականությունը:

Ինովացիոն տնտեսություն ձևավորելու ուղղությամբ ՀՀ կառավարությունն ընդունել է որոշ իրավական ակտեր և հայեցակարգեր, որտեղ զգալի մաս են կազմում ազգային ինովացիոն համակարգի ձևավորման ռազմավարական խնդիրների լուծումը նախանշող միջոցառումները: ՀՀ կառավարության նպատակն է տարեց տարի ապահովել տնտեսական աճ, ներմուծման համեմատ արտահանման աճի զգալի տեմպեր, աղքատության կրճատում, զբաղվածության ապահովում և այլն:

Այսպես՝ ՀՀ կառավարության համար հիմնախնդիրն այն է, որպեսզի ՀՀ բնակչության կենսամակարդակն աստիճանաբար մոտենա տնտեսապես առաջատար

երկրների բնակչության կենսամակարդակին: Այսպիսի նպատակն իրականացնելու ուղղությամբ անհրաժեշտ է ժամանակակից ինովացիոն քաղաքականության իրականացումը, ուղղված ազգային հարստության, բնակչության կյանքի որակի, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի բարձրացմանը:

Արդյունավետ ինովացիոն տնտեսության առկայությունը դառնում է առաջընթացի գլխավոր հեռանկարային ուղղություն, որի նպատակը նոր արտադրանքի ստացումն է կամ գոյություն ունեցող արտադրանքի, ծառայության, համապատասխան ոլորտում գործունեություն ծավալելու նպատակով բարենպաստ պայմանների առկայությունը և ձևավորումը:

Ընդհանուր առմամբ առանձնացնենք, որ ինովացիայի ստեղծումը, ձևավորումն ու կիրառումն իրականացվում է ժամանակի ընթացքում: Ինովացիաները նպաստում են գիտական և տեխնոլոգիական նոր ձևերի ստեղծմանը: Ինովացիաներն օժտված են բազմատեսակ հատկություններով, այսինքն՝ այն ինչ առկա ռեսուրսներով դրական փոփոխություն է առաջացնում արժեք ձևավորելու և ստեղծելու համար, ինովացիա է: Սոցիալական ոլորտում ինովացիաներն իրենց ազդեցությամբ կարող են նպաստել սոցիալական խմբին պատկանող անձանց համար բարենպաստ պայմանների ձևավորմանը, օրինակ՝ ապահովագրության, սոցիալական կացարանների, սոցիալական ուղղվածությամբ միավորումների ստեղծմանը կամ կատարելագործմանը:

Ինովացիաների կառավարումը կարող է հանդիսանալ այն միջոցը, որը հնարավորություն կտա տարբեր գիտելիքների ու հմտությունների տեր անձանց համախմբվել սոցիալական նպատակներ հետապնդող մեկ կազմակերպությունում, որի արդյունավետ աշխատանքը կդիտվի որպես սոցիալական ինովացիա:

ԳԼՈՒԽ 2. ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2.1 Ինովացիոն գործընթացների կառավարման ուղղությունները ՀՀ սոցիալական ոլորտում

Շուկայական տնտեսությունում ինովացիոն գործընթացն ամենաառանցքային խնդիրներից է համարվում: Այն կարելի է դիտել մի գործընթաց, որը ձևավորվում է նորույթի բացահայտմամբ և իրականացմամբ: Անցումային շրջանում ՀՀ-ում մենք հանդիպում ենք պետական, մասնավոր հատվածի թուլացման կամ փլուզման հետևանքով հասարակության որոշ շերտերի ինքնակազմակերպման արտահայտված ձևերին:

Տեխնոլոգիական առաջընթացն ու արագընթաց գլոբալացումն անհրաժեշտություն են առաջացնում ազգային անվտանգության ռազմավարության պարբերական վերանայմանը և համապատասխանեցմանն արտաքին և ներքին միջավայրերի վերափոխվող պահանջներին: Այդ պատճառով ինովացիոն տնտեսության ձևավորումը համարվում է դինամիկ գործընթաց և պահանջում է պարբերական վերանայում: Գաղտնիք չէ, որ սոցիալական քաղաքականությունն իր գործունեության բնույթով բավականին ծախսատար է, և սոցիալական համակարգի զարգացումը պահանջում է զգալի ներդրումներ: Որքան ծավալուն և բազմաթիվ են իրականացվող սոցիալական ծրագրերը, այնքան շատ ֆինանսական միջոցներ են պահանջվում: Արդյունքում, սոցիալական համակարգում կատարվող ծավալուն ներդրումներն արդյունավետ են սոցիալական պետության զարգացման համար:

2000թ. Եվրամիության երկրներում արդյունաբերական կառույցների 47%-ն ունեցել է ինովացիոն ուղղվածություն: 1998-2000թթ. Եվրամիության համապատասխան գործընթացներում ընդգրկված արդյունաբերական կազմակերպություններում ինովացիաների շնորհիվ տեղի է ունեցել 19% շրջանառության աճ, իսկ ծառա-

յությունների մատուցման ինովացիոն ձեռնարկություններում գրանցվել է 18% շրջանառության աճ³⁵:

Արևմտյան և ՌԴ տնտեսագետները կատարել են ինովացիոն տնտեսության, ձեռնարկությունների գործնական խնդիրների հետ կապված բազում ուսումնասիրություններ: Ըստ Ա. Յանի և Գ. Ժուի զարգացող երկրներում ինովացիաների իրականացման նպատակով շատ կարևոր է արտասահմանյան գործընկերոջ առկայությունը, այն շատ հաճախ ապահովում է մի շարք առավելություններ, օրինակ, տեխնոլոգիական, արտադրական և անհրաժեշտ կառավարման փորձ: Միևնույն ժամանակ արտասահմանյան գործընկերները կարող են հետաքրքրված լինել այդ ծրագրերի ներդրման բարձր շահութաբերությամբ³⁶:

Այժմ ՀՀ-ում նկատվում է կառավարության ակտիվացում ինովացիոն տնտեսությանն առնչվող հիմնախնդիրների բացահայտման և կարգավորման ուղղությամբ: Ձևավորվել են ինովացիոն տնտեսության մարտահրավերները³⁷: 2006թ.-ից սահմանվեցին ՀՀ-ում ինովացիոն գործընթացների կարգավորման ու աջակցման իրավական հիմքերը՝ ՀՀ օրենքով ու կառավարական որոշումներով: ՀՀ նախագահը ստորագրեց շուկայական հարաբերությունների խորացման ինովացիոն, գիտարար, որոշ ճյուղերի խթանման ուղղությամբ և արտահանման հետ կապված հրամանագիրը³⁸:

Երկրի տնտեսական անվտանգության առաջնային երաշխիքը կայուն տնտեսությունն է, որտեղ գիտելիքահենք արտադրությունը երաշխավորում է առավելագույն արդյունք՝ նյութական ու աշխատանքային հնարավոր քիչ ծախսերով: Տնտեսության անվտանգության համար անհրաժեշտ է հաշվի առնել ինովացիոն ներուժը, դրա արդյունավետ օգտագործման մակարդակը, համապատասխանությունը միջազգային չափանիշներին, շուկայական մրցունակությունն ու սոցիալական

³⁵ Geoff Mulgan and David Albury “Innovation in the public sector” 09 October 2003, p. 40.

³⁶ Yan A., Zhu G., & Hall, D.T. “International assignments for career building: Agency relationships and psychological contracts” Academy of Management Review. 27(3), 2002, p. 391.

³⁷ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Գիտելիքի տնտեսության ձևավորման հայեցակարգի» նախագիծ, էջ 7:

³⁸ ՀՀ նախագահի 2007թ. փետրվարի 07-ի «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» Հրամանագիր, ՆՀ-37-Ն, 2 կետ, 5 ենթակետ էջ 2:

կայունությունը: Այն կարող է գնահատվել ցուցանիշների ամբողջական համակարգով, որտեղ ընդգրկված է նաև տնտեսական անվտանգության ցուցանիշը:

ՀՀ-ի տնտեսության անցումը որակական նոր չափանիշների ենթադրում է համապատասխան ինովացիոն գործունեության ակտիվացում, դա պահանջում է հստակ և հիմնարար փոփոխություններ կրթության, հասարակական արտադրության, աշխատուժի կազմի և այլ կառուցվածքներում³⁹: Տարիներ շարունակ ՀՀ-ի առջև դրված ինովացիոն տնտեսություն կառուցելու խնդիրը, հիմնականում բարձրացվում էր զեկույցների տեսքով, բացակայում էր հարցի լուծման ամբողջական հայեցակարգային ու ծրագրային ապահովումը, որի ուղղությամբ ներկայումս ակտիվ գործընթացներ են ձեռնարկվում:

Սոցիալական բևեռացման ցուցանիշներով հետխորհրդային երկրների ցանկում ՀՀ-ը զբաղեցնում է առաջին հորիզոնականներից մեկը: ՀՀ սոցիալական ոլորտում գործող, տարբեր ծրագրերը, հիմնականում ուղղված են ընտանեկան նպաստների, խնամքի, սպասարկման, հաշմանդամություն ունեցող անձանց կրթությանը աջակցելուն:

Այնուամենայնիվ, ՀՀ-ի համար սոցիալական քաղաքականության և ինովացիոն ներուժի կառավարման հիմնական նպատակն անհրաժեշտ է ուղղել երկրի մտավոր, գործարար հատվածի զարգացմանն ու ձևավորմանը, որոնք համապատասխան կլինեն մարդկային կապիտալի ընդլայնված վերարտադրությանն ու շուկայական տնտեսությունում սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրների լուծման պահանջներին: Վերոնշյալների բացակայության դեպքում չի լինի սոցիալական կայունության ապահովման նախադրյալների ձևավորում:

ՀՀ սոցիալական համակարգի ինովացիոն ծրագրերի իրականացումն ու կառավարումն այսօր բարդ խնդիր է համարվում, պատճառներից մեկն էլ այն է, որ սոցիալական համակարգում նորագույն լուծումներ պահանջող խնդիրները բազմաթիվ են: Աղքատության կրճատումն ու աշխատատեղերի ստեղծումը, և ընդհանրապես սոցիալական պաշտպանության վերաբերյալ հարցերը դեռևս խնդրահարույց են ՀՀ-

³⁹ Կատինյան Ա.Ռ., Սոցիալական ոլորտի ինովացիոն գործունեության որոշ հիմնախնդիրներ, գիրք - Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա ՀԱՆԴԵՍ, ISSN 1829-0787, Երևան, #4 (142) Ապրիլ 2012, էջեր 16-18:

ում: Մեր տնտեսությունը մեծապես կապված է ինչպես սփյուռքից փոխանցվող դրամական միջոցներից, այնպես էլ Վրաստանի, Իրանի տարածաշրջանով իրականացվող ներմուծումներից: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանն առավել խոցելի դարձավ: Սոցիալական համակարգում բարեգործական բնույթի ծրագրերը ՀՀ-ում ֆինանսավորվում են հիմնականում երկու աղբյուրներից՝ միջազգային կազմակերպությունների և սփյուռքի կողմից հատկացվող միջոցներից և նվիրատվություններից: Ֆինանսական ճգնաժամի պայմաններում, երբ այս երկու աղբյուրներն էլ անկում են ունենում, Հայաստանը կարող է դիմակայել իր ներքին աղբյուրների շնորհիվ, օրինակ, սոցիալական ինովացիոն ծրագրեր իրականացնելով կամ խոցելի խմբերի համար նոր աշխատատեղեր ստեղծելով: Սոցիալական քաղաքականությունը և ինովացիոն ներուժը պետք է ուղղել ինովացիոն ծրագրերի ներդրմանը, որոնց միջոցով շահառուներին հնարավորություն կընձեռվի արդյունավետ փոփոխություններ կատարել և հաստատել անհրաժեշտ սոցիալական կայունություն:

Ըստ միջազգային տվյալների, արտասահմանյան կորպորացիաների կողմից իրականացվող ինովացիաները մշտապես աճում են⁴⁰: Արդյունքում, տեղական այն կազմակերպությունները, որոնց ձևավորումն ու զարգացումը նպաստում են տնտեսական և միջազգային ինտեգրման գործընթացին, հետագայում նոր որակական զարգացման մաս կարող են կազմել: Տեղական կորպորացիաները, որոնք զբաղվում են ինովացիոն ծրագրեր իրականացնելով՝ իրենց գործունեությամբ միջազգային արտադրության մաս են կազմում: Սոցիալական ոլորտում նմանատիպ կորպորատիվ գործընթացները բնականոն երևույթ են, և գործում են տասնյակ երկրներում տարբեր կորպորացիաների մասնաճյուղերի միջոցով՝ առաջնորդվելով մեկ միասնական ֆինանսական ու գիտաարտադրական ռազմավարությամբ: Վերջիններս ընդգրկում են զգալի գիտաարտադրական և համապատասխան շուկայական ներուժ, ինչն ապահովում է զարգացման բարձր դինամիկա⁴¹: ՀՀ-ում սոցիալական ոլորտի քաղաքականությունը մշակում, իրականացնում է համապատասխան նախարար-

⁴⁰ Geoff Mulgan and David Albury “Innovation in the public sector” 09 october 2003, pp. 3-5.

⁴¹ International Organization for Standardization (ISO) COPOLCO. 2002. The Desirability and Feasibility of ISO Corporate Social, <http://www.iso.org/iso/home.html> [10.10.2014թ. դրությամբ]:

րությունը: Նախարարությունն իր լիազորությունների սահմաններում համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ, այնպիսիք ինչպիսիք են՝ «ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը», «Համաշխարհային Բանկը», «Եվրոպայի Խորհուրդը», «Անկախ պետությունների համադաշնությունը» և այլն⁴²:

Ծրագրերն իրականացվում են հիմնականում օրենսդրական դաշտի համապատասխանեցման, զբաղվածության քաղաքականության, սոցիալական պաշտպանության ուղղություններում, ինչպես նաև հիմնականում սոցիալական այնպիսի ծրագրերում, որոնք թեև, այդ պահին ինովացիոն չեն, սակայն դրանք շարունակական դարձնելու նպատակով ակնկալվում է հետագայում համապատասխան միջոցներ ստանալ ՀՀ կառավարությունից:

Զարգացող երկրների համար նմանատիպ համագործակցությունները կարևորվում են, սակայն ՀՀ-ի համար դրանք առավել արդյունավետ կլինեն կառավարության անմիջական միջամտության, ինովացիոն ծրագրերի ներդրման ու իրականացման տարբերակում: Ինովացիոն ծրագրերի իրականացման գործընթացում տվյալ երկրի իրավական դաշտի կատարելագործումն ու համապատասխանեցումը նպաստում է այդ համագործակցությանը: ՀՀ-ում ֆինանսական միջոցների բացակայությունը խնդիր կառաջացնի սոցիալական ոլորտում նմանատիպ ծրագրերի իրականացման համար: Ուստի, ՀՀ-ի համար միջազգային հատվածի հետ համագործակցության անհրաժեշտություն է առաջանում:

Բազմաթիվ երկրներում պետությունը սոցիալական և արտադրական ոլորտներում աջակցում և առաջ է մղում հետազոտող կազմակերպությունների գործունեությունը: Նմանատիպ համագործակցության արդյունքում ակնկալվում են տնտեսական ակտիվության ցուցանիշների բարձրացում:

ՀՀ գիտահետազոտական կառույցներում իրականացվող նմանատիպ գործընթացներն ընդգրկում են տեսական, կիրառական հետազոտությունների լայն շրջանակ: Ներկայումս դրանք ինտեգրված են, և ակտիվորեն համագործակցում են տարբեր միջազգային կառույցների հետ, սակայն այդ կազմակերպությունների կողմից լայնածավալ և բազմակողմանի գործունեություն ծավալելու համար խոչընդոտ են


⁴² <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=26632> [10.10.2014թ. դրությամբ]:

հանդիսանում ինստիտուցիոնալ և տեխնիկական բազայի արդիականացման հետ կապված լուրջ հիմնախնդիրները:

Ներկայացնենք ՀՀ-ում տնտեսական ակտիվության ցուցանիշները 2017թ. հունվար-ապրիլ ամիսներին (տե՛ս գծապատկեր 4):

Գծապատկեր 4.

2017թ. տնտեսական ակտիվության ցուցանիշը,
ըստ հունվար-ապրիլ ամիսների⁴³



Ըստ հրապարակված տվյալների ակնհայտ երևում է, որ ՀՀ-ում տնտեսական ակտիվության ցուցանիշը մի քանի ամիսների կտրվածքով անընդհատ տատանվում է: Հասարակության ներկա սոցիալական կայունության տեսանկյունից նմանատիպ պատկերի առկայությունը բնական է:

ՀՀ-ում սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի ներդրման և հետագա զարգացման համար էական արտոնություններ սահմանված չեն: Այս բնագավառի գործունեությունը ենթարկվում է երկրի ներդրումային և հարկային ընդհանուր դաշտին, ինչը խթանների բացակայության տեսակետից խոչընդոտում է ՀՀ-ին լինել մրցունակ, այդ թվում՝ հարևան երկրների նկատմամբ: ՀՀ սոցիալական ոլորտում որոշակի գործունեություն ծավալելու նպատակով հատկացվող ռեսուրսները սահմանափակվում են պետական բյուջեից տրամադրվող փոքր ֆինանսական միջոցներով, մի քանի

⁴³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, ՀՀ ԱՎԾ 2016թ. Տնտեսական ակտիվության ցուցանիշի տվյալների հիման վրա, <http://www.armstat.am/am/?nid=126&id=01510> [01.05.2017թ. դրությամբ]:

դրամաշնորհային աղբյուրներով և սակավաթիվ արտասահմանյան ծրագրային ներդրումներով:

Գիտության զարգացումը նպաստում է կառավարչական գործունեության, տարածաշրջանի սոցիալական ինովացիաների զարգացման ակտիվացմանը և փոխվստահության մթնոլորտի ստեղծմանը: Պատահական չէ, որ ինովացիան տեխնիկական գիտություններից ներթափանցել է սոցիալական ոլորտ, և դարձել է անհրաժեշտ բաղադրիչ՝ համապատասխան փոփոխության, ոլորտի կառավարման, սոցիալական ծրագրերի բարեփոխման նախագծերի համար: Ինովացիոն քաղաքականություն իրականացնող երկրներում, սոցիալական ինովացիաների ներդրումն ու կիրառումը համարվում է օրակարգային ուղղություն: Սոցիալական ոլորտի զարգացմանն ու կայունացմանը զուգընթաց բարձրանում են նաև բնակչության բարեկեցության մակարդակը:

ՀՀ սոցիալական քաղաքականությունը դեռ կայացման փուլում է գտնվում, իսկ առկա բացթողումներն արդյունք են ՀՀ տնտեսության, սոցիալական քաղաքականության միասնական հայեցակարգի, ինովացիոն ծրագրերի և գործընթացների կառավարման համակարգերի բացակայության: ՀՀ սոցիալական համակարգում ինովացիոն ծրագրերի զարգացումն ու իրականացումը էապես խթան կհանդիսանա ոլորտի ակտիվացման և միջազգային կառույցների հետ համագործակցության համար:

ՀՀ-ում գիտատեխնիկական աջակցության կարիքն այսօր ունեն նաև այլ ոլորտներ: Համաչափ զարգացման տեսանկյունից, մեր կողմից կարևորվում է ՀՀ սոցիալական ոլորտի տարածաշրջանային զարգացման ընթացքի արագացումը: Ազգային ինովացիոն տնտեսության ստեղծման տեսանկյունից անհրաժեշտ է բարենպաստ պայմանների առկայությունը, այլ միջոցառումների ձեռնարկումը և եղած գիտական ներուժի նպատակային օգտագործումը, ինովացիոն գործընթացի իրականացման բոլոր փուլերում կառավարության և մասնավոր հատվածի մասնակցության խթանումը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցների հատկացում և համապատասխան արտոնությունների սահմանում, սոցիալական ոլորտում գիտական ուղղվածությամբ հետազոտությունների և համապատասխան մշակումների համար:

Անհրաժեշտ է որոշակիացնել տնտեսության, սոցիալական համակարգի զարգացմանն ուղղված կառավարման լծակները: Սեփական տնտեսության կայունացման և զարգացման համար ինովացիաների կիրառումը բնականոն երևույթ է, և համարվում է որպես առավելություն՝ տնտեսության զարգացման և միջազգային կառույցների հետ համագործակցման համար:

2.2 ՀՀ սոցիալական ոլորտի ներուժի կառավարումը, որպես ինովացիաների ներդրման աղբյուր

Զարգացած երկրներում սոցիալական քաղաքականության շրջանակներում կառավարությունը հատուկ ուշադրության է արժանացնում բնակչության անապահով հատվածին:

Ինչպես բոլոր անցումային ժամանակահատվածում գտնվող երկրներում, այնպես էլ ՀՀ-ում տնտեսական զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ տատանումներ և ճգնաժամեր են ընթացել: Սոցիալական պաշտպանության բնագավառում տարբեր ծրագրերի տեսքով աջակցություն տրամադրելն այն սակավաթիվ գործառույթներից է, որն օգտագործվում է որոշակի ժամկետներում՝ պաշտպանելու բնակչության այն խոցելի խմբերին, ովքեր հիմնականում չունեն կողմնակի եկամուտ կամ համապատասխան աշխատանք:

Ներկայումս ՀՀ կառավարությունն իրականացնում է սոցիալական համակարգում տարբեր բարեփոխումներ⁴⁴: Այն պետք է հիմք ծառայի ֆինանսական ինստիտուտների ընդհանուր գործունեության, քաղաքականության վերանայման համար: Անկախ այն հանգամանքից, որ պետական կառավարման համակարգում առկա են որոշակի ձեռքբերումներ, դեռևս Հայաստանում մենք հանդիպում ենք բազմաթիվ բացթողումների ու թերությունների հետ, որոնք արգելում են առկա ռեսուրսները հնարավորինս նպատակային ու թափանցիկ օգտագործել, ինչը ոչ արդյունավետ պետական քաղաքականության հետևանք է: Ֆինանսական տեսանկյունից սոցիալական ոլորտում հարկավոր են ավելի խորքային վերափոխումներ, որոնք խթան

⁴⁴ Կատինյան Ա.Ռ., ՀՀ սոցիալական ոլորտի զարգացման հիմնախնդիրները և ինովացիոն ներուժի գնահատումը, ԵԿՏԱ-ի գիտական հոդվածների ժողովածու 2 (02), Երևան, 2013, էջեր 18-22:

կհանդիսանան սոցիալական քաղաքականության նպատակային հեռանկարների իրականացման համար⁴⁵:

Կոնկրետ ոլորտում որևէ հիմնախնդրի լուծումը ենթադրում է նոր միջոցների մշակում ու տրամադրում: Լայն իմաստով, սոցիալական քաղաքականությունն ուղղված է բնակչության սոցիալական կայունության ապահովմանը և հավասար պայմանների ստեղծմանը:

Սոցիալական ոլորտի ինովացիաներից են՝ սոցիալական կացարանները, ծերապարտեզները, սոցիալական ձեռնարկությունները, այլընտրանքային վճարովի տուն ինտերնատները և այլն: ՀՀ ազգային ինովացիոն համակարգի մեկնարկման հիմնական նպատակը ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումն է: Բացի դրանից ինովացիոն ռազմավարությունը ենթադրվում է ուղղորդել այն ոլորտներ, որոնք հնարավորություն ունեն իրականացնել ինովացիոն ծրագրեր և հստակ գործողություններ, որոնք կհամապատասխանեն միջազգային ստանդարտներին, քանի որ ՀՀ սոցիալական ոլորտի կայունացման և զարգացման համար ակնկալվում է միջազգային փորձի կիրառումը:

Գիտատեխնիկական գործունեությունից ստացված արդյունքների կիրառմամբ ստեղծված և ձևավորված տեխնոլոգիաներն ինովացիոն գործընթացների կառավարման հիմնական ռեսուրսներն են համարվում: ՀՀ-ում նմանատիպ արդյունքների ներգրավումը սոցիալական համակարգ՝ դիտվելու է տնտեսության և սոցիալական ոլորտի զարգացման ներուժ:

Բազմաթիվ երկրներում ինովացիոն տնտեսության ստեղծման համար մարդկային ներուժի զարգացման և ինովացիոն քաղաքականության ուսումնասիրությունների արդյունքները փաստում են, որ ինովացիայի առկայությունը, առաջացումն ու տարածումը որոշակի ոլորտում, գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ, ենթադրում է կրթական ու գիտական համակարգի համապատասխանեցում, ինչպես նաև այլ գործոններ, մասնավորապես, փոխադարձ կապը կազմակերպությունների,

⁴⁵ Сажина М.А., Чибриков Г.Г., Экономическая теория, Учебник для вузов, Москва, Норма - ИНФРА-М, 1998, с. 10-20.

արտադրողների կամ սպառողների միջև, ֆինանսավորման միջոցները, պետության կողմից իրականացվող քաղաքականությունը և այլն⁴⁶:

Ինովացիոն գործընթացների նկատմամբ նման սկզբունքներն ու մոտեցումները նպաստում են ինովացիոն տնտեսության ձևավորմանը: ՀՀ սոցիալական ոլորտի ինովացիոն ներուժի մասին ավելի լավ պատկերացում կազմելու և եզրահանգումներ կատարելու նպատակով, մեր կողմից ուսումնասիրվել է ՀՀ սոցիալական կայունության վրա ազդող գործոնների համախումբը:

ՀՀ-ում 1990-ական թվականներին եկամուտների միջև եղած անհավասարությունն ավելի բարձր էր, քան սպառման միջև եղած անհավասարությունը, ինչը փաստում էր, որ հասարակության բևեռացումը՝ ըստ եկամուտների, ավելի խոր էր, քան ըստ սպառման: Տնային տնտեսությունների 2009-2015թթ. հետազոտությունների տվյալների համաձայն աղքատության հիմնական ցուցանիշների միտումը պահպանվել են՝ ըստ սպառման անհավասարության Ջինիի գործակիցը 2015թ.-ին կազմել է 0,279 (տե՛ս հավելվածներ 1 և 2): Ներկայումս աղքատության մակարդակը զգալիորեն տատանվում է ըստ մարզերի (Հայաստանը բաժանված է 10 մարզերի, ք. Երևանի): Բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների ընդհանուր հետազոտության արդյունքների համաձայն, աղքատության կրճատման տեսանկյունից, տնտեսական աճի ազդեցությունը մարզերում հավասարաչափ չի ընթացել: Աղքատության մակարդակն առավել բարձր է սահմանամերձ և գյուղատնտեսության համար ոչ նպաստավոր պայմաններ ունեցող շրջաններում: Սակայն ՀՀ-ի ընդհանուր մասշտաբով 2011թ. համեմատությամբ 2015թ.-ին աղքատության մակարդակը նվազել է 7.4 %-ով: 2011-2015թթ.-ին ՀՀ-ում նկատվել է ծայրահեղ աղքատության նվազման միտումներ տարբեր տեմպերով (տե՛ս հավելված 3): Ծայրահեղ աղքատության ցուցանիշի ցածր կամ բարձր մակարդակն առաջ է բերում տարբեր սոցիալական բնույթի հիմնահարցեր՝ սոցիալական կայունության և տնտեսության հետագա զարգացման համար միջնաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում իրականացվող ծրագրերի ուղղությամբ:

⁴⁶ Mc. Williams A, Siegel D. 2001. “Corporate social responsibility theory of the firm perspective” The Academy of Management Review 26(1), p. 117.

Աղքատության և սոցիալական անհավասարության առկա դինամիկան վկայում է, որ տնտեսությունում սոցիալական քաղաքականությունն անհրաժեշտ է նպատակային ուղղել այնպիսի սոցիալական ինովացիաների կիրառմանը, որոնք կարող են նպաստել խոցելի խմբերի եկամուտների աճին և այս մեխանիզմով աղքատության ու սոցիալական անհավասարության կրճատմանը: Անհրաժեշտ է մշակել տարածքային զարգացման քաղաքականության նոր մեխանիզմներ, որոնք կնպաստեն առկա անհամաչափությունների մեղմացմանը: Աղքատության ցուցանիշները վկայում են բնակչության խոցելի խմբերի կազմը: Այդ տեսանկյունից կարևորվում է հասարակության սոցիալ-ժողովրդագրական այնպիսի ցուցանիշների ուսումնասիրությունը, որոնք բնութագրում են հասարակության խոցելի և սոցիալապես անապահով վիճակը:

ՄԱԶԾ 2005թ. իրականացված «Խոցելի բնակչությունը ՀՀ մարզերում» հետազոտության արդյունքների համաձայն խոցելիության տեսակարար կշիռը մեծ է, երևանում այն կազմում է 31.7% (տե՛ս աղյուսակ 1):

Սոցիալական ոլորտի ներուժի, սոցիալական կայունության հաղթահարման տեսանկյունից և խոցելի խմբերի ներկայացվածության ցուցանիշի կրճատման նպատակով անհրաժեշտ է իրականացնել սոցիալական քաղաքականության հետևյալ ուղղությունները.

- գյուղական բնակավայրերի և համայնքների զարգացման ծրագրերի իրականացում,
- սահմանամերձ բնակավայրերում սոցիալական օժանդակության տրամադրում,
- ինովացիոն ծրագրերի մշակման և իրագործման նպատակով արտոնությունների սահմանում և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղքատությունը կապված է տնտեսական, քաղաքական և սոցիալական գործոնների հետ, աղքատության հաղթահարման քաղաքականությունը կենտրոնացվում է տնտեսական զարգացման ուղղությամբ՝ նպատակաուղղված լինելով բարձրացնելու բնակչության խոցելի խմբերի կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության մակարդակները, ինչպես նաև բարելավել իրավիճակն աշխատաշուկայում, որոնց միջոցով հնարավոր կլինի պայքարել սոցիալական անապահովության և անհավասարության դեմ:


Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում⁴⁷

Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում % մարզի բնակչության թվում									
	Հաշմանդամություն ունեցող անձիք, այդ թվում երեխա	Ծնողազուրկ երեխաներ	Միայնակ ծերեր	Գործազուրկներ	Տարեցներ	Բազմազավակ ընտանիքներ	Փախստականներ	Նպաստառուներ	Խոցելիության համաթիվ
ք. Երևան	4.4	2.1	9.8	25.0	12.9	4.9	4.6	9.2	31.7
Արագածոտն	3.7	3.1	9.8	16.9	12.0	20.2	5.1	17.5	34.2
Կոտայք	2.6	1.7	6.2	37.1	8.8	14.8	11.0	13.7	38.1
Տավուշ	6.9	5.1	16.2	27.8	15.7	8.0	7.4	21.2	45.6
Լոռի	5.1	3.9	9.6	19.1	11.6	9.0	5.8	29.4	35.5
Շիրակ	4.2	4.8	13.2	18.2	11.8	8.2	1.3	35.9	36.6
Արարատ	3.4	3.1	7.8	14.9	13.1	12.6	17.0	12.4	31.8
Արմավիր	2.9	2.8	9.6	18.3	10.5	13.8	8.6	9.1	30.5
Սյունիք	5.5	5.2	13.2	19.7	12.6	9.6	9.0	14.5	37.5
Վայոց Ձոր	5.6	2.5	7.2	21.9	13.3	13.2	7.0	19.0	35.6
Գեղարքունիք	4.0	1.4	8.4	37.3	12.0	21.4	11.0	23.3	45.5
Ընդամենը ՀՀ	4.2	3.2	10.1	24.2	12.2	12.3	7.2	17.3	36.6

Սոցիալական համակարգի ներուժը կարել է գնահատել տվյալ երկրի բնակչության կենսամակարդակի, կենսապայմանների, ծախսերի կամ եկամուտների ցուցանիշներով, ինչպես նաև մարզերում, համայնքներում բնակչության միջև արտադրական գործոնների հնարավոր հավասար տեղաբաշխվածությամբ: Բնակչության անհավասար բաշխվածության պատճառով միջնաժամկետ ծախսային ծրագրերով նախատեսված միջոցները չեն կարող բաշխվել հավասարաչափ՝ ըստ մարզերի: Ներկայացնենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերը՝ ըստ ոլորտների (տե՛ս գծապատկեր 5):

⁴⁷ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2014/12/14_1459.pdf [10.05.2015թ. դրությամբ]:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
ծրագրերը, ըստ ոլորտների⁴⁸




Բոլորիս էլ հայտնի է ՀՀ ներկա ֆինանսական վիճակը և արդեն իսկ արտաքին աղբյուրներից ստացված վարկային բեռը: Գաղտնիք չէ, որ որոշ ժամանակ հետո կսպառվեն արտաքին աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցները, դեռ ավելին, պետությունը պարտք կմնա այն կառույցներին, որոնք տրամադրել են այն: Նմանատիպ իրավիճակում անհրաժեշտ է պետական մակարդակով իրագործել համապատասխան միջոցառումներ, մասնավորապես, ինովացիոն ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ նմանատիպ ծրագրերի իրացումը կնպաստի երկրի ինովացիոն ներուժի աճին:

⁴⁸ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայք էջի՝ www.mss.am, «Ծրագրեր և նախագծեր» բաժնի տվյալների հիման վրա [01.05.2015թ. դրությամբ]:

Սոցիալ-տնտեսական համակարգի կայունացման և զարգացման նպատակով, համապատասխան միջոցառումների իրագործման քայլերը ներկայացվել է գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 6.

*ՀՀ տարածքային, համայնքային և մարզային մակարդակներում
անհրաժեշտ միջոցառումների իրագործում⁴⁹*




⁴⁹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, կարևորելով և նշելով սոցիալ-տնտեսական համակարգի կայունացմանը և զարգացմանը նպաստող անհրաժեշտ քայլերը:

2016. դրությամբ ՀՀ-ում ուսումնասիրելով աշխատանքի շուկան և անաշխատունակ բնակչության տարիքային կառուցվածքը տեսնում ենք, որ 2016թ. տարեկզբին գործազուրկների ամենաբարձր տոկոսը նկատվում է աշխատունակ տարիքի անձանց շրջանում՝ 67,4%⁵⁰:

Նշված տվյալները ամփոփելու նպատակով ներկայացվել է գծապատկեր 7-ը:

Գծապատկեր 7.

ՀՀ-ում անաշխատունակ բնակչության տարիքային
կառուցվածքը 2013-2016թթ. (տոկոսային արտահայտությամբ)⁵¹



Սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերը, բնակչության կենսամակարդակն ու տարիքային կառուցվածքը հանդիսանում են սոցիալական համակարգի կարևորագույն ցուցանիշներ: Ուստի ատենախոսության շրջանակներում կարևորվել են հասարակության սոցիալական կայունությունն ու կենսամակարդակը բնութագրող

⁵⁰ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվարին» էջ 47, http://www.armstat.am/file/article/sv_01_16a_141.pdf [05.12.2016թ. դրությամբ]:

⁵¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հետևյալ աղբյուրների տվյալների կիրառմամբ. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվարին» էջ 47, http://www.armstat.am/file/article/sv_01_16a_141.pdf [05.12.2016թ. դրությամբ]:

տարբեր ցուցանիշների ուսումնասիրությունը, ոլորտում իրականացվող բազմազան միջոցառումների ու ծրագրերի ուղղվածության բացահայտումը: Սոցիալական համակարգի զարգացման միտումների բացահայտումը, դիտարկումն և գնահատումը հնարավոր է վերոնշյալ ցուցանիշների շարժընթացի հետազոտմամբ:

Բնակչության կենսամակարդակը, սոցիալական կայունությունը, կյանքի որակը մի կողմից կախված է աշխատանքային ռեսուրսների, սոցիալական վիճակի, մարդկային պահանջմունքների կառուցվածքից, որոնք կարևոր նախադրյալներ են ինովացիոն գործընթացների համար, մյուս կողմից էլ այն կախված է կազմակերպությունների կողմից տվյալ ոլորտում կիրառվող ինովացիաներից, սոցիալական միջավայրից, աշխատանքի վարձատրության չափից, սոցիալական պաշտպանվածությունից, պետական բյուջեով հատկացված միջոցներից:

Ցանկացած երկրի համար տնտեսության և բնակչության սոցիալական կայունության երաշխիքներ անհրաժեշտ են: ՀՀ սոցիալական ոլորտում գիտական ներուժի առկայությունը դրական ազդեցություն կունենա ինովացիոն ծրագրերի կիրառման, զարգացման և սոցիալական բարեփոխումների աշխուժացման ուղղությամբ: ՀՀ-ի համար ներկա փուլում սոցիալական համակարգի զարգացումը և ինովացիոն տնտեսության ձևավորումն ու կառուցումը՝ հիմնված գիտական և ինովացիոն առաջընթացի վրա, կարող է զարգացման լուրջ նախադրյալ հանդիսանալ: ՀՀ-ում կա որոշակի ինովացիոն ներուժի առկայություն, և այն ուղղելով սոցիալական ինովացիաների կիրառմանն ու ներդրմանը կարող է դրական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսության և սոցիալական համակարգի հետագա զարգացման համար:

2.3 ՀՀ սոցիալական ոլորտի ինովացիոն կառավարման և զարգացման ուղղությունները

Այսօր գործնականում չկա մի այնպիսի ոլորտ, որտեղ չեն ընթանում ինովացիոն գործընթացներ: Ազգային ինովացիոն տնտեսություն ձևավորելու համար հիմնական խնդիրներից է համարվում ինովացիոն գործընթացների բաշխումը՝ ըստ ոլորտային հետազոտությունների: Այն պայմանավորված է համապատասխան ոլորտի ուսում-

նասիրության, ինովացիոն գաղափարի այլընտրանքային միջոցների ու մեխանիզմների ձևավորման անհրաժեշտությամբ: Պետական, մասնավոր հատվածի համար այս խնդիրների հաղթահարումը պայմանավորված են ինովացիոն ծրագրերի ֆինանսավորմամբ և համապատասխան գիտելիքներով: Այսինքն, նրանց համար նպատակ են դառնում ինովացիոն գաղափարի ստացումը, նախագծի կարևորության մակարդակն ու ինովացիոն ծրագիրը: Վերջիններս ազդում են ինովացիոն գործընթացի բարդության, կատարողների կազմի, բնույթի, տևողության, մասշտաբի սահմանման, նախագծի կառավարման մեխանիզմի վրա: Այս մոտեցմամբ սոցիալական ոլորտը ինովացիոն ծրագրեր իրականացնելու մեծ հնարավորությունների բացահայտման հետաքրքիր և ներդրումային դաշտ է:

Տնտեսապես զարգացած երկրներում տնտեսական աճի 35-50%-ը ձեռք են բերվում ինովացիոնների արդյունքում⁵²: Սակայն հիմնական դրական սոցիալական արդյունքներն արտահայտվում են բնակչության զբաղվածության բարձրացման, բարձր որակավորում ունեցող աշխատողների միջին եկամուտների ավելացման, նրանց աշխատանքի ստեղծագործական բնույթի մեծացման, մարդկանց հանգստի և կենցաղային արժանավայել պայմանների ապահովման, բժշկական սպասարկման և այլ սոցիալական ցուցանիշներով:

Տնտեսության ակտիվացման շնորհիվ կարգավորվում է բնակչության սոցիալական վիճակը: Զարգացած երկրներում մեկ շնչին ընկնող նյութական բարիքների միջին սպառումը 200 տարվա ընթացքում աճել է երեքից չորս անգամ, այն ժամանակ, երբ աշխատողների աշխատաժամանակի տևողությունը կրճատվել է ավելի քան երկու անգամ⁵³: Սակայն այս դրական միտումը խամրում է բացասական արտաքին արդյունքների ֆոնի վրա, որոնք բնութագրում են կյանքի որակի այնպիսի ոչ նյութական տեսանկյուններ, ինչպիսիք են՝ մարդկանց անձնական եկամուտների

⁵² Короткова Э.М., Антикризисное управление, Государственный университет управления, Москва, ИНФРА-М, 2002, с. 20-21.

⁵³ Генкин Б. М., Экономика и социология труда, Учебник для студентов вузов, Москва, НОРМА, 2007, с. 61-69.

բևեռացման ուժեղացումը, շրջակա միջավայրի վիճակի վատթարացումը, չափազանց մեծ բյուրոկրատիզմը, կոռուպցիան և այլն⁵⁴:

Այսպես, սոցիալական ինովացիոն գործընթացների կառավարման հիմնական դրական արդյունքներն են.

- աջակցում են երկրում ինովացիաների դիֆուզիային՝ ապահովելով հեռանկարային սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը,
- ինովացիոն ներուժի մեծացումը՝ գիտատեխնիկական առաջընթացի արագացումը, սոցիալական ծրագրերի իրականացման այլընտրանքային ձևերի նորագույն մեթոդների ներդրումն ու կառավարումը,
- սոցիալական ծառայությունների որակի բարձրացումը կամ կատարելագործումը:

Ինովացիաները և սոցիալական պաշտպանությունը մշտապես շարունակում են դառնալ ՀՀ կառավարության գործունեության գերակա ուղղություններից մեկը: Սոցիալական պաշտպանությունն ուղղված է երկրում աղքատության ցուցանիշի կրճատմանը և սոցիալական երաշխիքների ապահովմանը: Այն իրականացվում է պետական միջամտությամբ՝ ըստ սոցիալական պաշտպանության առանձին բնագավառների (տե՛ս աղյուսակ 2):

Միջնաժամկետ հատվածում ՀՀ գերակա ուղղությունները նշված են ըստ գերակայությունների նվազման հաջորդականության՝ ելնելով ոլորտում պետական միջամտությամբ կատարված համապատասխան փոփոխություններից: Բարեփոխման գերակա նպատակը սոցիալական համակարգի արդյունավետության բարձրացումն է:

2013-2017թթ. ժամանակահատվածում որպես հիմնական խնդիր են դիտարկվում պետական միջամտությամբ իրականացվող հիմնական սոցիալական ծառայությունների և տրանսֆերտների մակարդակի աճի բարձրացումը, և հետագայում այդ գործընթացը շարունակական դարձնելը: Սոցիալական ապահովության համակարգում առանձին ծրագրերի վճարման հետ կապված, տարբեր ծառայությունների, ծրագրերի գծով նախատեսվում են ծախսերի փոփոխություններ:

⁵⁴ Кибанов А.Я., Баткаева И.А., Мин-во образ. и науки РФ. Госуд. ун-вет управления, Экономика и социология труда, Учебник для вузов, Москва, ИНФРА-М, 2010, с. 17-18.

Պետական միջամտության գերակա ուղղությունները⁵⁵

	Միջնաժամկետ հատվածում սոցիալական ոլորտում պետական միջամտության գերակա ուղղությունները	Հիմնավորում
1.	Պետական կենսաթոշակների գործընթացի շարունակականության ապահովումը	«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք
2.	Շրջանում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության մակարդակի բարձրացում	ՀՀ կառավարության թիվ 1207-Ն 2008 թ. հոկտեմբերի 30-ի որոշում
3.	Կուտակային կենսաթոշակային համակարգի շարունակականության ապահովումը	2014-2017 թթ. ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշում), «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք
4.	Պետական նպաստների շարունակականության ապահովումը	ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, 2014-2017 թթ. ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշում), «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք
5.	Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման հետ կապված մատչելիության ապահովումը և հասարակությանը ինտեգրումը	ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, 2014-2017 թթ. ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշում)

2015թ. սոցիալական պաշտպանության մասով փաստացի պետական բյուջեն կազմում է 378,940.6 մլն. դրամ, 2015թ. նկատմամբ տարեց տարի (2017-2019թթ.) նախատեսվում են ֆինանսավորման միջոցների աճ: Ծախսերի փոփոխությունները պայմանավորված են առանձին նպաստների վճարման, գործազրկության, բնակարանային ապահովման, սոցիալական հատուկ արտոնությունների, ընթացիկ ծախսերի և այլ ծրագրերի ուղղությամբ, ընդհանուր ծախսերի ավելացմամբ (տե՛ս հավելված 4):

Մեր ուսումնասիրության շրջանակներում ներկայացվել են կառավարության կողմից նոր նախաձեռնությունների ֆինանսավորման ծավալները 2016-2019թթ. համար (տե՛ս աղյուսակ 3):

⁵⁵ Նշված գերակայությունները սահմանվել են՝ ելնելով միջնաժամկետ հատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական միջամտության ուղղություններում կատարված փոփոխություններից: <http://www.gov.am/files/docs/2015.pdf> [02.03.2017թ. դրությամբ]:

Նոր նախաձեռնություններ և ծրագրեր 2016-2019թթ.⁵⁶

(մլն. դրամ)

	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.
Սոցիալական պաշտպանություն	414154.8	394.839.1	408.145.1	423.323.0
Նոր ծրագրեր, այդ թվում	18.6	71.2	71.2	71.2
Սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական ներքին պորտալի սպասարկում, «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ	18.2	20.0	20.0	20.0
% ոլորտի նկատմամբ	0.004	0.02	0.02	0.02
Գոյություն ունեցող ծրագրեր	414136.2	394.767.9	408.073.9	423.251.8
% ոլորտի նկատմամբ	99.995	99.98	99.98	99.98

Աղյուսակի տվյալները վկայում են, որ կառավարության կողմից սոցիալական պաշտպանության մասով յուրաքանչյուր տարի նախատեսվում են ֆինանսական միջոցների ինչպես ավելացումներ, այնպես էլ նվազեցումներ: 2016թ. փաստացի պետական բյուջետային հատկացումները՝ սոցիալական պաշտպանության ուղղությամբ, կազմել են 414154.8 մլն. դրամ, իսկ 2017թ. նույն ցուցանիշը կկազմի 394839.1 մլն դրամ:

ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով այլ ոլորտներում նույն միտումն է գրանցվել: Սոցիալական պաշտպանության բնագավառում՝ ծախսերի մասով 2014-2015թթ.-ին նկատվում են ավելացումներ համեմատաժ 2010-2011թթ.-ի հետ (տե՛ս հավելվածներ 5 և 6): Սակայն ինովացիոն ծրագրերը և գործընթացները սոցիալական

⁵⁶ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով հետևյալ աղբյուրները. ՀՀ 2014-2016 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում 2013թ. հուլիսի 4-ի N 740-Ն, էջ 256-265, ՀՀ 2017-2019 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում 2016թ. հուլիսի 7-ի N 723-Ն, էջեր 234-260:


ոլորտում արդյունավետ կազմակերպելու նպատակով, անհրաժեշտ է նախ ճիշտ գնահատել տնտեսության ինովացիոն միջավայրը:

Ներկայումս սոցիալական պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարությունը հիմնականում հանդես է գալիս աջակցողի դերում՝ կենսաթոշակների, նպաստների և դրամական աջակցության տրամադրման տեսքով: Նշենք նաև, որ ՀՀ-ում սոցիալական կայունացման համար նմանատիպ գերակա խնդիրների լուծման կարիք նույնպես կա:


Հայաստանում իրականացվող ինովացիոն գործունեության արդյունավետության և ինովացիոն միջավայրի մասին կարելի է պատկերացում կազմել յուրաքանչյուր տարի կազմվող Գլոբալ նորամուծությունների ինդեքս»-ի միջոցով, որը ամեն տարի հրապարակվում է Կոռնելյան ինստիտուտի, INSEAD բիզնես դպրոցի և ինտելեկտուալ սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից (տե՛ս գծապատկերներ 8 և 9):

Գծապատկեր 8.

Աշխարհում առաջին տասը ինովացիոն երկրները (բալ 100 հնարավորից)⁵⁷



⁵⁷ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով հետևյալ աղբյուրները. European Commission “Directorate-General for research and innovation”, “Marie Curie actions: where innovative science becomes success”, Luxembourg, 2012, p. 69.

Հայաստանի գլոբալ ինովացիոն ինդեքսը (2007-2010)⁵⁸

Գլոբալ ինովացիոն ինդեքսը տալիս է գնահատական աշխարհի 142 տնտեսական համակարգերի մասին 84 ցուցանիշների միջոցով, որոնք ներառում են կրթությունը, միկրոֆինանսավորման հասանելիությունը՝ միաժամանակ գնահատելով ոչ միայն ինովացիայի պոտենցիալը, այլ նաև չափելի փոփոխությունները:

Ինովացիաներն այս երկրներում արվել են տարբեր ոլորտներում, սակայն առավել զերակշռող մաս են կազմել տեխնոլոգիական, արդյունաբերական և սոցիալական ոլորտները: Շուրջ 84 ցուցանիշների վերլուծության շնորհիվ 100 հնարավոր միավորներից որոշվում են տվյալ երկրի միավորները: Հայաստանը շարունակական աճ է գրանցել:

Ըստ վերլուծության Հայաստանի տնտեսության ուժեղ կողմերից են հեշտ բիզնես սկսելու հնարավորությունները, կապիտալի համախառն կուտակումը, միկրոֆինանսական կազմակերպությունների ձևավորումը, համախառն վարկային պորտֆելը, գիտատեխնիկական առաջընթացը և այլն: Թույլ կողմերից են շուկայում մրցակցության ցածր մակարդակը, բարձր և միջին տեխնոլոգիաների արտադրության ցածր ծավալները, համալսարան-արտադրություն հետազոտական համագործակցության բացակայությունը և այլն⁵⁹:

⁵⁸ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով հետևյալ աղբյուրները. Եվրոպական բիզնես դպրոցի և հետազոտական կենտրոնի հրապարակած Global Innovation Index «Գլոբալ նորամուծական ինդեքս-2011 Համաշխարհային տնտեսական ֆորում», գլոբալ մրցունակություն Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2010թ., էջ 113, <http://www.globalinnovationindex.org/content.aspx?page=interactive-SW> [02.06.2013թ. դրությամբ]:


⁵⁹ European Commission “Directorate-General for research and innovation”, “Marie Curie actions: where innovative science becomes success”, Luxembourg, 2012, pp. 69-70.

Միջազգային տվյալների համեմատությունները ցույց են տալիս, որ բազմաթիվ երկրներում 2009-2015թթ. իրական գործազրկության մակարդակը տատանվել է: ՀՀ-ում 2013թ.-ի համեմատ 2015թ.-ին գործազրկության մակարդակը աճել է 2.3%-ով: Նույնամյան ցուցանիշ է գրանցվել նաև ԱՊՀ տարբեր երկրներում (տե՛ս հավելվածներ 7 և 8): Նմանատիպ ցուցանիշը որոշակիորեն կապված է նաև ՀՀ-ում տնտեսական ակտիվության ցուցանիշի նվազման հետ: Գործազրկության մակարդակը սոցիալական անկայունության որոշիչ հիմք է հանդիսանում:

1990-ական թթ. սկզբներին զբաղվածության ոլորտի քաղաքականությունը հիմնականում կրում էր պասիվ բնույթ՝ սահմանափակվելով գործազրկության նպաստների տրամադրմամբ: Սկսած 2000-ական թթ., երբ սոցիալական կայունության և աղքատության կրճատման հիմնական գերակայությունները փոխկապակցվեցին աշխատանքի շուկայում առաջացած խնդիրների հետ, կարևորվեց նաև զբաղվածության ոլորտի ակտիվ քաղաքականությունը՝ ուղղված զբաղվածության մակարդակի ավելացմանն ու գործազրկության բարձր ցուցանիշի կրճատմանը: 2015թ. գործազրկության մակարդակի ցուցանիշների ուսումնասիրությունները փաստում են, որ ՀՀ առանձին մարզերում դրանք տարբեր են (տե՛ս գծապատկեր 10):

Գծապատկեր 10.

Գործազրկության մակարդակը ՀՀ մարզերում և ք.Երևանում 2015թ.⁶⁰



⁶⁰ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով հետևյալ աղբյուրները.
http://www.armstat.am/file/article/f_sec_2_2015_4.pdf, [20.01.2016թ. դրությամբ] և
http://www.armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf [20.01.2016թ. դրությամբ]:


Վերլուծություններն ամբողջացնելու նպատակով՝ մեր կողմից ներկայացվել են նաև գործազուրկների կազմն ըստ տարիքային խմբերի և կրթության (տե՛ս գծապատկերներ 11 և 12):

ՀՀ-ում գործազրկության բարձր ցուցանիշ գրանցվել է բնակչության 35-44 տարիքային խմբի անձանց շրջանում՝ 25,20%: Անկախ մասնագիտությունից և զբաղեցրած պաշտոնից, այս տարիքային խմբում անհատը հնարավորինս մասնագիտացված է իր աշխատանքում և գիտի իր պարտականությունները, այսինքն՝ անհատի աշխատանքի արտադրողականության ցուցանիշը բարձր է, որն էլ կարևոր նախադրյալ է հանդիսանում տվյալ կազմակերպության ընդհանուր աշխատանքի արտադրողականության բարձրացման համար:

ՀՀ-ում վերոնշյալ բարձր ցուցանիշների կրճատման նպատակով, կարևորվում են սոցիալական ինովացիաների, ինովացիոն ծրագրերի կիրառումն ու զարգացումը, որը կնպաստի նաև սոցիալական տարբեր խմբերին պատկանող անձանց շրջանում գործազրկության բարձր մակարդակի կրճատմանը:


Գծապատկեր 11.

*Գործազուրկների կազմն ըստ տարիքային խմբերի 2015թ.
(տոկոս ամբողջի մեջ)⁶¹*



⁶¹ http://www.armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf, [21.05.2016թ. դրությամբ]:

Գործազուրկների կազմն ըստ կրթության 2015թ.

(% ամբողջի մեջ)⁶²

Ըստ տնտեսագիտական հաշվարկների վերջին 100 տարիների ընթացքում գործնական հարաբերություններում փոխվստահությունը կրկնակի պակասել է⁶³: Արտաքին գործոնների հետևանքով ծագող մասնավոր ու հանրային ծախսի և եկամտի միջև առաջացած ճեղքվածքը շուկայի կողմից չի կարգավորվում: Դա նշանակում է, որ արտաքին աղբյուրների ազդեցության ներքո տեղի են ունենում այդ ճեղքվածքների ձևափոխում, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է պետական միջամտություն: Պետական միջամտության անհրաժեշտության մասին առաջինը գրել է Ա. Պիգուն: Նա առաջարկել է օգտագործել աճող հարկերի և սուբսիդիաների մեխանիզմը: Սահմանային մասնավոր ծախսերի նկատմամբ սահմանային հանրային ծախսերի գերազանցման դեպքում անհրաժեշտ են ապրանքների վրա սահմանել լրացուցիչ ծախսերի չափով հարկ՝ այսպես կոչված «Պիգուի հարկ», որպեսզի դրա վճարումից հետո մասնավոր ծախսերը հասնեն հանրայինի մակարդակին⁶⁴: Այսպիսի

⁶² http://www.armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf, [21.05.2016թ. դրությամբ]:

⁶³ Шаститко А.Е., МГУ им. М.В. Ломоносова, Экон. фак., Новая институциональная экономическая теория, особенности предмета и метода, Москва, ТЕИС, 2003, с. 10.

⁶⁴ Жильцов Е.Н., Экономика общественного сектора и некоммерческих организаций, Учебное пособие, Москва, Изд-во Моск. ун-та, 1995, с. 87.

հարկատեսակի տնտեսագիտական իմաստը կայանում է ոչ միայն սուբյեկտի կորուստը փոխհատուցելու կամ նույնիսկ պետական բյուջետային մուտքերը ավելացնելու մեջ, այլ նաև շուկայական հավասարակշռությունը հասցնելու այն մակարդակի վրա, որը հասարակության տեսանկյունից ապահովում է բարիքների օպտիմալ արտադրություն, սպառում և գործազրկության մակարդակի կրճատում:

Հարկ է նշել, որ գործունեության ընթացքում կարող են լինել բացասական արտաքին գործոններ, օրինակ՝ մասնագիտական ոչ պրոֆեսիոնալ հմտությունները, աշխատանքի ցածր արտադրողականությունը, օրենսդրական բազայի բացակայությունը կամ բացթողումները, մասնագետների պակասը և այլն:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ սոցիալական քաղաքականության միջոցով իրականացվող և նախատեսված բազմաթիվ միջոցառումներ և ինովացիոն տարբեր ծրագրերի ներդրման փորձեր:

ՀՀ-ը համագործակցում է հիմնականում ՄԱԿ-ի, ՄԶԳ-ի, OECD, Սոցիալական ներդրումային հիմնադրամի և այլ կառույցների հետ⁶⁵: Համաշխարհային բանկի մասնակցությամբ իրականացվող ծրագրերում շարունակվել են ՀՀ և Միջազգային զարգացման ընկերության միջև ստորագրված «Սոցիալական աջակցություն» բաղադրիչով իրականացվող աշխատանքները: Նախարարությունը մասնակցել է որոշ հետազոտական աշխատանքային ծրագրերի՝ «Շահառուների ուսումնասիրություն», որն իրականացնում է «Մարքեթինգի Հայկական Ասոցիացիա»-ն, նպատակն է՝ ուսումնասիրել կենսաթոշակային և սոցիալական աջակցության շրջանում իրենց իրավունքների, պարտականությունների վերաբերյալ իրազեկության մակարդակը: Ծրագրի մեկ այլ բաղադրիչը նախատեսում էր վերհանել սոցիալական բնույթի ծառայությունների մատչելիությունը՝ տարածքային գործակալությունների աշխատակիցների կողմից: Այս ծրագրերի իրականացումն, անշուշտ, նպատակ ունի նպաստել մատուցվող ծառայությունների գծով որակի բարձրացմանը, և ապահովել շահառուների գոհունակությունը մատուցվող համապատասխան սոցիալական ծառայությունների ժամանակ:

⁶⁵ <https://www.e-gov.am/gov-decrees/item/21715/> [25.06.2013թ. դրությամբ]:

«Տնային տնտեսությունների հետազոտություն», ծրագրի նպատակն է սոցիալական ծառայությունների գնահատումը և անհրաժեշտ ծառայությունների կարևորության սահմանումը, տնային տնտեսությունների կարիքների գնահատումը, սոցիալական աջակցության այլընտրանքային ձևերի ընտրությունը, ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման բանաձևի ճշգրտումը: «Հանրային ոլորտում բարեփոխումների ծրագրի» շրջանակներում արդեն ավարտվել են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքից բխող մի քանի իրավական նորմատիվ ակտերի մշակումը, մասնավորապես, «Սոցիալական աջակցության խորհրդի կանոնադրությունը», «Սոցիալական աշխատողների տնային այցելությունների կատարման ուղեցույցը» և «Սոցիալական աշխատանքի մասնագետների համար էթիկայի կանոնները»⁶⁶:


Այս փաստաթղթերի ընդունումը, ՀՀ-ին հնարավորություն ընձեռնեց բարձրացնել սոցիալական ոլորտում տարբեր կառույցների հետ համագործակցությունը, մատուցվող ծառայությունների որակը, ամրապնդել սոցիալական աշխատանքի մշակույթի հիմքերը: Փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2317-Ն որոշման մեջ, որով սահմանվել են ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման ընթացքում կիրառվող բնութագրիչները, թվային արժեքները, գործակիցներն ու անհրաժեշտ փաստաթղթերը: Փոփոխություններ են կատարվել սոցիալական խմբերին պատկանող՝ կենսաթոշակառուի և միայնակ կենսաթոշակառուների թվային արժեքների մասով, որտեղ հնարավոր է եղել վերանայել այդ ընտանիքների համար կենսաթոշակի չափը, և մեծացնել նրանց ընտանեկան նպաստի պահպանման հավանականությունը⁶⁷:

Սոցիալական ոլորտում պետական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի ուսումնասիրությունը, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցության շրջանակներում ձեռք բերված տվյալների ուսումնասիրությունները վկայում են, որ ներկայումս ՀՀ սոցիալական համակարգում ցածր է այդ ծրագրերի իրականացման արդյունավետության ուղղությունները: Այն, ներկայացվել է գծապատկեր 13-ում:

⁶⁶ «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման փորձնական ծրագրի հիմնական իրավական ակտերի ժողովածու» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 2013թ. էջեր 3-4:

⁶⁷ http://www.cadastre.am/storage/files/pages/pg_78971163_1.pdf [10.07.2013թ. դրությամբ]:

Սոցիալական համակարգի ցածր արդյունավետության ուղղությունները⁶⁸



Այժմ ՀՀ տնտեսության իրական հատվածը հետազոտական գործունեության ցածր պահանջարկ ունի: Հետազոտական համագործակցությունը կորդինացված չէ, և խթանները նույնպես թույլ են: Արտասահմանյան փորձառու գործընկերների բացակայությամբ ՀՀ-ում էապես դժվար կլինի ակտիվացնել նմանատիպ գործընթաց-

⁶⁸ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից: Ձեռք բերված տվյալները խմբավորելով և առանձնացնելով ցույց է տրվել սոցիալական ոլորտի ցածր արդյունավետության հիմնական ուղղությունները:

ները, քանի որ անիրական է մոտ ապագայում սոցիալական ինովացիոն ծրագրերի ֆինանսավորման ուղղությամբ ակնկալել պետության ակտիվ միջամտությունը:


Ուսումնասիրությունը ամբողջացնելու նպատակով, և հաշվի առնելով ՀՀ սոցիալական ոլորտում առկա ձեռքբերումները, ցածր արդյունավետությունը, բացթողումները և ինովացիոն պոտենցիալը, սոցիալական համակարգի զարգացման ուղղությունները ներկայացվել է գծապատկեր 14-ում:

Գծապատկերը կազմելու համար օգտագործվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև, «Լիարժեք կյանք» Հ/Կ-ի հետ համագործակցության շրջանակներում ձեռք բերված տեղեկատվությունը: 2015թ.-ից սկսած ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության կողմից ընդունվել և գործունեության մեջ են դրվել ինովացիոն զարգացման որոշ ուղղություններ՝ համապատասխան բնագավառում:

ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործունեություն ծավալելու համար կարևոր է հաշվի առնել զարգացած երկրների փորձից բխող հետևյալ հիմնախնդիրները.

- բարենպաստ պայմանների ձևավորում այնպիսի կառույցների համար, որոնք կցանկանան ինովացիոն ծրագրեր իրականացնել սոցիալական ոլորտում,
- ֆինանսական՝ վարկի հասանելիության ապահովման անհրաժեշտություն, բարենպաստ հարկային միջավայրի ձևավորում և ներդնում,
- պետական միջամտությամբ մասնավոր հատվածի վերապատրաստման, ուսուցման, համակարգերի կատարելագործման և տեղեկատվության ապահովում,
- կառավարությունը աջակցելու և հետազոտելու է տարբեր համագործակցության ձևերն ու միջոցները սոցիալական ինովացիոն ոլորտը մեծացնելու նպատակով, մասնավորապես, պետության համագործակցությունը և աջակցությունը մասնավոր կառույցի հետ, ինչի արդյունքում հնարավորություն կլինի ապահովել սոցիալական տարբեր ծրագրերի ներդրման մատչելիությունը:

Սոցիալական ոլորտի ինովացիոն զարգացման ուղղությունները⁶⁹



ՀՀ սոցիալական համակարգը պետք է գրավիչ լինի միջազգային կառույցների կողմից կատարվող ներդրումների ներգրավման, ոլորտում ընդգրկված համապատասխան որակավորում ունեցող անձանց ու մասնագետների համար: Այստեղ էական են բնակչության կենսամակարդակի բարձրացումն ու սոցիալական կայունությունը՝ որպես սոցիալական ոլորտը բնութագրող ցուցանիշներ: Այս են-

⁶⁹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, կարևորվել և առանձնացվել են սոցիալական ոլորտի ինտվագիոն գարգազման հիմնական ուղղութիւնները:

թատեքստում ՀՀ-ի համար հեռանկարային կարող են լինել ոլորտում պետական և միջազգային ֆինանսական միջոցների կենտրոնացումը, որոնք կնպաստեն գիտական առաջընթացի և սոցիալական հեռանկարային ծրագրերի մշակմանը: Կառավարության կողմից նման քաղաքականության իրականացումը հնարավորություն կընձեռնի սոցիալական ինովացիաների ձևավորմանն ու ներդրմանը, քանի որ ՀՀ-ում առկա են այդ գործընթացը կարգավորելու ուղղությամբ անհրաժեշտ բոլոր նախադրյալները:

ԳԼՈՒԽ 3. ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

3.1 ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի կառավարման հեռանկարները և միջազգային փորձի կիրառման հնարավորությունները

Սոցիալական ոլորտում կատարվող ներդրումները ցածր շահութաբերություն են ապահովում, և այդ պատճառով դառնում են քիչ պահանջարկ ունեցող և դժվար հասանելի: Գիտական այլընտրանքային տարբերակների կիրառումը աշխատանքային փոխհարաբերություններում չի ընկալվում միանշանակ: Սոցիալական ոլորտում կատարվող ինովացիաների էությունը առանձնանում է յուրահատուկ գծերով, քանի որ այն ոչ թե պարզ աշխատանքային գործունեության արդյունքում է ձևավորվում, այլ պահանջում է այլընտրանքային մոտեցումներ:

Գործնականում, ընթացող ինովացիոն գործունեության շնորհիվ տեղի են ունենում բազմաթիվ գործընթացներ, որոնք նպաստում են ինովացիոն տնտեսության ձևավորմանը: Ինովացիոն գործունեության միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց ֆինանսավորման գործընթացում առաջանում են որոշ խոչընդոտներ, որոնք պայմանավորված են ինովացիաների ներդրման ու իրականացման ռիսկայնության բարձր մակարդակով: Այս հանգամանքով է պայմանավորված ինովացիաների ֆինանսավորմանն ուղղված այլընտրանքային տարբերակների և ինստիտուտների ստեղծումը: Մյուս կողմից՝ համաշխարհային վիճակագրության տվյալներով, այս ոլորտը բնութագրող միջին ցուցանիշների վերլուծությունը վկայում է, որ ինովացիոն գործընթացներն ապահովում են բարձր շահույթ, ինչը յուրատեսակ հակակշիռ է բարձր ռիսկերի առկայությանը⁷⁰: Գիտության, ոլորտային հիմնախնդիրների լուծման համար, հիմնական ֆինանսական աղբյուրը պետական բյուջեի միջոցներն են, ինչի հաշվին իրականացվում են կադրերի մասնագիտական որակավորման բարձրացում, նպատակային տարբեր

⁷⁰ Olav Naess., Leppilahti A., “Innovation, firm profitability and growth”, STEP Group, OSLO, May 1997, pp. 78-82.

հետազոտություններ ու ծրագրեր: Պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորումն իրականացվում է հիմնականում անվերադարձ և կառավարությունը կարող է ինովացիոն գործընթացների ձևավորման հնարավորություններ ձեռք բերել⁷¹:

Պետական ֆինանսավորումը, որի համարժեքը որոշ երկրներում ընդունված է անվանել նաև դեֆիցիտային ֆինանսավորում, առաջին հերթին իրենից ներկայացնում է պետության կողմից փոխառությունների ներգրավում և դրանց բաշխում՝ ըստ ինովացիոն նախագծերի, ինովացիոն ու գիտական գործունեության սուբյեկտների: Պետությունն այս դեպքում, բնականաբար, երաշխավորում և իրականացնում է պարտքի մարումը: Ինովացիաների պետական ֆինանսավորումը ենթադրում է տարբեր ֆինանսական գործիքների և ֆինանսավորման սկզբունքների կիրառում:

Դրանցից են.

- վերադարձելիության հիմքի վրա պետական բյուջետային վարկավորումը,
- անհատույց բյուջետային հատկացումները,
- պետական նպատակային ինովացիոն ծրագրերի ֆինանսավորումը,
- ինովացիոն ծրագրերի ֆինանսավորումը՝ որպես արտաքին պարտք ներգրավված միջոցների հաշվին:

Ինովացիաների ֆինանսավորման կազմակերպական այս ձևի կիրառման դեպքում, որպես հավանական ներդրողներ, կարող են հանդես գալ օտարերկրյա կառավարությունները, միջազգային ֆինանսական հաստատությունները, ինչպես նաև տվյալ երկրի պետական և մասնավոր կառույցները: Ֆինանսական ռեսուրսների ներգրավումն ու բաշխումը կազմակերպում է երկրի կառավարությունը, ըստ այդմ՝ հանդիսանալով վարկերի վերադարձման գլխավոր երաշխավորը:

Պետության նպատակն է փոքրագույնի հասցնել ռիսկայնությունը, որը սովորաբար բնորոշ է սոցիալական ոլորտում ընթացող ինովացիոն գործընթացներին: Այդ պատճառով տրամադրվող գումարները փոքր են, և հետագայում ավելանում են առաջին դրական արդյունքների առկայության պարագայում: Ներկայումս սոցիալական ոլորտի հատկացումների ավանդական աղբյուրները գործնականում սպառվել են, քանի որ բնակչության, առևտրային բանկերի կողմից վստահության պակասություն

⁷¹ Ղանթարյան Ս. Լ., Ինովացիոն մենեջմենթ, Ոստումնական ձեռնարկ, ԵՊՀ, Երևան, 2007, էջեր 10-15:

ընդգծվում է՝ ոլորտում համապատասխան ներդրումներ կատարելու ուղղությամբ, որովհետև բացակայում են այդ գործընթացը սկսելու համար շահագրգռող միջոցները⁷²:

Վերոնշյալից ելնելով կարևորվել է ներդրումային համագործակցությունը արտասահմանյան կառույցների հետ: Տարբեր երկրներում միջազգային հատկացումները սոցիալական ոլորտում բավականին ակտիվ են: Օտարերկրյա ներդրողների համար առավել գրավչական է արդյունաբերությունը, քանի որ հումքերի վերամշակման զգալի մասը նախնական ներդրումներ չեն պահանջում և մրցունակության ուղղությամբ արտահանվող ապրանքի, մթերումների բավարար հատկությունները ապահովվում են նույնիսկ առանց գիտական առաջընթացի կամ որևէ նվաճումների օգտագործման: Ինովացիոն գործընթացը բարդ, միևնույն ժամանակ անընդհատ զարգացող և փոփոխվող է: Ֆինանսավորման սուբյեկտները հանդիսանում են ֆինանսա-արդյունաբերական կառուցվածքները, տարածքային տարբեր մարմինները, մասնավոր ու միջազգային կառույցները, անհատները և այլն⁷³:

ՀՀ-ում ինովացիաների համար հիմնական ֆինանսավորման միջոցներն են.

- բյուջետային հատկացումները,
- ֆինանսավորման հատուկ արտաբյուջետային ֆոնդերը,
- կազմակերպության, տարբեր միջազգային և հասարակական կազմակերպությունների ռեսուրսները,
- օտարերկրյա, ազգային, գիտական հիմնադրամների միջոցները⁷⁴:

Այսպես, ինովացիաների նպատակը, միջոցները, ֆինանսավորման աղբյուրները կապված են առկա ռեսուրսների և միջավայրի հնարավորությունների հետ: Վերջիններս ազդում են ինովացիոն գործունեության իրականացման ծավալների, սոցիալական շրջանակի ընդգրկման լրիվության և հաջորդականության վրա: Ինովացիայի ֆինանսավորումը ունի իր առանձնահատկությունը, որը անմիջականորեն

⁷² Կատինյան Ա.Ռ., Միջազգային կազմակերպությունների դերը և սոցիալական ձեռնարկությունների ներդրումը Հայաստանի Հանրապետությունում, Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա ՀԱՆԴԵՍ, ISSN 1829-0787, Երևան, #2 (140) Փետրվար 2012, էջեր 56-57:

⁷³ Կատինյան Ա.Ռ., Սոցիալական ձեռնարկությունների խթանման ուղղությունները ՀՀ-ում, Մխիթար Գոշ, գիտական հոդվածներ, ISSN 1829-3085, 2016/2 (45), էջեր 313-316:

⁷⁴ «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2006թ. մայիսի 23-ին, ՀՕ-63-Ն, Հոդված 10:

կապ ունի ներդրվող ինովացիայի բնույթի հետ: Գիտական տեխնոլոգիաների ներդրումը, ինովացիոն ծրագրերի իրացումը նպաստում են երկրի մրցունակ դիրքի ապահովման գործում գերակա նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը: Պետության կողմից անհրաժեշտություն է առաջանում վերհանել այդ գերակայությունները և մշակել դրանց կիրառելու ռազմավարությունը: Պետական միջոցառումները պետք է աջակցեն և շահագրգռեն մարզային, տարածքային, ճյուղային կազմավորումների գերակայությունների ընթացքին և հետագա աշխատանքներին:

Պաշտոնական տվյալները վկայում են, որ ՀՀ գիտական ոլորտում փոքր-ինչ բարեփոխումներ են տեղի ունենում, ավելին, ակնկալվում են պետականորեն նախատեսված շարունակական ֆինանսական աջակցությունը: Սակայն ինչ վերաբերում է սոցիալական համակարգում գիտության աջակցությանը կամ գիտական հիմնավորվածությամբ այլընտրանքային մեխանիզմների կիրառմանը, այստեղ հստակ գործողությունները բացակայում են: ՀՀ-ում սոցիալական քաղաքականության մշակման ընթացքում ինովացիոն մեթոդների կիրառումը էական հիմք կարող են լինել հասարակության սոցիալական կայունացման համար: Այս փուլում, որպես նպատակ սոցիալական ոլորտի ինովացիաները, ուղղվում են հասարակության անապահով խմբի համար լրացուցիչ պայմանների ստեղծմանը, մասնավորապես, սահմանադրորեն հռչակված շրջակա միջավայրի մատչելիության և դրանց կիրարկման ուղղությամբ պետական վերահսկման ապահովմանը: Նմանատիպ պայմանների առկայությունը ենթադրում է անապահով անձանց սոցիալական վարքի ակտիվացում, նվազագույն գիտելիքների ապահովում, այդ իմացությունների կիրառում ու տեղեկացվածության մեծացում: Համապատասխան ոլորտում սահմանված արտոնություններով իրավական ակտերի առկայությունը, ներդրողներին արագ ինտեգրվելու հնարավորություն են ընձեռնում:

Ինովացիոն տնտեսություն ձևավորելու գործընթացում ցանկալի արդյունքի են հասնում այն պետությունները, որոնք առանձնանում են տարածաշրջանային

զարգացման քաղաքականությամբ, համապատասխան օրենսդրության մշակմամբ, ենթակառուցվածքների զարգացմամբ ու ինովացիաների կիրառմամբ⁷⁵:

Սոցիալական ինովացիաներ իրականացնողների և ներդրողների համար սոցիալական ոլորտը առավել գրավիչ դարձնելու ուղղությամբ, անհրաժեշտություն է առաջանում նախ բացահայտել ոլորտում առկա հիմնախնդիրներն ու բացթողումները:

Այսպես.

- ինովացիաների ներդրմանը նպաստող պետական աջակցություն, սոցիալական համակարգի զարգացման ուղղությամբ հայեցակարգային մշակում,
- բնակչության զբաղվածության, ներքին խնայողությունների աճի և գնողունակության մակարդակի բարձրացման ուղղությամբ միջոցառումներ,
- վարկային և հարկային համակարգի կատարելագործում,
- ենթակառուցվածքային համակարգերի և մարզերի համաչափ զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում:


Սոցիալական ինովացիաներն անհրաժեշտ են ցանկացած միջավայրում և հասարակության բոլոր շերտերում: Վերջիններիս հիմնական նպատակը հասարակության պահանջների, կարիքների բավարարումն է և կյանքի որակի բարձրացումը:

Սոցիալական ոլորտի զարգացման համար հիմնական նպատակը պետք է լինի ինովացիոն ծրագրերի ներդրման ուղղությամբ բարենպաստ միջավայրի ապահովումը և երկրի ինովացիոն գրավչության բարձրացումը: ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գրավչության բարձրացման համար նախ հարկավոր է շտկել առկա հիմնախնդիրներն ու բացթողումները, որից հետո փորձել խմբավորել հիմնական բաղադրիչները:

Մեր կողմից խմբավորվել է սոցիալ-տնտեսական համակարգի ինովացիոն գրավչության բաղադրիչները (տե՛ս գծապատկեր 15):

Գծապատկերից երևում է, որ ինովացիոն գործընթացների բաղադրիչները ներկայացված են որոշակի հաջորդականությամբ, որոնք արտահայտում են տարբեր մասերի միջև փոխկապվածությունն ու գերակայությունները:

⁷⁵ Аюзан Е., Пер. с англ. Калининой Е., Решение проблемы инноваций в бизнесе, (The innovator's solution, Creating and sustaining successful growth), Москва, Альпина Бизнес Букс, 2004, с. 30-33.

Սոցիալ-տնտեսական համակարգի ինովացիոն գրավչությունը⁷⁶

Հարկ է նշել, որ ինովացիոն գրավչության բաղադրիչները ընդհանուր օրինաչափ մասեր են, որոնք նախընտրելի կամ գերադասելի կլինեն արտասահմանյան կամ տեղական ներդրումներ իրականացնող անձանց համար: Սակայն հարց է առաջանում, թե ներկայացվածներից, որո՞նք կլինեն նախընտրելի, գերադասելի կամ լրացնող ու օժանդակող ներդնողների համար: Գործնականում հնարավոր է ինովացիոն բաղադրիչների հաջորդականությունը որոշել համակարգային մոտեցմամբ: Կապված ներդնողների տնտեսական և սոցիալական շահերից, կարող են առաջանալ հետևյալ հարցադրումները.

- ինչպե՞ս է սոցիալական համակարգի ներկա վիճակը,
- ինչպիսի՞ն է տվյալ երկրի վարկանիշը ինովացիոն տնտեսության ձևավորման պայմաններում,

⁷⁶ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ կարևորելով սոցիալ-տնտեսական համակարգի ինովացիոն գրավչությունը:

- ներդրումների ի՞նչ պաշտպանության երաշխիքներ կան պետության կողմից,
- քաղաքական կայունությունը ի՞նչ հարթության վրա է գտնվում և այլն:

Արձանագրենք, որ ցանկացած երկրի համար ինովացիոն գրավչության բաղադրիչների դասակարգումը պահանջում են յուրովի մոտեցումներ: Ինովացիոն գրավչության բաղադրիչները պայմանական են, և այն հնարավոր է ենթարկվի համապատասխան փոփոխության՝ կապված տվյալ երկրի ազգային տնտեսության առանձնահատկությունից, սոցիալական համակարգը բնութագրող ցուցանիշներից և ինովացիոն ներուժից:

ՀՀ-ում որակյալ և գիտական մեծ ներուժով աշխատանքային ռեսուրսների առկայությունն ակնհայտորեն կարող են հետաքրքրություն առաջացնել ներդրողների շրջանում՝ ինովացիոն ծրագրեր իրականացնելու համար: Հանրապետության ինովացիոն ներդրումային գրավչությունը կբարձրանա այդ ներուժի օգտագործման նպատակով համապատասխան պայմանների ստեղծման և կատարելագործված օրենսդրության ձևավորման դեպքում: Չլուծված այս խնդիրները հանգեցնում են տնտեսությունում ինովացիոն ակտիվության ցուցանիշի նվազմանը:

Վերոնշյալ դիտարկումները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ ինովացիոն գործընթացների ֆինանսավորման ընթացքում, արտաքին աղբյուրներից ստացվող ֆինանսական միջոցների ներգրավումը, նպաստում են սոցիալական ինովացիոն ծրագրերի ներդրման ու կիրառման ակտիվացմանը:

Կարելի է ասել, որ ինովացիոն գործընթացը սոցիալական ոլորտի անբաժան տարր է, որը ձևավորում է տնտեսության ինքնազարգացման մեխանիզմը⁷⁷: Տնտեսագետները գտնում են, որ նմանատիպ գլոբալ գործընթացները դիտարկվում են դրական և բացասական իմաստով: Դրական են՝ միջազգային կազմակերպությունների ֆունկցիոնալ դերի տեսանկյունից, բացասական են, եթե նրանց կողմից կատարվող ֆինանսական միջոցները ընկալվում են որպես վերահսկելու միջոց⁷⁸:

Բացասական ազդեցությունից խուսափելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր երկիր, որը համագործակցում է այդ կառույցների հետ, հստակ սահմանի

⁷⁷ Կատինյան Ա.Ռ., Ինովացիոն գործընթացների ձևավորումը Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտում, Տեղեկատվական Տեխնոլոգիաներ և Կառավարում, գիտական հոդվածների ժողովածու, ISS 1829-071, Երևան, 2011 էջեր 70-79:

⁷⁸ Ермакова И.В., Протасевич Т.А., Начала экономики, Москва, Вита-Пресс, 2007, с. 3-5.

իր տնտեսական անվտանգության հիմնահարցերը, որոնք վերաբերում են ֆինանսական, քաղաքական և սոցիալական դաշտին: Այդուհանդերձ այսօր որևէ զարգացող երկիր առանց միջազգային կառույցների գրեթե չի կարող առաջ շարժվել, որովհետև վերջիններս աջակցում են տվյալ երկրի տնտեսության կայունացմանը, սոցիալական ոլորտի զարգացմանն ու առկա հիմնախնդիրների կարգավորման գործընթացին:

ՀՀ սոցիալական ոլորտի զարգացման ու կարգավորման համար անհրաժեշտ է կիրառել միջազգային փորձը, որի արդյունքում անհրաժեշտություն է դառնում միջազգային կազմակերպությունների ներգրավումը ՀՀ սոցիալական ոլորտ, որոնք կաջակցեն ինովացիաների ներդրմանը կամ նրանց կողմից կառաջարկվեն և կիրականացվեն համապատասխան ծրագրեր: Նմանատիպ մոտեցման արդյունքում կշարունակվեն սոցիալական ոլորտի բարեփոխումների իրականացումը և սոցիալական ինովացիաների կիրառումը⁷⁹:

ՌԴ-ում մասնավոր և պետական համագործակցության շնորհիվ լուծվում են սահմանափակ կարողություններ ունեցող մարդկանց սոցիալական խնդիրները: Junior Achievement – Young Enterprise կազմակերպությունը Ռուսաստանում կազմակերպել է կրթական ծրագիր-մրցույթ՝ սոցիալական ինովացիաների վերաբերյալ: Ծրագրի մասնակիցները հանդիսանում են 15-18 տարեկան պատանիներ, որոնց առաջարկվում է ներկայացնել սոցիալական ինովացիաներ, որոնք իրենց միջավայրը կարող են դարձնել առավել բարենպաստ: Տնտեսական աճի տեսության առումով՝ Junior Achievement –Young Enterprise կազմակերպության կողմից կազմակերպված կոնֆերանսի ժամանակ, կարևորվում էր ինովացիոն տնտեսության տեսական մեկնաբանումը, մեթոդների մշակումը և նախընտրելի տարբերակի ստեղծումը՝ ելնելով գործընթացի զարգացման աստիճանից: Կոնֆերանսի մասնակիցները առաջարկել են մի շարք նոր մեթոդներ, որոնք կարելի էր տեղայնացնել ՌԴ-ի տնտեսությունում: Ինովացիոն տնտեսություն ստեղծելու համար կարևորվել էր մարդկային կապիտալը՝ որպես հիմնական ռեսուրս: Սակայն նույն տարվա տնտեսական ճգնաժամը երկրորդ

⁷⁹ Կատինյան Ա.Ռ., Ինովացիոն ծրագրերի ներդրման և կիրառման միտումները ՀՀ սոցիալական ոլորտում, Մխիթար Գոշ, գիտական հոդվածներ, ISSN 1829-3085, 2016/2 (45), էջեր 309-312:

պլան էր մղել պետության պլանները նման նորամուծությունների կիրառման հարցում⁸⁰։ Մեծ Բրիտանիայում մտահոգված էին, որ փոքր և նոր ստեղծված կազմակերպությունները մեծ դժվարությամբ են արտաքին ֆինանսավորում ձեռք բերում և կայունանում ոլորտում։ Որպես բարենպաստ պայմաններ պետության կողմից անհատ ներդրողների համար ձևավորվել էր կառավարության կողմից աջակցվող ծրագրեր. պետական հիմնադրամներ, որոնք խրախուսում էին ներդրումներ և ինովացիոն ծրագրեր իրականացնել տարբեր ոլորտներում, սահմանված էին նաև որոշակի հարկային արտոնություններ, որի արդյունքում բավականին դրական միտումներ նկատվեցին։ Մեծ Բրիտանիայում ներդրումների խրախուսման նպատակով կիրառվում էր հարկային արտոնությունների բավականին ընդգծված համակարգ, որն իր մեջ ներառում էր Business Expansion Scheme, Enterprise Investment Scheme և այլ ռեժիմները։ Նմանատիպ բարենպաստ պայմանների այլընտրանքային կիրառումը կապված էր տվյալ կազմակերպության գործունեության ծավալից, հեռանկարներից, արդյունքից և այլն⁸¹։ Ի տարբերություն Մեծ Բրիտանիայի՝ ԱՄՆ-ում վերոնշյալ գործունեությունը խթանելու համար մեկ այլ մոտեցում է կիրառվում։ ԱՄՆ-ում անմիջական աջակցություն են ցուցաբերում մասնավոր հիմնադրամներին՝ խուսափելով պետական հիմնադրամներ ստեղծելուց։ Նմանատիպ մոտեցումը հիմնավորվում է ոլորտում ոչ շուկայական բնույթի մրցակցությունը կանխելով կամ բացառելով⁸²։

Ինովացիոն ծրագրերի խրախուսման Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի փորձերը մասամբ կիրառվել են Եվրոպական մի շարք երկրներում։ Այսպես, Հոլանդիայում կիրառվեց Մեծ Բրիտանիայում իրականացված քաղաքականության օրինակը և սկզբնական շրջանում հիմնական շեշտը դրվեց պետական հիմնադրամների ստեղծման վրա։ Այնտեղ մշակվեցին արտոնություններ, բազմաթիվ ծրագրեր, որոնք պետական կամ ոչ պետական երաշխիքներ են տրամադրում ներդրումներ իրականացնելու համար։ Արդյունքում ուղիղ համեմատական կապ նկատվեց

⁸⁰ Мясникович М.В., Антонова Н. Б., Хорошко О.Б., Государственное регулирование социальной сферы, Учебное пособие для вузов по экономическим и управленческим специальностям, Минск, Акад. управл. при президенте РБ, 2011, с. 4-6.

⁸¹ Piotr Tamowicz "Policy towards private equity and venture capital" Polish Private Equity Association., 30/04/2003, pp. 2-4.

⁸² OECD Science, Technology and Industry Scoreboard: 2009. Paris: OECD, 2009, p. 50.

բարենպաստ պայմանների և ինովացիոն ծրագրերի ներդրման միջև: Ֆրանսիայում և Գերմանիայում հիմնականում կիրառվում են հարկային արտոնություններ սոցիալական ոլորտում ներդրում կատարող և եկամուտ հետապնդող իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Հիմնականում կիրառվում են շահաբաժնի տեսքով ստացվող եկամտի կամ կապիտալի հավելածի հարկային նվազեցումները⁸³:

2006թ-ին «Լիարժեք կյանք» Հ/Կ-ի կողմից հիմնադրվել է Գլոբսիս ՍՊԸ սոցիալական ձեռնարկությունը⁸⁴: Կազմակերպության գործունեությունը դադարել է այն ժամանակ, երբ սպառվել են արտաքին աղբյուրներից ստացվող ֆինանսական միջոցները, պատճառներից են ոչ բարենպաստ պայմանների առկայությունը և հարկային արտոնությունների բացակայությունը: Այդուհանդերձ, մեր երկրում այսպիսի փորձերը մնում են մեկուսացված և լայն արձագանք չեն ստանում:

Միջազգային ուսումնասիրությունների արդյունքում, ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի կիրառման ուղղությամբ կառավարության կողմից որպես բարենպաստ պայման կարելի է օգտագործել ԵՄ երկրների փորձը, այսինքն, օրենսդրական դաշտի կարգավորումը: Ներկայումս պետական հիմնադրամների ստեղծումը ՀՀ-ի համար իրատեսական չէ, քանի որ այն կապված է զգալի ֆինանսական միջոցների կենտրոնացման հետ:

Սոցիալ-տնտեսական համակարգում ծրագրերի կատարման համար, որպես բարենպաստ պայմաններ կառավարության կողմից կարելի է սահմանել պետական աջակցության հետևյալ միջոցները՝ դա ցածր վարկային տոկոսադրույքն է, և իրավական այնպիսի կարգավորումը, որի միջոցով հարկային պարտավորություններից առաջին մի քանի տարիների ընթացքում կազատվեն սոցիալական ուղղվածություն ունեցող, ինովացիոն ծրագրեր իրականացնող կազմակերպությունները: Հետագայում հարկային բեռը կախված կլինի տվյալ կազմակերպության գործունեության ծավալից, կիրառման մասշտաբներից և հետագա արդյունքներից: Պետության կողմից նմանատիպ աջակցությունը կլինի պայմանով, որ տվյալ

⁸³ Benchmarking European tax and legal environments. The European Venture Capital Association, 2004, p. 7.

⁸⁴ http://www.fulllife.am/arm/index.php?option=com_content&view=article&id=75&Itemid=27 [10.02.2015թ. դրությամբ]:

կազմակերպությունում աշխատողների զգալի մաս կազմեն հասարակության խոցելի խմբերին պատկանող անձիք:

ՀՀ կառավարությունը ընտանեկան նպաստի բազային չափը սահմանում է միջին ամսական 16 000 ՀՀ դրամ⁸⁵, այսինքն՝ միջին հաշվարկով մեկ տարվա ընթացքում նպաստառու ընտանիքին պետության կողմից տրամադրվում է 192 000 ՀՀ դրամ: Եթե մեկ ինովացիոն ծրագիր իրականացնող կազմակերպությունում աշխատեն նպաստառու 10 ընտանիքի ներկայացուցիչներ, ապա մեկ տարվա կտրվածքով պետությունը կդադարի նպաստի տեսքով 1 920 000 ՀՀ դրամ տրամադրելուց: Արդյունքում պետությունը կդադարի խոցելի խմբին պատկանող անձին նպաստի կամ միանվագ դրամական օգնության տեսքով միջոցներ տրամադրել, իսկ անապահով անձը ոչ միայն ֆինանսական, այլ նաև հոգեպես իրեն բավարարված և օգտակար կզգա: Սա ևս մեկ միջոց կհանդիսանա որոշ սոցիալական խմբին պատկանող անձանց համար՝ լիարժեք ինտեգրվել հասարակություն: Ինչ վերաբերվում է ինովացիոն ծրագիր իրականացնող կազմակերպությանը, ապա վերջինս օգտվելով նմանատիպ արտոնություններից իր շուկայական դիրքը կամրապնդի և կհետապնդի եկամուտը, ինչի արդյունքում կընդլայնի իր գործունեության ծավալները: Այսպիսի ցուցանիշների առկայությունը կարևոր է բնակչության սոցիալական կայունության հաստատման և մեր երկրի իմիջի բարձրացման համար:

Նմանատիպ տրամաբանությամբ սոցիալական ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծման քաղաքականությունը կնպաստի սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի և ձեռնարկությունների ներդրման ու իրականացման աճին, ինչը կապահովի բարձր սոցիալական էֆեկտ:

ՀՀ սոցիալական ոլորտում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ոլորտում բարենպաստ պայմանների, ակնկալվող շահույթի և ինովացիոն ծրագրերի իրականացման աճը փոխկապակցված են: Սոցիալական ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծմամբ ակտիվանում է ինովացիոն ծրագրերի իրականացումը, ինչի արդյունքում ստացվող սոցիալական էֆեկտը տատանվում է:

⁸⁵ <https://www.e-gov.am/gov-decrees/item/23881/> [10.02.2015թ. դրությամբ]:

Այսպես, ոչ բարենպաստ պայմանների առկայությունը հանգեցնում է սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի ներդրման նվազմանը, և հակառակը: Վերջիններիս փոխկապվածությամբ էլ սոցիալական էֆեկտը նվազում կամ աճում է: Այսպես.

(1)

$$FM\uparrow \rightarrow IP\uparrow \rightarrow SE\uparrow \text{ կամ } FM\downarrow \rightarrow IP\downarrow \rightarrow SE\downarrow$$

ՀՀ սոցիալական քաղաքականությունը պետք է ուղղել ինովացիոն ծրագրերի կիրառման համակարգի ստեղծմանը: Այս առումով կարևորվում են ինովացիաների ներդրման, կարգավորման, կառավարման և վերահսկման իրավական դաշտի վերանայումը, կառուցվածքային և ենթակառուցվածքային զարգացման ու ձևավորման գործընթացները:

Օրենսդրական դաշտի առկա բացթողումների կարգավորումը կնպաստի և կաջակցի ոլորտում պետական և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի կիրառմանը և ինովացիաների դինամիկ զարգացմանը: Միջազգային համագործակցության արդյունքում կիրականացվեն տարբեր սոցիալական ինովացիաներ: Վերջիններիս կիրառումը որոշակիորեն կլուծի խոցելի խմբերին պատկանող անձանց զբաղվածության խնդիրը, նախատեսված ծրագրերի իրականացման արդյունքում կազմակերպությունը կհետապնդի եկամուտ և այդ միջոցները կներդրվեն նոր ծրագրերի իրականացման համար կամ միջազգային վարկային միջոցների առկայության տարբերակում՝ կմարվի պարտքը:

3.2 Սոցիալական գործընկերության խթանման ուղղությունները և կառավարման մեխանիզմները

Զարգացած երկրներում ձևավորված ինովացիոն գործընթացների ուսումնասիրությունը, կիրառման հնարավորությունների բացահայտումն ու սոցիալական կայունության ապահովման հիմնահարցերի մեկնաբանումն այսօր անհրաժեշտություն են, և հետազոտման առարկա են դարձել տարբեր երկրների, գիտահետազոտական խմբերի և տնտեսագետների կողմից: Այս ամենը բխում է նաև ինովացիոն

տնտեսության ձևավորման, սոցիալական ոլորտի զարգացման, կառավարման ու կարգավորման նոր ուղիներ փնտրելու կարևորությունից:

Սոցիալական ինովացիաների աղբյուրը հասարակական ողջ պահանջմունքներն են: Սոցիալական որևէ չլուծված հիմնախնդիրը խթանում է նոր միջոցների մշակումն այդ ոլորտում: Սոցիալական ինովացիաների աղբյուրներ են նաև արտաքին միջավայրի փոփոխությունները՝ առաջացած սոցիալական խնդիրները, հասարակության պահանջմունքների փոփոխությունը, որոնք անհնար է լուծել ավանդական մեթոդներով: Սոցիալական խնդիրների չլուծված լինելը ազդակ է տալիս դեպի նոր նորմերի և միջոցների ստեղծմանը: Ժամանակակից սոցիալական պետությունում հենց սոցիալական ինովացիաները պետք է դառնան կառավարման հիմնական բաղադրիչը և ուղեցույցը, քանի որ նրանք ուղղված են համաչափ, հավասարակշռված զարգացմանը: Ժամանակակից տնտեսությունում սոցիալական ինովացիաները ստեղծում են միջավայր, որը նպաստում է գիտատեխնիկական, տեխնոլոգիական և տեղեկատվական նորարարություններին, նրանց արագացմանը և բարձրացնում է դրանց ազդեցությունը:

Սոցիալական ինովացիայի ձև է սոցիալական գործընկերությունը: Գոյություն ունեն դրա տարբեր սահմանումներ ու բնութագրեր, որոնք սահմանվել են ինչպես օրենսդրական ակտերով, այնպես էլ տարբեր մասնագետների ու միջազգային կազմակերպությունների կողմից:

Սոցիալական գործընկերությունը հասարակական հարաբերությունների առանձնահատուկ ձև է, և սերտորեն փոխկապակցված է կառավարության գործառույթների հետ⁸⁶: Արևմուտքի զարգացած երկրներում գործընկերության կիրառման արդյունքում պետությանը հաջողվում է կարգավորել և լուծել սոցիալական մի շատ հիմնախնդիրներ՝ ոչ միայն պետբյուջեի միջոցների հաշվին, այլ նաև՝ հավասարության, բարեգործության ու տվյալ կազմակերպության գործունեության շնորհիվ: Սոցիալական գործընկերության հաստատման արդյունքում Միացյալ Նահանգներում սոցիալական հիմնախնդիրների վերծանման և լուծման նպատակով պետությունը հատկացնում է համապատասխան ծախսերի ծավալի մոտավորապես

⁸⁶ Կատինյան Ա.Ռ., Սոցիալական գործընկերությունը Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտում, Մխիթար Գոշ, Գիտամեթոդական Հանդես, 4-6/2012 Երևան Ապրիլ-Հունիս, էջեր 146-149:

25%-ը միայն⁸⁷: Սոցիալական գործընկերություն կիրառվում է նաև Ռուսաստանի դաշնությունում: Արդեն 8 տարի շարունակ ՌԴ-ում գործում է տարածաշրջանային «Наше будущее» սոցիալական խնդիրների հիմնադրամը, որի հիմնական գործունեությունն ու առաքելությունը ՌԴ-ում սոցիալական գործընկերության զարգացումն է: ՌԴ-ում նման ուղղությունները նորություններ չեն, քանի որ տասնյակ տարիներ շարունակ քննարկվել են այդ համագործակցությունների ժամանակակից հնարավորությունները, քանի որ նախկինում գործող համակարգի ոչ արդիական լինելու պատճառով անհրաժեշտ էր ձևավորել և ստեղծել նոր մոտեցումներ: Օրինակ, մասնագետների կարծիքով բարեգործության համար չկա թափանցիկություն, որը հնարավորություն կտա մեծացնել վստահությունը այս ոլորտում: Վստահությունը կարևոր է պետական ու մասնավոր համագործակցության ընթացքում: Այն իրենից ներկայացնում է երկարաժամկետ գործընթաց, ինչը հիմնվում է փոխադարձ համաձայնության վրա: ՌԴ առանձին տարածաշրջաններում սոցիալական ինովացիաների կիրառումը կյանքի չի կոչվում իր արդյունավետության բավարար հիմքերի բացակայության պատճառով: ՌԴ-ում կարևոր է նաև նորամուծություններ իրականացնել սոցիալական պատասխանատվությունը բարձրացնելու համար: Մասնագետների կարծիքով ՌԴ-ին անհրաժեշտ է հրաժարվել ակցիաների կամ նմանատիպ այլ միջոցառումների կազմակերպումներից և իրականացնել երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր⁸⁸:

Կայուն տնտեսություն ունեցող երկրների պրակտիկական փաստում է, որ գործընկերությունը հիմնվում է միասնական սկզբունքների վրա: ՀՀ-ում նոր զարգացող սոցիալական գործընկերության շրջանակներում մենք բախվում ենք մասնավոր ինստիտուտների, պետական կառույցների թուլացման, մասնակի փլուզման, հասարակության ինքնակազմակերպման առավել արտահայտված տեսակներին: Ուստի սոցիալական ոլորտում համապատասխան գործընկերության զարգացման ուղղությամբ անհրաժեշտություն է առաջանում միջազգային փորձի կիրառումը: Մեզանում դրա իրականացումը շատ է կարևորվում: ՀՀ սոցիալական համակարգում

⁸⁷ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=31189> [01.08.2014թ. դրությամբ]:

⁸⁸ Программа Европейского Союза Europe Aid для Российской Федерации «Социальное партнерство в России» Москва, 2005, с. 20-25.

սոցիալական գործընկերությունը և վերջինիս արդյունքում ինովացիոն ծրագրերի բարձր մակարդակը կարող են շատ լավ արդյունքների հանգեցնել զբաղվածության ոլորտում, մասնավորապես, սոցիալապես անապահով խավի շրջանակներում:

Սոցիալական գործընկերությունը կարևոր նախադրյալ է համարվում ազգային ինովացիոն տնտեսություն ձևավորելու համար: Պետական, հասարակական կազմավորումների փոխազդեցությունը նպաստում են տարածաշրջանի, մարզերի, մայրաքաղաքի սոցիալական կայունության, տարբեր սոցիալական ծրագրերի իրականացման ու կառավարման ակտիվացմանը, գործընկերների վստահության, փոխհամաձայնության սկզբունքի և մթնոլորտի ստեղծմանը:

Վերջին տարիներին կառավարության քաղաքականությունն ուղղված է բնակչության անապահով խավի սոցիալական ծառայությունների համալիրի տրամադրմանը ու ծավալների մեծացմանը, հասցեականությանը, կրթության մատչելիությանը, մասնագիտացմանը, զբաղվածության ապահովմանը՝ այդ գործընթացում ընդգրկելով նաև մասնավոր հատվածին: Արդի պայմաններում սոցիալաշխատանքային փոխհարաբերությունների կարգավորման ուղղությամբ պետական քաղաքականությունը և զբաղվածության բնագավառում ինովացիոն ծրագրերի ներդնումը ենթադրում են ձևավորել այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն ինքնուրույն համագործակցության ակտիվությանը, սոցիալական գործընկերության մեխանիզմների առաջարկմանը և ստեղծմանը: Ընդհանուր առմամբ հարկային արտոնությունների առկայությունը ենթադրում է տեղական ու արտասահմանյան ներդրողների զգալի ներգրավում: Սոցիալական գործընկերության և հասարակական հիմնախնդիրների լուծման տեսանկյունից, պետական և մասնավոր հատվածի մասնակցության ու պատրաստակամության շնորհիվ, անհրաժեշտ է մասնակից լինել կոնկրետ իրականացվող աշխատանքներին կամ նպաստել ինովացիոն ծրագրերի ներդրմանը, հաճախ անվարձահատույց՝ կամավոր սկզբունքներով ու հիմունքներով կամ սկզբնական շրջանում ցածր վարձատրությամբ:

ՀՀ-ում ոչ առևտրային կառույցների աճի ավելացումը վկայում է, որ հասարակությունում տեղի են ունենում անապահով անձանց առանձնացումը պետությունից, ստեղծվում և ձևավորվում են այնպիսի կազմակերպություններ,

միավորումներ ու ինստիտուտներ, որոնք որդեգրված են նպաստել հասարակական շահերի ձևավորման և իրականացման գործին: Շուկայական տնտեսությունում սոցիալական գործընկերության հայեցակարգային մոտեցման հիմունքների կարգավորումը, օրենքների մշակումը ու ընդունումը իշխանության և առանձին սուբյեկտների փոխազդեցության հետևանք է: Վերջին 12 տարիների ընթացքում ՀՀ-ն որդեգրել է տարբեր երկրների միասնական սկզբունքները, որոնք ընդգրկված են աշխատանքի միջազգային կազմակերպության, պետությունների միջազգային ընկերակցության օրենսդրական ու նորմատիվ իրավական ակտերում: 2000թ. փետրվարին ՀՀ-ն ինտեգրվեց Եվրախորհրդի 39 անդամների շարքում⁸⁹: Այս ամենը հանգեցրեց որոշ իրավական ակտերի կարգավորմանն ու ընդունմանը, ինչը սոցիալական գործընկերության բազմաթիվ ուղղությունների մաս էր կազմում: ՀՀ աշխատանքային օրենսգրքով սոցիալական գործընկերությունը աշխատողների, գործատուների և սահմանված առանձին դեպքերում ՀՀ կառավարության հետ փոխհարաբերությունների այնպիսի համակարգ է, որն ապահովում է գործատուների, աշխատողների շահերի փոխհամաձայնեցումը՝ խմբակային աշխատանքային հարաբերություններում⁹⁰: Սույն օրենքով սահմանվում են նաև սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքները, որտեղ հիմնականում ամրագրված են կողմերի իրավահավասարությունը, հարգալից վերաբերմունք դրսևորելը և այլ սկզբունքներ:

Այսպես, պետությունը համարվում է իրականացվող սոցիալական քաղաքականության գլխավոր սուբյեկտը, քանի որ վերջինիս անմիջական միջամտությամբ է կարգավորվում սոցիալական գործընկերությանը վերաբերվող բազմազան հարցեր, որոնք միաժամանակ փոխկապակցված են այլ սուբյեկտների հետ: Ազգային ինովացիոն տնտեսության ձևավորման պայմաններում սոցիալական ոլորտում սոցիալական գործընկերությունը իրականացվելու է կառավարության, տնտեսավարող սուբյեկտների և արհմիությունների միջև եղած կապով: Այսինքն՝ գործընթացը պետք է կատարվի եռակողմ մոդելի աջակցությամբ, որը հիմնված կլինի

⁸⁹ Բենուա-Ռոմեր Ֆ., Կլեբես Հ., Եվրոպայի խորհրդի իրավունքը: Դեպի համաեվրոպական իրավական տարածք, Երևան, Մակմիլան-Արմենիա, 2007, էջ 265:


⁹⁰ «ՀՀ աշխատանքային օրենսգիրք», ընդունված 2004թ. նոյեմբերի 09-ին, ՀՕ-125-Ն:

սոցիալական երկխոսության վրա: Հայաստանում իրատեսական ռեսուրսներից մեկը կարելի է համարել ինովացիոն քաղաքացիությունը, ինչը նոր աշխատատեղերի ավելացման հնարավորություն կընձեռնի:


Սոցիալական գործընկերությունը ներառում է բազմաթիվ հարաբերություններ: Նշենք, որ սոցիալական ոլորտում եռակողմ մոդելի համագործակցության շրջանակներից բացի, սոցիալական գործընկերությունը մաս է կազմում նաև սոցիալական քաղաքականության սուբյեկտների այնպիսի հարաբերության, որի ընթացքում յուրաքանչյուրին հնարավորություն է տրվում գործունեություն իրականացնելու միջոցով ստանալ ակնկալվող արդյունքը: Այստեղ շահերի համաձայնեցումը իրականացվում է բանակցային գործընթացի շնորհիվ, որի իրականացման ընթացքում կողմերը փոխհամաձայնության են գալիս աշխատանքի պայմանների, աշխատողներին սոցիալական երաշխիքների, կազմակերպության և ոլորտին վերաբերող այլ հարցերի շուրջ: Այսպես, շահերի համաձայնեցման գործընթացում և եռակողմ համագործակցության տարբերակում որպես անմիջական մասնակից հանդես է գալիս կառավարությունը, որը հանդիսանում է միաժամանակ ընդունված համաձայնագրերը կյանքի կոչելու երաշխավորը: Միաժամանակ նշենք, որ սոցիալական գործընկերության շրջանակներում սոցիալական քաղաքականության սուբյեկտների կողմից ակնկալվող արդյունքից բացի, ընթանում են այնպիսի փոխհարաբերություններ, որոնք կարգավորում են հասարակության առանձին խմբերի սոցիալական առկա վիճակի վրա ազդող բազմաթիվ հարցեր: Վերոգրյալները ամփոփելու և ավելի պատկերավոր դարձնելու նպատակով ներկայացվել են ներքոնշյալ գծապատկերները (տե՛ս գծապատկերներ 16, 17 և 18):

Ըստ ներկայացված գծապատկերների սոցիալական երկխոսության վրա հիմնված գործընթացի, եռակողմ մոդելի, սոցիալական քաղաքականության սուբյեկտների փոխհարաբերությունների արդյունքում կարգավորվում են բազմազան սոցիալական բնույթի խնդիրներ, որոնք էլ կարևոր նախադրյալ են համարվում սոցիալական ինովացիաների կիրառման և սոցիալական համակարգի բարելավման համար:

Սոցիալական գործընկերության եռակողմ մոդել⁹¹




Սոցիալական քաղաքականության սուբյեկտների փոխկապակցվածությունը⁹²



⁹¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ սոցիալական գործընկերության եռակողմ մոդելի բաղկացուցիչ մասերի փոխկապակցվածությունը ներկայացնելու նպատակով:

⁹² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ներկայացնելով սոցիալական քաղաքականության սուբյեկտների փոխկապակցվածությունը:

Սոցիալական գործընկերության շրջանակներում ակնկալվող արդյունքները⁹³

Սոցիալական գործընկերությունը դիտարկվելու է և՛ սոցիալական քաղաքականության և՛ տնտեսության կայունության միջոց՝ հասարակության մեջ դրական էվոլյուցիոն փոփոխություններ կատարելու տեսանկյունից, քանի որ այն լուծում է մշտապես փոփոխվող սոցիալական հիմնախնդիրներ, նպաստում և խթանում է գործընկերների կողմնորոշմանը դրական ու կառուցողական տնտեսության ու սոցիալական հարաբերություններ ամրապնդելու գործում:

Շուկայական տնտեսությունում պետության ներգրավվածությունը սոցիալական գործընթացներում շատ կարևոր է, որովհետև կառավարության անմիջական գործողության արդյունքում է ընդունվում համապատասխան օրենսդրություն, ինչի միջոցով կարգավորվում են գործընկերության հարաբերությունները, խթանում ու հնարավորություն են ընձեռնում նոր արտադրանքի և ինովացիոն ծրագրերի ներդրման համար: Վերջիններս աջակցում են ձեռնարկության շահույթի ավելացմանը, բնակչության և ողջ հասարակության կենսամակարդակի բարձրացմանը, սոցիալական կայունությանը, պետական կրթական ոլորտի և կադրերի վերապատրաստմանը, սոցիալական համակարգի զարգացմանը:

⁹³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ սոցիալական գործընկերության շրջանակներում ակնկալվող արդյունքները ավելի պատկերավոր դարձնելու նպատակով:

Սկզբունքային և առանձնահատուկ խնդիրների լուծման, գործընկերների միջև համագործակցության իրականացման ու հաստատման նպատակով, անհրաժեշտության է առաջանում կիրառել այնպիսի սկզբունքներ, որոնք համապատասխան կլինեն մեր երկիր սոցիալ-տնտեսական համակարգին:

Գործնականում սոցիալական գործընկերության շրջանակներում միասնական սկզբունքներ գոյություն չունեն: Յուրաքանչյուր երկիր՝ ելնելով իր տնտեսության, հասարակական ու քաղաքական զարգացման առանձնահատկություններից, սոցիալական համակարգի վիճակից, աշխատաշուկայի պահանջներից, ձևավորվում և զարգացնում է գործընկերության իր ազգային համակարգն ու սկզբունքները: Ավելին, զարգացման ու ձևավորման արդի փուլում այս համակարգերն ու սկզբունքները գտնվում են փոփոխությունների ակտիվ գործընթացներում: Հաշվի առնելով վերոնշյալ գծապատկերների տվյալները և սոցիալական ոլորտի ներկա վիճակը, հնարավոր է հստակեցնել և ներկայացնել սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքները, ինչպես նաև պետական, մասնավոր հատվածի հիմնական բաղկացուցիչ տարրերի դասակարգումը: Վերոգրյալ դասակարգումը ներկայացրել է հետևյալ գծապատկերներով (տե՛ս գծապատկերներ 19 և 20):

Սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքները հիմնվում են ժողովրդավարությամբ և կողմերի իրավահավասարությամբ, այսինքն՝ այն իր մեջ նույնպես ներառում է իրավական դաշտը կարգավորող էլեմենտներ: Հիմնական սկզբունքները ձևավորում են պետական, մասնավոր հատվածի սոցիալական գործընկերության հիմնական բաղկացուցիչ տարրեր:


Ամփոփելով վերոգրյալները նշենք, որ սոցիալական գործընկերությունը սոցիալական եռակողմ մոդելի, սոցիալական գործընկերության սուբյեկտների նախաձեռնությամբ և աջակցությամբ կարող է առաջ բերել հանրապետությունում սոցիալական բնույթի խնդիրների լուծման այլընտրանքային ձևեր: Այդպիսիք են.

- սոցիալական պետական պատվեր,
- սոցիալական պետական հովանավորություն,
- ֆինանսավորման արդյունքում սոցիալական ակտիվության խթանում:

ՀՀ-ում կազմակերպվող տարբեր կոնֆերանսներից ու քննարկումներից բացի անհրաժեշտ է՝ ճիշտ գնահատելով գործընկերոջը, աջակցել նրան ինովացիոն ծրագրի զարգացման և հզորացման գործում: ՀՀ-ում նմանատիպ փորձերը սկզբնական փուլում են գտնվում, որոնք էլ հաճախ հաջողության չեն հասնում: Այսինքն, սոցիալական գործընկերություն հասկացությունը չսահմանափակվի միայն կոնֆերանսների և հանդիպումների կազմակերպման շրջանակներում, այլ օրենսդրական դաշտի ճկունությունը և այդ քննարկումների արդյունքները խթան հանդիսանան միջազգային սեկտորի և ներդրողների համար՝ ինովացիոն ծրագրեր իրականացնելու գործընթացում:

Գծապատկեր 19.


Պետական և մասնավոր հատվածի սոցիալական գործընկերության հիմնական բաղկացուցիչ տարրերի դասակարգումը սոցիալական ոլորտում⁹⁴



⁹⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՀՀ սոցիալական ոլորտում պետական և մասնավոր հատվածի սոցիալական գործընկերության հիմնական բաղկացուցիչ տարրերի դասակարգման նպատակով:

Սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքները

սոցիալական ոլորտում⁹⁵



Նմանատիպ գործընթացների հիմնական ձախողման պատճառներից է հանդիսանում վերամշակված օրենսդրություն բացակայությունը: Առաջնային է ակտիվ համագործակցություն իրականացնել պետական, միջազգային, մասնավոր կառույցների շրջանակներում, զարգացնել սոցիալական պատասխանատվությունը, համակարգում ինովացիաների կարգավորման նոր մոտեցումները, որոնք ՀՀ-ում գտնվում են զարգացման սկզբնական փուլում:

⁹⁵ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ներկայացնելով սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքները:

ՀՀ-ում նման մոտեցումը՝ սոցիալական գործընկերությանը, ինովացիոն ծրագրերի կիրառումը կարևոր նախադրյալ կարող է հանդիսանալ հետագա համագործակցության և սոցիալական ինովացիաների կիրառման համար, քանի որ փորձը ցույց է տվել, որ պետական, մասնավոր, միջազգային հատվածի անմիջական ներգրավումը որոշակիորեն իր դրական ազդեցությունն է ունեցել ՀՀ սոցիալական ոլորտի ներքին հատվածի և ցածր ֆինանսավորմամբ ինովացիոն ծրագրերի իրականացման համար: Հիմնական պատճառը բարձր ռիսկայնությունն է: Թերևս, սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ սոցիալական բնագավառում միջազգային կառույցների և ներդրողների միջոցները հիմնականում ուղղված են այնպիսի ծրագրերի իրականացմանը, որոնցում նրանք հանդես են գալիս որպես աջակցողներ կամ հովանավորներ, իսկ նմանատիպ միջոցառումների շարունակական դարձնելը անկանխատեսելի է, որովհետև դա կախված է ընդամենը ներդրողների բարի ցանկությունից:

Ամփոփելով վերոգրյալը, նշենք, որ ցանկացած տնտեսական համակարգ իր յուրովի մոտեցումն է պահանջում, ուստի սեփական տնտեսության զարգացման ուղղությամբ իրավական դաշտի կատարելագործումը, սոցիալական համագործակցությունը և սոցիալական բնագավառում ինովացիոն ծրագրերի ներդրումը բնականոն և անհրաժեշտ երևույթներ են: Սոցիալական գործընկերության կարգավորման, կիրառման ու զարգացման համար անհրաժեշտ է որոշ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացումներ՝ արդյունավետ, իրավահավասար ու նպատակային սոցիալական գործընկերության ուղղությամբ համահունչ կարգավորումներ ու զարգացում ապահովելու նպատակով:

Հետազոտությունները փաստում են, որ սոցիալական գործընկերությունն ապահովում է տարբեր սոցիալական արդյունքներ՝ որոնք սոցիալական համակարգի ինովացիոն միջավայրի մաս են կազմում:

3.3 Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը, որպես սոցիալական ինովացիայի ներդրման մոդել

Վերջին ժամանակահատվածում կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն (այսուհետ՝ ԿՍՊ) հասկացությունը արմատապես ներթափանցել է մեր հասարակություն: Յուրաքանչյուր հեղինակ, կազմակերպություն առաջարկում և ձևակերպում է ԿՍՊ իր մեկնաբանումն ու ընկալումը, որն էլ հաճախ կարող է գաղափարի ոչ ճիշտ ընկալման կամ թերացման արդյունք լինել:

Գրեթե բոլոր միջազգային կազմակերպությունները փորձել են բնութագրել ԿՍՊ-ի յուրովի մոտեցումներն ու տալ սահմանումներ: Օրինակ՝ Եվրոպական հանձնաժողովը ԿՍՊ-ն սահմանում է հետևյալ կերպ. «Հայեցակարգ, որի շնորհիվ ընկերությունները տարբեր սոցիալական, բնապահպանական հիմնախնդիրների կարգավորման համար նախատեսված ծրագրերը, կամավորության հիմունքներով ներառում են իրենց ձեռնարկատիրական գործունեության մեջ և շահագրգռող կողմերի հետ համատեղ՝ իրենց փոխհարաբերություններում»⁹⁶: Ստանդարտների միջազգային կազմակերպության կողմից մշակել են ԿՍՊ վերաբերյալ ISO 26000 ստանդարտը (ISO 26000 - Social responsibility)⁹⁷: Եվրոպական և հյուսիսամերիկյան երկրների կողմից շարունակաբար մշակվում և ընդունվում են ԿՍՊ-ի ստանդարտներ:

Միջազգային կառույցները՝ Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), Կայուն զարգացման հարցերով համաշխարհային գործարար խորհուրդը և Ստանդարտացման միջազգային կազմակերպությունը (ՍՄԿ [ISO]) օգնում են կառավարություններին և ընկերություններին՝ առաջ մղել և շրջանառության մեջ դնել ԿՍՊ-ի գաղափարը:

ԿԱՊ-ը շրջակա միջավայրի ու սոցիալական ոլորտի կառավարման համար նախատեսված հայեցակարգ է, որը ներկայումս օգտագործվում է 155 երկրներում, և դրական ազդեցություն է թողնում հետևյալ ոլորտներում.

- Էներգաարտադրություն,

⁹⁶ European Commission, Innovation Union Scoreboard 2014, p. 55.

⁹⁷ <http://www.iso.org/iso/home/standards/iso26000.htm> [10.05.2013 թ. դրությամբ]:

- բնապահպանություն,
- թափոնների ծավալի և դրանց հեռացման ծախսերի կրճատում, հումքի օգտագործման ծավալների կրճատում,
- վերականգնվող ռեսուրսների օգտագործում⁹⁸:

Մեր կարծիքով, ԿՍՊ բոլոր սահմանումներում առանձնանում է այն հստակ գաղափարը, որ ԿՍՊ-ն կամավորության սկզբունքով բնապահպանական և սոցիալական բնույթին առնչվող բազմաթիվ հիմնախնդիրների լուծման ուղղությունների ընդգրկումն է՝ տվյալ կազմակերպության գործունեության մեջ: Այսինքն, կամավորության հիմունքով տվյալ կառույցը կամ կազմակերպությունը կենտրոնացնում է իր միջոցները (ֆինանսական, աշխատանքային, մարդկային ու կադրային, ժամանակային) որևէ սոցիալական կամ բնապահպանական խնդրի լուծմանը աջակցելու կամ նպաստելու համար:

Ելնելով ներկայացված սահմանումներից, հետազոտության նպատակներից և կատարված վերլուծություններից, հեղինակի կողմից առաջարկվում է ԿՍՊ նոր բնորոշում: Այսպիսով, որպես գործունեության նոր առանցք՝ ԿՍՊ նշանակում է, մշակել, իրականացնել սոցիալական, բնապահպանական ու տնտեսական այնպիսի փոխհարաբերություններ, որոնք հիմնված կլինեն էթիկայի, հարգանքի, վստահության, պատասխանատվության և համագործակցության վրա:

Զարգացած երկրներում ԿՍՊ զարգացման համար տարբեր կազմակերպություններ և ձեռնարկություններ ստեղծում են ԿՍՊ բաժիններ, ԿՍՊ-ի տարբեր հարցերով զբաղվող բազմաթիվ խորհրդատվական կառույցներ ու ընկերություններ, վերլուծական հատուկ կենտրոններ: Արևմտյան տարբեր ԲՈՒՀ-երում դասավանդում են ԿՍՊ վերաբերյալ դասընթացներ, վերլուծություններ են կատարում և առաջարկում են կիրառել և ներդնել ստացած կարողություններն ու հմտությունները:

ԿՍՊ կիրառման դեպքում սահմանված արտոնությունների, առավելությունների արդյունքում ստացվող շահույթի վերաբերյալ կազմակերպություններին անհրաժեշտ է ուսումնասիրել հասարակական պահանջները, կիրառման մասշտաբները և

⁹⁸ International Organization for Standardization (ISO) COPOLCO. 2002. The Desirability and Feasibility of ISO Corporate Social, <http://www.iso.org/iso/home.html> [10.05.2013 թ. դրությամբ]:

առավելությունները, որոնք կարող են բնույթով և մասշտաբներով բավականաչափ տարբեր լինել, կախված այն հանգամանքից, թե ինչ ոլորտներում է գործունեություն ծավալում կազմակերպությունը և ինչպիսի քայլեր է ձեռնարկում նպատակին հասնելու համար: Շատ հաճախ կազմակերպությունները իրենց մշակած քաղաքականությամբ չեն ձգտում կարճաժամկետ շահույթի ստացման:

Զարգացող երկրների համար հաճախ առաջանում են մի շարք հարցեր: Այսպես.

- ի՞նչ գաղափարներով են առաջնորդվում կազմակերպությունները՝ իրենց ժամանակի որոշակի մասը նվիրելով կորպորատիվ ծառատունկներին,
- մանկատներ, տուն-ինտերնատներ այցելությունների ժամանակ, ո՞րն է կառավարման դերը այս գաղափարն իրագործելիս,
- արդյո՞ք կառավարությունը նմանատիպ կորպորատիվ պատասխանատվության հարցում պետք է գրավի պասիվ դիտորդի դերը, թե՞ հակառակը,
- ինչո՞վ պետք է շահագրգռված լինեն կազմակերպությունները նմանատիպ կորպորատիվ պատասխանատվություն իրականացնելու գործում,
- որքանո՞վ է մեր հանրապետությունում ԿՍՊ դրսևորումները մոտ միջազգային կառույցների կողմից ընդունված սահմանաչափերին և ձևերին:

Միաժամանակ նշենք, որ վերոնշյալ հարցադրումների պատասխանները հետապնդում են մի նպատակ, այն է. ԿՍՊ-ը առավել նշանակալի ուղղություն դարձնելու համար ապահովել պետական, հասարակական, մասնավոր կամ միջազգային հատվածի սերտ համագործակցությունը և կարծիքների քննարկումը, որը առավելագույնը կնպաստի կամ կաջակցի մեր երկրում սոցիալական բնույթի որոշ հարցերի լուծմանը: Անկախ նրանից, որ ԿՍՊ-ի հստակ սահմանում գոյություն չունի, քանի որ վերջինս մշտապես փոփոխվում և վերասահմանվում է, ժամանակի և պահանջների համապատասխան, այնուամենայնիվ հնարավորություն է ընձեռնվում յուրաքանչյուր ընկերության համար, պահպանել այն արժեքները, քայլերը և սկզբունքները, որով նա առաջնորդվում է: Տնտեսության զարգացման հիմնական բաղադրիչն ու գրավականը կայուն կառույցների, ձեռնարկությունների առկայությունն է: Ցանկացած կազմակերպության կամ բիզնեսի հաջողությունը, ընդհանրապես,

կապված է հասարակության սոցիալական կայունության ու բարեկեցության մակարդակից և աստիճանից:

Հաշվի առնենք, որ սոցիալական պատասխանատվության նպատակն է նպաստել տնտեսության դինամիկ զարգացմանն ու հասարակության հետագա առաջընթացին, ընկերություններն ու գործարարները առավել պետք է շահագրգռված լինեն ԿՍՊ ներգրավվածության մեջ: Այսինքն, որպես սոցիալական պետություն տարբեր կառույցների համար սոցիալական պատասխանատվության իրականացումը պետք է դառնա կենսական գործոն: Մեր երկրում վերջին տարիներին միջազգային կազմակերպությունները ակտիվորեն փորձում են շրջանառության մեջ դնել ԿՍՊ գաղափարը՝ որպես բիզնեսի կառավարման արդյունավետ մոդել:

2009թ-ից սկսած ՀՀ կառավարությունը իրականացնում է պետական, մասնավոր հատվածների միջև գործընկերության կենսունակ մոդելի ստեղծման նպատակով տարբեր միջոցառումներ, որոնց հիմնական նպատակն են՝ ինչպես համագործակցությունը պետական, մասնավոր և միջազգային հատվածում, այնպես էլ բնակչության կարիքների համընկալումը վերջիններիս կողմից⁹⁹: Այս տեսանկյունով գործընկերություններն ու համագործակցությունները արդյունավետ են և հանգեցնում են զգալի արդյունքների:

ԿՍՊ-ի ներքո հաճախ հասկացվում է բարեգործական ծրագրերի կամ կամավոր սկզբունքով աշխատանքների իրականացումը: Արդի պայմաններում ԿՍՊ գաղափարի ներդրումը և զարգացումը փորձում են ակտիվ իրականացնել հայաստանյան գրեթե բոլոր խոշոր կազմակերպություններում:

ԿՍՊ-ով Հայաստանում առանձնանում են՝ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը, «Հայրուսգազարդ»-ը, «Ամերիաբանկ»-ը, «Առէկսիմբանկ»-ը, «ԱրմենՏել» և այլ կազմակերպություններ:

«ՎիվաՍել-ՄՏՍ» կազմակերպությունը այս մոտեցումը կիրառում է իր իսկ կարգավիճակի բարձրացման համար, և ընդհանրապես ի օգուտ հասարակության: ԿՍՊ-ի շրջանակներում կազմակերպության մոտեցումն է մշակել ու կառուցել գործնական, սոցիալական բնույթի այնպիսի հարաբերություններ, որոնք հարգանքի,

⁹⁹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69342> [05.06.2015 թ. դրությամբ]:

Էթիկայի, պատասխանատվության ու վստահության մաս են կազմում: «ՎիվաՄել-ՄՏՍ»-ը շարունակվում է նորածինների խնամքի հետ կապված տարբեր ծրագրերի իրականացումը: Գյումրիի Ավստրիական մանկական հիվանդանոցին տրամադրվել է բազմաթիվ բուժօտեխնիկա: 2010թ.-ից սկսած կազմակերպություն «BirthLink» Հ/Կ-ի հետ միասին իրականացնում են ծրագրեր, որոնց միջոցով Շիրակի մարզում գտնվող հիվանդանոցներին աջակցում են: Կազմակերպությունը աջակցել է նաև «Օրրան» բարեգործական ՀԿ-ին, որը հիմնադրվել է 2000թ.-ին, և հիմնական առաքելությունը տարեցների, երեխաների շրջանում աղքատության, մուրացկանության տարածման կանխելն է¹⁰⁰:

«ԱրմենՏել»-ը մասնակցում է սոցիալական տարբեր հիմնախնդիրների լուծման ու կարգավորման գործընթացին, և փորձում է նպաստել հանրապետությունում ներդաշնակ սոցիալական զարգացմանն ու կայունացմանը: Կազմակերպությունը ԿՍՊ իրականացնում և կիրառում է «հանուն ՀՀ պայծառ ապագայի» խորագրով, որը համարվում է «Beeline»-ի ռազմավարության մի մասը: Ընկերության համար ԿՍՊ ուղղություններից են. աջակցել կրթությանն ու ազգային արժեքներին, աջակցել հասարակության խոցելի խավին ու սոցիալական պաշտպանությանը, ինչպես նաև, հոգատար վերաբերմունք և մասնակցություն ունենալ բնական պաշարների և շրջակա միջավայրի պահպանման հարցերում¹⁰¹:

«Ամերիաբանկ»-ը ևս իր ԿՍՊ մասնակցությունով առանձնանում է: Իր մասնակցությունն ունի ՀՀ մշակույթի զարգացման ու տաղանդավոր երիտասարդների աջակցության տարբեր հովանավորչական նախագծերում: Բանկի կողմից ուշադրության են արժանանում նաև սոցիալական կարիքներ ունեցող քաղաքացիները: Ընկերության ծրագրերից առանձնանում են բարեգործական տարբեր միջոցառումներ ԼՂՀ-ում, «Հայկական ջազի յոթանասունմեկ» և այլ ծրագրեր¹⁰²:

ՀՀ-ում առկա ԿՍՊ-ը բնութագրելու համար նշենք, որ, նախ և առաջ անհրաժեշտություն է առաջանում ուշադրություն դարձնել հասարակության շահերի բավարարման և սոցիալական բնույթի հիմնախնդիրների լուծման արդյունքների վրա:

¹⁰⁰ <http://www.mts.am/company/vivacell-mts-to-armenia/corporate-responsibility> [05.02.2016թ. դրությամբ]:

¹⁰¹ <http://about.beeline.am/am/responsibility/priority.wbp> [05.02.2016թ. դրությամբ]:

¹⁰² <http://www.ameribank.am/PressServices.aspx?cat=social&lang=33> [05.02.2016թ. դրությամբ]:

Վերջիններս առաջ են գալիս ԿՍՊ գիտելիքների աճի և հանրային միջավայրի որակական հատկանիշների բարելավման տեսքով: Նշենք, որ միշտ էլ կգտնվեն այնպիսի անհատներ ու ընկերություններ, որոնք բացահայտ հակվածություն կցուցաբերեն ԿՍՊ զարգացման գործում¹⁰³:

ՀՀ-ում մեր կողմից կատարված ԿՍՊ-ի ուսումնասիրությունը վկայում է, որ նման պատասխանատվությունը դեռևս թերընկալելի է գործարարների և հասարակության զգալի մասի համար: ԿՍՊ իրականացնում են միայն այնպիսի կազմակերպություններ, որոնք սերտ համագործակցում են միջազգային տարբեր կառույցների հետ կամ վերջիններիս մասն են կազմում: Գաղտնիք չէ, որ սոցիալական ոլորտի տարբեր ծրագրերում մասնակցությունը մեծ տարածում է ունենում հասարակության լայն շերտերում՝ հաճախակի լուսաբանվելով տարբեր լրատվական միջոցներով:

ՀՀ կառավարությունը իր հստակ քայլերով կարող է ընկերություններին խրախուսել և բարելավել իրենց ԿՍՊ-ի մոտեցումները, և մշակել ԿՍՊ-ի այնպիսի ստանդարտներ, որոնք ընկալելի կլինեն հայաստանյան մասնավոր և պետական կազմակերպությունների համար, որի արդյունքում էլ Հայաստանը ավելի մրցունակ գործընկեր կդառնա արտերկրում: Կառավարության միջամտության բացակայության դեպքում կազմակերպությունների կողմից ինքնուրույն ձևավորված և կիրառված ԿՍՊ ստանդարտները, հնարավոր է խոչընդոտ հանդիսանան այլ ոլորտներում, ոչ միտումնավոր կերպով, սոցիալական պատասխանատվության համար: Արդյունքները փաստում են, որ հանրապետությունում ԿՍՊ-ի զարգացման առումով հիմնական խոչընդոտներից մեկը օրենսդրական դաշտի և տեղեկատվության պակասն է: ԿՍՊ ըմբռնումը բացակայում է հատկապես մասնավոր հատվածում: Մեր երկրում սակավաթիվ ընկերություններ և շահույթ չհետապնդող կազմակերպություններ են տարբերակում ԿՍՊ-ի գաղափարը բարեգործությունից: Մեկ այլ խոչընդոտ է հանդիսանում խթանիչ ուժի բացակայությունը:

Կազմակերպությունների կողմից կատարվող ԿՍՊ-ը նախ կապված է տվյալ ընկերության շահերից: Նմանատիպ մոտեցմամբ ընկերությունները իրենց դիրքերն են

¹⁰³ Կատինյան Ա.Ռ., Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և կիրառման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում, Անանիա Շիրակացի միջազգային հարաբերությունների համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու-1 (13)/ Երևան, 2011, էջեր 139-147:

ամրապնդում բիզնես միջավայրում, իսկ ինչ վերաբերում է աշխատակազմի համար նախատեսված սոցիալական բազմաթիվ ծրագրերի իրականացմանը, այստեղ սոցիալական և մասնագիտական պոտենցիալը նույնպես բխում է ընկերության շահերից, այսինքն՝ մեծ պոտենցիալը համարժեք է որակյալ աշխատանքի խթանմանը: Փաստն այն է, որ կազմակերպությունները իրենց գործունեության, ապրանքների ու մատուցված ծառայությունների արդյունքում կամ հիմնական շահառուների հետ (աշխատողներ, հաճախորդներ, ներդրումներ կատարողներ, մատակարարներ) շփման հետևանքով ազդում են հասարակության և բնության վրա: Սոցիալական պատասխանատվության անհրաժեշտությունը պետք է իր յուրովի տեղը զբաղեցնի յուրաքանչյուր գործարարի աշխատանքային ծրագրում, քանի որ վերջինս սերտորեն կապված է ընկերության վարկանիշի և հեղինակության ամրապնդման հետ: Նշենք նաև, որ սոցիալական պատասխանատվությունը չպետք է համարվի ձեռնարկատիրական գործունեության հավելում, այն ներգրավված է լինելու բիզնեսի ռազմավարության կառավարման դրույթների մեջ, և դիտարկվելու է ոչ թե որպես բարեգործական նկատառումներով կատարվող հատկացումներ, այլ որպես ընկերության, մասնավոր սեկտորի գործունեության համար զարգացման խթանիչ միջոց և անհրաժեշտություն:

Միջազգային պրակտիկան փաստում է, որ պետական, մասնավոր սեկտորի սերտ համագործակցության շնորհիվ կիրառվում են ԿԱՊ-ի խթանմանն ուղղված տարբեր միջոցառումներ: Այսպես, Միացյալ Թագավորությունում գործում է ինովացիոն հմտությունների զարգացման վարչությունը, որը նախկինում կառավարության կազմում ընդգրկված էր որպես կորպորատիվ պատասխանատվության նախարարություն: Իրենց գործունեության շրջանակներում մշակում և իրականացնում են ԿՍՊ-ի համար նախատեսված միջոցառումներ, տարբեր մրցանակային համակարգեր, ինչպես նաև հրապարակում են ԿՍՊ հարցերով միջազգային ռազմավարական ծրագրեր¹⁰⁴: Իսպանիայում 2008թ. ստեղծվել է կորպորատիվ պատասխանատվության ազգային խորհուրդը (NCCR), որը տարբեր ծրագրեր է կյանքի կոչում հետևյալ առաջնային ուղղություններով. սոցիալական համախմբում, մասնակցություն արտադրական

¹⁰⁴ Her Majesty's Government, Corporate Responsibility Report 2008, p. 20.

ոլորտում և տնտեսությունում, սոցիալական պատասխանատվության ներդրումներ և ԿՍՊ-ի ինտեգրումը կրթական համակարգում¹⁰⁵: Լատվիայում գործում է բարեկեցության նախարարությունը, որը իրականացնում է ԿՍՊ խթանմանն ուղղված բազմաթիվ միջոցառումներ, մրցանակներ և ծրագրեր¹⁰⁶: Գերմանիայում խոշոր կազմակերպությունները կանոնավոր կերպով բարեգործական գործունեություն և ԿՍՊ են իրականացնում, որի նպատակն է աջակցել շահույթ չհետապնդող կառույցներին¹⁰⁷: Էստոնիայում, Չեխիայում ընկերությունները ԿՍՊ շրջանակներում շահույթ չհետապնդող կազմակերպություններին աջակցում են ոչ միայն արտադրանքի կամ ծառայությունների տեսքով, այլև մասնագիտական տարբեր խորհրդատվություն և ուսուցում են իրականացնում¹⁰⁸: Հունգարիայում հարկային տարբեր արտոնություններ են սահմանված այն տնտեսավարող սուբյեկտների ու կազմակերպությունների համար, որոնք ծավալում են ԿՍՊ գործունեություն¹⁰⁹:

Ուսումնասիրելով վերոնշյալ երկրների փորձը, նկատելի է դառնում, որ նմանատիպ միջոցառումների կազմակերպման հիմնական նպատակը ուղղված է համապատասխան ոլորտում կազմակերպությունների գործունեության խթանմանը: Այս երկրներում հարկային արտոնությունների և ճկուն մեխանիզմների մշակման հետևանքով կազմակերպությունները շահագրգռված են կիրառել ԿՍՊ, քանի որ ստացված արդյունքները՝ մարքեթինգային ծախսերի համեմատ, ավելի շոշափելի են դառնում, քան ԿՍՊ իրականացման գծով հատկացված միջոցները:

ՀՀ սոցիալական համակարգի և տնտեսության հզորացման համար անհրաժեշտ է խթանել և ուժեղացնել ԿՍՊ համակարգերը: Այն հնարավորություն կընձեռնի

¹⁰⁵ Ministerio de Trabajo y Asuntos Sociales, Real Decreto 221/2008 pro el que se crea y regula el Consejo Estatal de Responsabilidad Social de las Empresas, 15 February 2008, p. 21.

¹⁰⁶ Ministry of Labor and Social Security of the Republic of Lithuania, The Adoption of Measures to Promote Corporate Social Responsibility in the Period 2006-2008, p. 30.

¹⁰⁷ Մարտիրոսյան Ս., Պետրոսյան Ա., Ա.Դ.Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն, Ռազմավարական ծրագրավորման ուղեցույց քաղաքացիական հասարակության կառույցների համար, Գյումրի, Դպիր, 2008, էջեր 55-60:

¹⁰⁸ «Շահույթ չհետապնդող իրավաբանական անձանց մասին» Բուլղարիայի օրենքը, 3 հոդվածի 3 մաս <http://www.bcnl.org/en/articles/866-law-for-the-nonprofit-corporate-bodies-legal-entities.html> [08.12.2014թ. դրությամբ]:

¹⁰⁹ Նիլդա Բուլեն և Ռադոստ Թոֆտիսովա, «ՈԿԿ-կառավարության համագործակցության եվրոպական քաղաքականությունների և փորձի համեմատական վերլուծություն», Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն, http://www.icnl.org/research/journal/vol7iss4/art_1.htm [09.02.2015թ. դրությամբ]:

կազմակերպություններին իրենց աշխատակազմը ներգրավել կազմակերպության կառավարման և շահույթի բաշխման գործընթացներում, ինչը ներկայումս միջազգային պրակտիկայում դիտվում է, որպես կազմակերպությունում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու կարևոր միջոցներից մեկը: Բարեգործությունը և ԿՍՊ-ն միմյանցից տարբերվում են այն հանգամանքով, որ բարեգործությունն ուղղված է որոշ անձանց կյանքի, որոշակի, բարելավմանը, իսկ ԿՍՊ-ը՝ կազմակերպության շահույթ ստանալուն:

Զարգացած երկրների փորձից կարելի է առանձնացնել, որ ԿՍՊ և սոցիալական ներդրումներն ունեն երեք հիմնական նպատակ. բարձրացնել կազմակերպության հեղինակությունը՝ նպաստելով արտադրանքի իրացման մեծացմանը, դրական միջավայր ստեղծել կազմակերպության աշխատակիցների համար, ինչպես նաև բարձրացնել կազմակերպության շուկայական արժեքը: Միջազգային ուսումնասիրությունները փաստում են, որ սպառողների 2/3-ը այլ հավասար պայմաններում նախընտրում են ապրանք գնել ԿՍՊ գործունեությամբ զբաղվող ընկերություններից:

ԿՍՊ խթանման համար, որպես իրավական արտոնություն կարելի է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում ներառել այնպիսի հոդված, որը կնպաստի ԿՍՊ կիրառմանը, այնպես ինչպես ներկայումս վերոնշյալ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն բարեգործություն իրականացնելու արդյունքում շահույթը որոշելիս նվազեցվում է համախառն եկամուտը, նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0,25 տոկոսի չափով: Հարկ է նշել նաև, որ վերոնշյալ հոդվածով նախատեսված է միայն համախառն եկամտի նվազեցում, սակայն ԿՍՊ-մբ զբաղվող կազմակերպությունների համար զարգացած երկրներում սահմանվում են նաև այլ արտոնություններ:

ՀՀ-ի համար, որպես կարգավորման մեխանիզմ կարելի է կիրառել հետևյալ տարբերակը (համապատասխան փոփոխություն կատարելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում): Եթե գործատուն ԿՍՊ-ի գծով հատկացում է կատարում յուրաքանչյուր աշխատողի միջին աշխատավարձի 1% չափով՝ 2000 դրամ (աշխատավարձը դիտարկել 200000 ՀՀ դրամ), ապա տրամադրվող հարկային արտոնության

առկայության արդյունքում (հատկացված գումարի 50%-ի չափով)՝ շահութահարկի մասով, նրա խնայողությունը կկազմի 1000 դրամ: Այսինքն՝ գործատուն իր կատարած լրացուցիչ ծախսի՝ 2000 դրամի 50%-ը՝ համախառն եկամտի նվազման արդյունքում, հետ կստանա:

Այսպես, գործատուի կողմից համախառն միջին աշխատավարձից 1% ԿՍՊ գծով հատկացումներ կատարելու և շահութահարկի մասով արտոնության կիրառման արդյունքում, կատարված խնայողության ընդհանուր բանաձևը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

(2)

$$S = X - \left(\frac{X * 50}{100} \right) \leq EC$$

Որտեղ՝ S-խնայողությունն է, EC-հավելյալ ծախսերը, X-ԿՍՊ գծով հատկացումները:

Առաջարկված տարբերակում հաշվարկը ներկայացվել է յուրաքանչյուր աշխատողի կտրվածքով, քանի որ ԿՍՊ իրականացնում է նաև տվյալ կազմակերպությունում աշխատողը կամ ներգրավված անձիք: Օրինակ, երբ կազմակերպությունը իրականացնում է ծառատունկ կամ անհատական աջակցություն է ցուցաբերում որևէ ոչ ֆինանսական եկամուտ հետապնդող կազմակերպությանը, ապա նմանատիպ գործունեություն ծավալելու համար կարևորվում են տվյալ կազմակերպությունում ընդգրկված անձանց թվաքանակը:


ՀՀ-ում ներկա պայմաններում տարբեր կառույցների կողմից ԿՍՊ-ի գաղափարը հիմնված է կամավորության սկզբունքի վրա: Որպես ինովացիոն գործընթացների տարր, այսօր էլ ՀՀ բիզնես միջավայրում ԿՍՊ-ը թողնում է իր դրական ազդեցությունը: Այդ գործընթացը ներկայացվել է գծապատկեր 21-ի միջոցով:

Ինովացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունները ինքնուրույն են որոշում ինովացիոն գործունեության ուղղությունները, և իրենց հայեցողությամբ ներգրավում են համակատարողներին՝ տվյալ գործընթացը իրականացնելու համար: Ինովացիոն գործունեություն կիրառող կառույցները կարող են իրականացնել ինովացիոն ծրագրերի, նախագծերի, ինչպես նաև ինովացիոն գործընթացը

սպասարկող միջնորդների, կազմակերպիչների և սպառողների գործառույթներ, քանի որ վերջիններս ունեն այդ գործունեության արդյունքները տիրապետելու և օգտագործելու իրավունքը:

Գծապատկեր 21.

ԿՍՊ արդյունքը կազմակերպությունների համար¹¹⁰



Ինովացիոն գործունեության արդյունքում կազմակերպությունները ռեսուրսների խնայողություն են իրականացնում, և տնտեսված միջոցները սոցիալական ծրագրերի զարգացմանն են ուղղում: Ձեռնարկության ռեսուրսների խնայողությունն իրականացվում են կառավարման նոր տեխնոլոգիաների շնորհիվ, որոնք հավելյալ ինովացիոն գործընթացների և նոր գաղափարների կիրառման արդյունք են:

¹¹⁰ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, ուսումնասիրելով ԵՄ երկրների կիրառման փորձը, աղբյուրներ՝ Ministry of Labor and Social Security of the Republic of Lithuania, The Adoption of Measures to Promote Corporate Social Responsibility in the Period 2006-2008, Ministerio de Trabajo y Asuntos Sociales, Real Decreto 221/2008 pro el que se crea y regula el Consejo Estatal de Responsabilidad Social de las Empresas, 15 February 2008.

ԿՍՊ-ի համապատասխան ռազմավարության մշակումը, զարգացումն ու իրազեկվածության տարածումը պահանջում է որոշակի ժամանակ, ցանկություն և նվիրվածություն, մարդկային գործոն և ֆինանսական միջոցներ: Արձանագրենք, որ հասարակության զարգացմանը զուգընթաց կազմակերպությունները ԿՍՊ իրականացման ակտիվացման նպատակով, նախընտրում են կիրառել ինովացիոն ստեղծագործական մոտեցումներ, հնարավոր լրացուցիչ ծախսատարությունից խուսափելու նպատակով:

Կառավարության անմիջական միջամտությունը և վերամշակված օրենսդրությունը դրական ազդեցություն կունենա ԿԱՊ կիրառման պրակտիկայում, արդյունավետ կդառնա մասնավոր ընկերությունների և կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Կազմակերպությունների կողմից բարեգործական սկզբունքով մոտեցումը չի խրախուսվում այն առումով, որ հասարակության զարգացման ու բարեկեցության ուղղությամբ իրական պայմաններ ու հնարավորություններ չեն ապահովվում, արդյունքում նրանք կախվածության մեջ են լինում տրամադրվող օգնությունից և քիչ հնարավորություն են ունենում բարելավել իրենց ներկա կարգավիճակը: Ցանկացած ընկերության մոտեցումը ԿՍՊ-ի նկատմամբ լինելու է շատ հստակ և կազմակերպության ռազմավարության դրույթներից բխող, առանձնացնելով ԿԱՊ-ին այլ տեսակի գործընթացներից, այնպիսիք ինչպիսիք են՝ բարեգործությունը, առևտրային հովանավորչությունը և այլն:

Պետության կողմից ԿՍՊ զբաղվող կազմակերպությունների համար արտոնությունների սահմանումը մեծ խթան և լայն տարածում կհանդիսանա ՀՀ բիզնես միջավայրի համար: Որպես արտոնություն կարող են սահմանվել.

- նյութատեխնիկական աջակցություն,
- հարկային արտոնություններ (հարկվող օբյեկտի կամ դրույքաչափի, հարկի նվազում, հարկի հաշվարկման կամ վճարման ժամկետի հետաձգում),
- պարտադիր վճարների ու տուրքերի գծով արտոնություններ,
- պետական, համայնքային կառույցների մատուցած ծառայությունների դեպքում վճարումից ժամանակավոր ազատում:

Վերոնշյալ արտոնությունների առկայության դեպքում ԿՍՊ-ով կգբաղվեն ոչ միայն խոշոր կազմակերպությունները, այլ նաև փոքր ու միջին ձեռնարկատիրությամբ զբաղվողները, քանի որ ԿՍՊ կիրառող ցանկացած տնտեսավարող սուբյեկտ հետապնդում է իր եկամուտը: Ավելին՝ հարկային այսպիսի արտոնությունների լծակը անհրաժեշտ է կիրառել և օգտագործել, որպեսզի աջակցվի ինովացիոն գործունեությունը, տեխնոլոգիական և գաղափարական նորացումը:

Զարգացող երկրների շրջանում առավել մեծ թվով տնտեսություններ են սկսում ըմբռնել ԿՍՊ-ի կարևորությունը, և համապատասխան միջոցներ են ձեռնարկում բիզնես միջավայրում: Կազմակերպություններն ունեն համապատասխան որակավորված, ոլորտին տիրապետող, քաջատեղյակ մարդկային ռեսուրսների անհրաժեշտություն, որոնք նպաստում են շուկայի մրցակցության դիմակայության ապահովմանը:

Ձեռնարկատիրության համար կայուն տնտեսական համակարգի առկայությունը կնպաստի իրականացնել սոցիալական պատասխանատվության ծրագրեր առանց կորուստներ ունենալու: ԿՍՊ-ի լայն կիրառումը, կառավարության ներգրավումը վերջինիս զարգացման գործում թույլ կտա ունենալ ուժեղ և կայուն տնտեսություն:

Կազմակերպությունները մշտապես կարող են որդեգրել հետևյալ սկզբունքները նպատակահարմարության և ԿՍՊ-ի շահութաբերության ապահովման առումով.

- *մարդկային ռեսուրսների, նոր կադրերի ներգրավում*-այստեղ ծրագիրը հնարավոր է ուղղել նոր կադրերի հավաքագրմանն ու խրախուսմանը: Այս տարբերակը նախատեսված է հատկապես նորավարտ մասնագետների համար, որոնք նոր են փորձում ինտեգրվել աշխատանքային շուկային: Զարգացած երկրներում երիտասարդ աշխատուժը հետաքրքրվում է տվյալ կազմակերպության ծավալած գործունեությամբ, բարեգործությամբ և ԿՍՊ-ով, այսինքն՝ նմանատիպ ակտիվությունը հնարավորություն է տալիս համապատասխան ընկերությունում առողջ մթնոլորտ ստեղծել: Արդյունավետ կիրառվող ԿՍՊ ծրագրերը կբարձրացնեն կադրերի թիմային ոգին, հարգանքի և պատասխանատվության զգացումը սեփական աշխատատեղի և զբաղեցրած պաշտոնի հանդեպ,

- *ռիսկերի վերահսկում*-խոշոր ընկերությունների համար շատ է կարևորվում գույքիլի պահմանումն ու գույքիլային ռիսկի վերահսկումը: Այն բարի համբավը կամ կարծիքը, որը ձեռք է բերվում դժվարությամբ կամ տարիների ընթացքում, հնարավոր է արագորեն չեզոքացնել՝ կապված արտադրական պատահարի կամ մեկ այլ միջադեպի արդյունքում: Ընկերությունները ձգտում են հնարավորինս խուսափել նմանատիպ ռիսկերից, և այս հանգամանքում օգտակար է լինում ԿՍՊ ռազմավարության մշակումն ու իրականացումը,
- *բրենդի տարբերակում*-եթե տվյալ շուկայում գերակշռող մաս են կազմում նույնանման մրցակից ընկերությունները և սպառողների համար գրեթե դժվար է առանձնացնել նրանցից որևէ մեկին, ապա հաջողված գործունեությունը կարող է ուշադրություն գրավել՝ ԿՍՊ իրականացման միջոցով: Այս տարբերակում սպառողի կողմից համապատասխան հավատարմություն է ձևավորվում՝ հիմնված որոշ արժեքների վրա, և առանձին դեպքերում այն օգնում է ճգնաժամային պայմաններում գտնվող կազմակերպությանը որոշակիորեն պահպանել իր դիրքը սպառողական շուկայում,
- *գործունեություն ծավալելու արդյունագիր*-ընկերությունները ձգտում են պետական կարգավորման համապատասխան կառույցներին իրենց գործունեության վերահսկմանը մասնակից չդարձնել: Այս պատճառով նրանք որոշում են կամավոր դիմել համապատասխան քայլերի՝ կանխարգելելով նմանատիպ պետական վերահսկումները և պահպանել որոշակի ազատություն խնդրահարույց ոլորտում:

ԿՍՊ-ի կիրառումը օգտակար գործիք կդառնա ինչպես կազմակերպությունների հեղինակության բարձրացման, այնպես էլ բազմաթիվ սոցիալական խնդիրների լուծման համար: Այստեղ կարևոր հանգամանք է հասարակական տարբեր կազմակերպությունների դերը: Վերջիններս նպաստում են բիզնեսով զբաղվող հատվածին ԿՍՊ-ի վերաբերյալ տեղեկատվության տիրապետման և իրազեկման գործում, ինչպես նաև աջակցում են համապատասխան կառույցներին ԿՍՊ-ն առավել ընդգրկուն և նպատակային դարձնելու համար՝ առաջարկելով համապատասխան ուղղություններ:

ինչպես նշել է Համաշխարհային բանկը, պետական հատվածի ներգրավումը կարող է ամրապնդել սոցիալական պատասխանատվության հասկացությունը և շահերի խթան հանդիսանալ զարգացող երկրների համար¹¹¹:

ԿՍՊ-ն ռազմավարության տարր լինելով ինքնակարգավորման հնարավորություն ունի՝ հիմնված էթիկայի նորմերի և միջազգային ստանդարտների վրա: Միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա ներդրողները զգալի ուշադրության են արժանացնում տվյալ երկրում գործող սոցիալական պատասխանատվության իրավիճակին, ինչն էլ այն հիմնարար գործոններից մեկն է, որոնց համապատասխան որոշվում են տվյալ երկրում կատարվող ներդրումների ուղղությունները:

ՀՀ կառավարությունը այս հանգամանքը օգտագործելով ավելի մեծ հետաքրքրություն կառաջացնի օտարերկրյա ներդրողների ու կազմակերպությունների շրջանում: ԿՍՊ-ի կիրառումն ու համապատասխան գործընթացները կհանգեցնեն շուկաների հասանելիությանը ՀՀ գործունեություն իրականացնող այն կազմակերպությունների և ընկերությունների համար, որոնք ձգտում են իրենց արտադրանքը, ծառայությունները արտահանել արտասահմանյան երկրներ: Այստեղ շատ է կարևորվում կազմակերպությունների պատասխանատվության մասով տեղեկացվածության մակարդակի բարձրացումը, որը կընձեռնի հնարավորություն առևտրային կազմակերպություններին ունենալ կարևոր, ազդեցիկ դեր բնակչության շրջանում, լինել առավել մրցունակ, ինչպես նաև պահպանել կամ ձեռք բերել նոր հաճախորդներ և բարձրորակ կադրեր: ԿՍՊ-ի կիրառումը և ներդնումը սկսվելու է այդ մասին իրազեկվելու ու հրապարակայնացնելու միջոցով: Այս գործընթացի արագացման համար, պետական, հասարակական և մասնավոր սեկտորները համագործակցելու տարբեր եղանակներ պետք է որոնեն՝ ֆինանսական օգնություն ակնկալելու փոխարեն: Օրենսդրական միջավայրի բարելավումը հավելյալ խթաններ է ստեղծում, որպեսզի գործարար կառույցներն ավելի համակարգված և ռազմավարական ձևով ներգրավված լինեն կորպորատիվ հատկացումների պրակտիկայում:

¹¹¹ World Bank and International Finance Corporation, Public Sector in Strengthening Corporate Social Responsibility 2012, <http://wbi.worldbank.org/developmentmarketplace/partner/international-finance-corporation-ifc> [05.09.2015 թ. դրությամբ]:

ՀՀ-ում համապատասխան քաղաքականության առկայությունը կնպաստի ԿՍՊ գաղափարի տարածմանը, որի արդյունքում առաջացող փոփոխությունները կդառնան արդյունավետ ամբողջ հասարակության համար: Ինովացիոն տնտեսության ձևավորմամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ ժամանակակից հասարակությունում արտադրության գործոնների շարքում գնալով մեծանում և առաջատար են դառնում ինովացիաների արդյունքում բարձրորակ արտադրանքի առկայությունն ու աշխատանքի դերը:

Անընդհատ մեծացող մարդկային կապիտալի տեսակարար կշիռը փոխում: ՀՀ-ի համար ԿՍՊ պետք է դիտարկել ինովացիոն տնտեսության անբաժան մաս: Գիտելիքը, ինովացիոն գործունեությունը և կուտակված տեղեկատվությունը դառնում են ազգային հարստության գլխավոր աղբյուրը: Սա չի կարող չազդել տնտեսության, հասարակության և սոցիալական ոլորտի վրա: Առաջնային են համարվում բնակչության սոցիալական, առողջապահության, կրթության որակի բարձրացման, գիտության զարգացման, կյանքի որակի և տնտեսության հետ կապված հիմնախնդիրները:

Այս հիմնախնդիրների լուծումը հետապնդում է երկարաժամկետ և համակողմանի մոտեցումներ, միայն համալիր միջոցառումների առկայությամբ է հնարավոր հասնել որակական նոր աստիճանի: Կառավարության դերը անմիջականորեն նպաստում է տնտեսության արդյունավետության բարձրացմանն ու գլոբալ խնդիրների ուղղությամբ համապատասխան լուծումների որոնմանը, սոցիալական ոլորտում առկա հիմնախնդիրների կարգավորմանը, բնակչության սոցիալական կայունացմանն ու բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոցիալական ոլորտում մեծ է ինովացիոն միջավայրի դերը: Միաժամանակ, սոցիալական ոլորտը ձևավորում է նաև ինովացիոն գործընթացի նպատակները: Սոցիալական ոլորտում կան այնպիսի գործոններ, որոնք ուղղակիորեն կապված են ինովացիոն գործունեության հետ, իսկ վերջիններիս ակտիվացման շնորհիվ կարելի է բարելավել կյանքի որակն ու սոցիալական վիճակը:

1. Սոցիալական ոլորտում ինովացիոն միջավայրի դերը զգալի մեծ է: Միաժամանակ, սոցիալական ոլորտը ձևավորում է նաև ինովացիոն գործընթացի նպատակները: Սոցիալական ոլորտում կան այնպիսի գործոններ, որոնք ուղղակիորեն կապված են ինովացիոն գործունեության հետ, իսկ վերջիններիս ակտիվացման շնորհիվ կարելի է բարելավել կյանքի որակն ու սոցիալական վիճակը:
2. Պետությունը, որը սոցիալական ոլորտում ձգտում է հասնել լուրջ բարեփոխումների, պետք է նախ մշակի ինովացիոն ռազմավարություն՝ հիմնված վերլուծությունների, նախագծերի, փորձի ու ազգային բազմաթիվ առանձնահատկությունների վրա:
3. Արդյունավետ պետական քաղաքականություն իրականացնելու նպատակով պետական մարմինները պետք է նշանակալի ուշադրություն դարձնեն երկրում ինովացիոն գործընթացների ակտիվացմանը և սոցիալական ոլորտում ինովացիոն գործունեության զարգացմանը, որի համար առավել արդյունավետ է իրականացնել կոնկրետ ոլորտներում ինովացիոն ծրագրերի ներդրման աշխատանքներ, անհրաժեշտ պայմանների ապահովում, փոքր ձեռնարկությունների և այլ ենթակառուցվածքների ստեղծման և ճիշտ գործունեություն ծավալելու միջոցով:
4. Շուկայական համակարգի ժամանակաշրջանում, ինովացիոն տնտեսության ձևավորման համար կարևորվում է պետության դերը, քանի որ պետությունն է մշակում ու ստեղծում ինովացիաների զարգացման պայմանները, ոլորտի ինքնակարգավորիչ մեխանիզմները և ինովացիոն համապատասխան ինստիտուտների միջավայրը:

5. ՀՀ-ում սոցիալական ոլորտի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ են ստեղծել արդյունավետ կարգավորող մեխանիզմներ, և սոցիալական ինովացիաների ներդրման ուղղությամբ իրականացնել կոնկրետ քայլեր:
6. Ինովացիոն գործունեություն իրականացնելու և սոցիալական ոլորտը բարելավելու համար գերխնդիր է հանդիսանում ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործունեության կազմակերպումը, ինչպես նաև բարենպաստ միջավայրի ստեղծումը, նոր մտքի կամ գաղափարի տեղափոխումը գիտությունից դեպի սոցիալական ոլորտ:
7. Կազմակերպությունների կողմից սոցիալական ծրագրերի կիրառման մշակույթի ներդրման անհրաժեշտություն է առաջանում: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բարձրացման միջոցով հնարավոր է սոցիալական ոլորտում իրականացնել այլընտրանքային բարեփոխումներ, միաժամանակ ընկերություններին հնարավորություն տալով ստեղծելու ավելի մրցունակ միջավայր, ինչն էլ խթան կհանդիսանա սուբյեկտներին տարբեր ծրագրեր իրականացնել՝ շուկայում առաջատար դիրքեր գրավելու համար:
8. ՀՀ սոցիալական համակարգում ինովացիոն գործընթացների իրականացման ճանապարհին կարևորվում է իրատեսական դիրքավորումը և մշակումների կենտրոնացումը: Սոցիալական ծրագրերը, որպես նպատակ սահմանում են հասարակության խոցելի խմբի համար հավելյալ պայմանների ստեղծում: Պայմանների մատչելիությունը ենթադրում է անապահով անձանց սոցիալական վարքի ակտիվացումը, իրավական և տնտեսական նվազագույն գիտելիքների ապահովումը, այդ իմացությունների կիրառումն ու տեղեկացվածության մեծացումը:
9. ՀՀ աշխարհագրական դիրքը, բնական ռեսուրսները, որակյալ և գիտական մեծ ներուժով աշխատանքային ռեսուրսների առկայությունն ակնհայտորեն կարող են հետաքրքրել պոտենցիալ ներդրողներին ինովացիոն ծրագրեր ներդնելու գործում: Ինովացիոն գործընթացը սոցիալական համակարգի անբաժան տարր է, որը ձևավորում է տնտեսության ինքնազարգացման մեխանիզմը: Նման մոտեցումը

